

Հորիզոն

2024 | ԴԵԿՏԵՄԲԵՐ | DECEMBER | DÉCEMBRE

horizon





ADONIS



NOS MAGASINS

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul.Des Sources,
Montréal, QC H8Y 3C5
(514) 685-5050

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,
Laval, QC H7V 1R3
(450) 978-2333

225 Rue Peel,
Montréal, QC H3C 2G6
(514) 905-6499

2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(450) 904-6789

2655 Ave. Des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

7250 boul.Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

1055 St-Laurent boul,
Ottawa, ON K1K 3B1
(613) 778-8883

920 boul.Maloney O,
Gatineau, QC J8T 3R6
(819) 317-1737

Suivez-nous !



www.groupeadonis.ca

20 Ashtonbee. Road,
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

2561 Stanfield Rd,
Mississauga, ON L4Y 1R6
(365) 207-0200

1700 Rue Bouvier
Québec, QC G2K 1N8
(581) 890-9994



Scan here to see our weekly flyer!



Al Nejmah

FINE FOODS INC.

Supermarket | Restaurant
Bakery | Halal Butcher

3085 Hurontario St. | Unit 1-6 |
Mississauga | ON L5A 4E4
Phone: +1(289) 232 1200
WWW.ALNEJMAHFOODS.COM



f ALNEJMAH  ALNEJMAH



«ՀՈՐԻՉՈՆ»ի 24-րդ բացառիկը կը հովանաւորեն՝

Ռաֆֆի եւ Անի Պէքմէզեան
Նորայր եւ Ծովիկ Սերենկիւլեան
Սաֆօ, Արագ, Լեւոն եւ Լենիա Եաղճեան
Բժ. եւ տիկ. Անտրէ եւ Նաթալի Պէշլեան
Սիմոն եւ Սիլվա Փօլատեան
Բժ. Օհան եւ Սեդա Թապաքեան
Շանթ, Ալին, Լեա եւ Լարա Տօնապետեան
Վանա եւ Շալօ Գարայեան
Գրիգոր Տէր Ղազարեան
Արամազդ եւ Գոհար Իսրայելեան եւ ընտանիք
Արտօ եւ Ալինա Գաբրիէլեան
Ազգային մը
Վրէժ եւ Կարին Գասամանեան
ՀՕՄ-ի Գեմարիճի «Մեղրի» մասնաճիւղ
Մոնթրէալի Հայ Կեդրոնի Տարեցներու Միութիւն
Ազգային մը
Չաւեն եւ Վարսենիկ Սարգիսեան
Փոքրիկներ Սեւանա, Գարինա, Արիանա Սարմազեան եւ
Արամ-Սիմոն, Արէն Տուտազլեան
Սիմոն եւ Մարալ Հասըրճեան
Բժ. Սարգիս Երեցեան
Դուին, Շանթ եւ Սեւան Տօնապետեան
Լեւոն եւ Բժ. Անի Հասըրճեան



MAZDA
GABRIEL

ANJOU

PLATEAU

ST-JACQUES

ST-LAURENT

EXPERIENCE POWER,
STYLE AND INNOVATION.

CHOOSE
MAZDA



2025 MAZDA
CX-70 PLUG-IN HYBRID

ALL IN STARTING FROM
\$58,750*

CONTACT KEVORK ASADOURIAN,
GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES. KEVORK@GABRIEL.CA

*CONDITIONS APPLY. PRICE SHOWN INCLUDES DELIVERY CHARGES (CHARGE INCLUDES FREIGHT AND PRE-DELIVERY INSPECTION), DEALER ADMINISTRATION FEE, LEVIES, FEES, AND ALL APPLICABLE CHARGES (EXCLUDING HST AND/OR GST/PST). CONTACT MAZDA GABRIEL FOR MORE INFORMATION.

Crown Pastries

حلويات التاج

Fine Middle Eastern Pastries

BREAKFAST

AVAILABLE AT KENNEDY LOCATION ONLY



SCARBOROUGH

1279 Kennedy Rd,
Scarborough, ON M1P 2L4
(416) 615-7000

MISSISSAUGA

5083 Dixie Rd,
Mississauga, ON L4W 0E6
(905) 602-2018

SCARBOROUGH

2086 Lawrence Ave E,
Scarborough, ON M1R 2Z5
(647) 351-2015

OAKVILLE

407 Iroquois Shore Rd
Oakville, ON L6H 1M3
(905) 339-2021

CROWNPASTRIES.COM

Մեր Խօսքը

«Հորիզոն»-ի 24-րդ բացառիկ կողքը կը ներկայացնէ Արցախի լինելութեան խորհրդանիշ «Մենք ենք մեր սարերը» յուշակոթողը: Խորհրդանիշ, որ փաստն է Արցախի դարաւոր մաքառումներուն:

Բացառիկ առաջնորդող յօդուածը կը վերլուծէ սփիւռքահայութեան այսօրուան գոյավիճակը եւ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու պատմական հոլովոյթը:

Այլ յօդուած մը լուսարձակի տակ կ'առնէ անցնող տարուան ընթացքին Սփիւռքի դերակատարութիւնը քաղաքական բեմին վրայ, յատկապէս սեւեռակէտ դարձնելով Արցախի ի նպաստ սփիւռքահայութեան քարոզչական աշխատանքը:

Հայկական այսպէս կոչուած «ներքին Սփիւռք»-ի մասին յօդուածը շահեկան տեղեկութիւններ կը փոխանցէ Ռուսաստանի Կրասնոտարի շրջանի հայութեան պատմութեան եւ այժմու համայնքային կեանքին մասին:

Յատուկ հարցազրոյցով անդրադարձ կը կատարուի ՀՅԴ Գանատայի կառոյցի գործունէութեան մասին:

Չորս պատերազմ, շրջափակում, հայրենազրկում եւ բռնազաղթի դաժան ճանապարհը անցած արցախցի լրագրողի գիրքին մասին յօդուածը ականատեսի վկայա-

գրութիւնն է Արցախեան պատերազմի օերուն:

Այլ յօդուածով, «Հորիզոն»-ի արցախցի լրագրողը կը ներկայացնէ Արցախի պատմական Հացի գիւղի պատմութիւնը:

Սուրիոյ խորհրդարանի հայ պատգամաւորին հետ հարցազրոյցը լոյս կը սփռէ Սուրիոյ կացութեան եւ սուրիահայութեան վերջին պատերազմին նախորդող վիճակին մասին:

Արցախի մշակութային ժառանգութեան մասնագէտին հետ հարցազրոյցը լոյս կը սփռէ Արցախի հոգեւոր եւ պատմամշակութային ժառանգութեան սպառնացող հաւանական վտանգներուն մասին:

Անգլերէնով հարցազրոյցը կ'անդրադառնայ անցնող տարուան ընթացքին Գանատայի Հայ Դատի յանձնախումբի լայնածաւալ գործունէութեան:

Յրանսերէն բաժինը կ'անդրադառնայ Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Յրանսայի մէջ ծաւալած կրթական առաքելութեան՝ ծաւալուն տեղեկագրական յօդուածով մը Համազգայինի Մարսէյի ճեմարանին մասին:

«Հորիզոն»

Բովանդակութիւն

Ի խնդիր համահայկականութեան սփիւռքեան բնորդին. Երրորդ սերունդի ձգած ժառանգը գնահատելու պահը. էջ 6
Խ. Տէր Ղուկասեան

Հայկական սփիւռքի մերօրեայ մարտահրաւէրը. էջ 16
Գէորգ Ղուկասեան

Կրասնոտարի համայնքային կեանքին մասին. էջ 20
Սերգէյ Սաֆարեան

«Հայ Դատի աշխատանքները անդու կերպով պիտի շարունակենք, որպէսզի Արցախի հարցը մշտական քննարկումի առարկայ ըլլայ Գանատայի քաղաքական ոլորտէն ներս»։ Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի հետ. էջ 24
Սոնա Թիթիգեան

Ձայն բազմաց՝ ձայն Աստուծո՞յ. էջ 28
Վրէժ Արմէն

«Պիտի լուսանկարեմ տուն դարձի ճանապարհը»։ Անի Մանկասարեան. էջ 30
Նայիրի Մկրտիչեան

«Պիտի հաւատանք, որ այս երկիրը կարելի է վերականգնել, որ աւերակներու փոշին կարելի է թօթափել, որ փլատակները կարելի է վերակառուցել եւ քանդուածները վերաշինել»։ Հարցազրոյց Սուրիոյ խորհրդարանի պատգա-

մաւոր Մարիա Գաբրիէլեանի հետ. էջ 36
Սոնա Թիթիգեան

Հացի գիւղը՝ Արցախի մշակութային գանձարանը, որ այժմ բռնադրաւուած է. էջ 40
Տիրուհի Գասպարեան

«Արցախում պատմական հետքի ոչնչացում է տեղի ունենում, իսկ միջազգային հանրութիւնը չի զսպում Ատրպէյճանին»։ Արմինէ Տիգրանեան. էջ 44
Յասմիկ Պալէեան

«Մենք իսկականից բռնեցինք դաղթի ճանապարհը: Մենք մեր սեփական աչքերով տեսանք էդ 1915 թուականը»։ արցախցի մամիկի վկայութիւն. էջ 58
Սոնա Թիթիգեան

«We remain committed to keeping the rights and aspirations of Artsakh's people alive on the global stage».
Interview with Armenian National Committee of Canada (ANCC) executive director Sevag Belian
By Vahakn Karakachian, page 69

Hamaskaine, une cathédrale vivante de l'arménité
et du savoir
Par Mariam Khatlamajyan, page 74

(Կողքի նկարը Անթուան Ակուճեանի)

Միշտ էլք կը հովանաւորէ Melbourne-ի «Դոյանար»-ի Չաչլը

Ի խնդիր համահայկականութեան ասիւոքեան բնորդին

Երրորդ սերունդի ձգած ժառանգը գնահատելու պահը

Խ. Տէր Ղուկասեան

Յարութ Բիւրքեանին, որ Սփիւռքի մասին մտածեց եւ մտածել սորվեցուց

Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպումներու ձեւաչափը 2024-ին ամբողջացուց իր ստեղծման եւ գործնականացման քառորդ դարը: Այս տարեդարձը, սակայն, ուշադրութեան չարժանացաւ որպէս յիշատակման եւ խորհրդածութեան յատուկ առիթ: Կրնայ ըլլալ որ այլապէս իր կարեւորութիւնը ունեցող այս միջոցառման քսանհինգամեակի չյիշատակումը պարզապէս ուշադրութենէ վրիպած մանրամասնութիւն մը համարուի: Սեպտեմբերին Երեւանի մէջ տեղի ունեցած Համաշխարհային Հայկական Երկրորդ Վեհաժողովը կազմակերպած Սփիւռքի յանձնակատարի գրասենեակը շատ հաւանաբար այնքան ալ շահագրգռուած չըլլար «նախկիններ»ու օրօք եւ նախաձեռնութեամբ ծնունդ առած պաշտօնական այս ձեւաչափի արդէն կտրած ճանապարհի արձանագրութեամբ: Աւելի՛ն, միջոցառման անուանափոխումը ինքնին ձեւաչափի չեղարկման եւ ուրիշի մը սկիզբ տալու քաղաքական որոշումի ազդանշան տուած է թերեւս առաջին անգամ, երբ միջոցառումը բանաձեւուեցաւ որպէս «վեհաժողով» եւ ոչ թէ «խորհրդաժողով», իսկ «Հայաստան-Սփիւռք»-ը փոխարինուեցաւ «համաշխարհային հայկական»ով:

Բայց Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպման քառորդ դարու հաշուեկշռի անտեսուածը կրնայ նաեւ հետեւանք ըլլալ անոր ոչ-այնքան յիշատակելի ձեռքբերումներուն: Այսինքն՝ հակառակ քսանհինգ տարիներու իր անցելին, Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպումը սպասուածէն շատ աւելի քիչ իրազորած է՝ հայտնութեան երկու հատուածներու համագործակցութիւնը փոխ-սնուցման ռազմավարական մակարդակի հասցնելու իմաստով: Եւ եթէ Հայաստանի քաղաքական հատուածին համար նման նպատակ հազիւ թէ գոյութիւն ունեցած է, Սփիւռքը իր կարգին այլեւս պէտք է անդրադառնայ, որ միայն հոետորական մակարդակով առկայ այդ ռազմավարական համագործակցութիւնը եղած է ինքնախաբէութիւն, որ Սփիւռքին թոյլ չէ տուած կառուցել իր գոյավիճակէն մեկնած քաղաքական հաւաքական երեւակայութիւն մը իր ուրոյն օրակարգով: Այսինքն՝ անցնող քսանհինգ տարիներուն Սփիւռքը ինքնիր մասին պատկերացում մը ունեցաւ Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպման ձեւաչափի հայելիին ընդմէջէն եւ չունեցաւ ուրոյն պատկերացում ինչպէս Յեղասպանութեան եւ խորհրդայնացումին յաջորդած եօթը տասնամեակներուն: Իսկ իր ընդլիքին, իր օրակարգին մասին մտածեց առաջնահերթաբար հայրենիքի կարիքներուն պայմանաւորումով, յաճախ Երեւանէն եկած թեղաբաններու հետեւումով, բայց նաեւ՝ հայրենիքի կա-

րիքներուն հասնելով՝ անոր զարգացման մէջ դերակատար ըլլալու ինքնահամոզումով:

Սփիւռքեան գոյավիճակի քաղաքական հաւաքական երեւակայութիւնը թերեւս դժուար... երեւակայելի ըլլար անկախութեան նախորդած սփիւռքեան իրականութեան մէջ, ուր կը յամենար հայրենիք վերադառնալու փրկարարական միջոցը: Բայց անցնող քառորդ դարու Հայաստան-Սփիւռք հանդիպումները արդէն շատոնց պէտք է արթնցուցած ըլլային քննական-քննադատական մտածողութիւն մը, որ այդ միջոցին բովանդակազրկման փաստը համոզիչ դարձնէր, եւ ուղի հարթէր Սփիւռքեան գոյավիճակի վերաբանաձեւման թէ՛ տեսական, եւ թէ՛ ալ գործնական իմաստով: Այդ մէկը ո՛չ անկիւնադարձային պատահարէ մը ծնունդ պիտի առնէր, ոչ ալ կ'ենթադրէր գերոյն սկսիլ ամէն ինչ: Սփիւռքեան գոյավիճակը կայացած էր գրական-գեղարուեստական, հասարակագիտական եւ մտածողական մակարդակներով 1965-1985/87 ճակատագրական քսանամեակին, երբ Յեղասպանութեան յաջորդած Երրորդ Սերունդը դերակատար եղաւ ամբողջ հոգեվիճակի մը փոփոխութեան:

Պատմական այդ քսանամեակի ոլորտին մէջ կը տեղադրուի նաեւ Սփիւռքի քաղաքականացումը եւ Հայ Դատի պայքարի ամենավճռական հանգրուանը, որուն գլխաւոր նուաճումը եղաւ «մոռցուած» Յեղասպանութեան հարցը միջազգային օրակարգ բերել: Եւ մինչ Սփիւռքեան գոյավիճակի գրական-գեղարուեստական, հասարակագիտական եւ մտածողական ոլորտներու մէջ առաջընթացը ամբողջ ժառանգ մը ստեղծած էր Սփիւռքեան քաղաքական նախագիծի մը բանաձեւման համար, այս վերջինը, կամայ թէ՛ ակամայ, 1988-ի Արցախեան եւ Հայաստանեան իրադարձութիւններու լոյսին տակ պայմանաւորուեցաւ հայրենիքի հետ ռազմավարական գործընկերութեան հասնելու ինքնահամոզումով: Այս վերջինը, այդ բախտորոշ թուականին բայց մանաւանդ Հայաստանի անկախութեան յաջորդած տասնամեակի խարխափումներէն, խզումներէն եւ յուսախաբուցութիւններէն յետոյ, իր պաշտօնական ձեւաչափը գտաւ Հայաստան-Սփիւռք հանդիպումներով, որոնց ընթացք տուաւ 1999-ի Հոկտեմբերին կազմակերպուած առաջին Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովը:

Ոչ ոք, անշուշտ, կրնայ հարցականի տակ դնել 1988 անկիւնադարձային տարուան ընթացքին Սփիւռքի քաղաքական թէ՛ հասարակական կազմակերպութիւններուն հայրենիք վերադառնալու որոշումին անկեղծութիւնը որպէս պահու հրամայականի համոզում: Արցախեան շար-

Այս էջը կը հովանաւորեն Գաբրիէլ Կոստանտինի



ASSEMBLÉE
NATIONALE
DU QUÉBEC



**EN CETTE PÉRIODE DE FESTIVITÉS,
VEUILLEZ RECEVOIR MES MEILLEURS VŒUX
DE SANTÉ, DE BONHEUR ET DE SUCCÈS.**

*Je vous souhaite de joyeuses Fêtes
et une très heureuse année 2025 !*

CÉLINE HAYTAYAN

DÉPUTÉE DE LAVAL-DES-RAPIDES

 450 668-6077

 Celine.Haytayan.LDR@assnat.qc.ca

ծուծն ու երկրաշարժը չէին կրնար անտարբեր ձգել Սփիւռքը, ի մասնաւորի երբ միացման եւ օժանդակութեան յստակ դիմում-պատգամներ կը յղուէին հայրենիքէն: Ոչ ալ, այդ օրուան ակնոցով դիտուած, հայրենիք վերագառնալու որոշումին ծնունդ տուած սպասումները կրնային վերագրուել չափազանցուած միամտութեան մը: Կը մնայ, որ Արցախի ազատագրութեան եւ Հայաստանի անկախութեան գործընթացին մէջ ներգրաւուած իրարու մրցակից քաղաքական հատուածները, իրենց ղեկավարութեանց մակարդակով, սփիւռքեան ներգրաւումը կ'ընկալէին քաղաքական մրցակցութեան տեսանկիւնէն՝ կա'մ որպէս սպառնալիք իշխանութեան, կա'մ ալ որպէս իշխանութեան հասնելու գործօն: Սփիւռքին համար այս մէկը կրնար դժուար ընկալելի, կամ մինչեւ իսկ ընդվզեցուցիչ ըլլալ այն ժամանակ, բայց պատճառ չկայ, որ այսօր այդ մէկը տակաւին չհասկցուի, կամ մերժուի անոր շատ աւելի կառուցային բնոյթը՝ Սփիւռք-հայրենիք տարբերումի իմաստով: Սփիւռք-Հայաստան ռազմավարական համագործակցութեան հայեցակարգի չիրականացման պատճառը անցնող քսանհինգ տարիներուն օրուան իշխանութիւններու որոշումներու կամ վերաբերումի պատճառով չէ միայն:

Այս մէկը չի' նշանակեր, որ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու տարբեր հանգրուաններուն օրուան իշխանութիւններու վերաբերումը պէտք չէ իրարմէ տարբերել կամ չարձանագրել յառաջխաղացներն ու բացթողումները: Փաստօրէն, անարդար պիտի ըլլայ Սփիւռքեան կառույցները նախ անտեսած եւ ապա անոնց կազմաքանդումին ուղղութեամբ ակնբախ աշխատանք տանող Սփիւռքի յանձնակատարի վերաբերումները նախագահ Քոչարեանի օրով Արտաքին Գործոց նախարար սփիւռքահայ Վարդան Օսկանեանի թէ նախագահ Սերժ Սարգսեանի ժամանակ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի վերաբերումին հետ նոյնացնել: Աւելի'ն, Քոչարեանն ու իր ժամանակ չէ վարչապետ Վազգէն Սարգսեանը Հայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովին հրապարակային յանձնառութիւն վերցուցին Սփիւռքի հետ համագործակցութեան ծիրը ընդլայնելու՝ Յեղասպանութեան միջազգային ճանաչման հարցէն մինչեւ քաղաքացիութեան օրէնքի ընդունում եւ ներդրումներու երաշխաւորում: Իսկ Հրանուշ Յակոբեանը չվարանցեալ գոնէ քննարկումի կարգով սեղանի վրայ դնելու պետական համակարգին մէջ սփիւռքեան ներկայացուցչութեան ստեղծման հարցը, եւ իրը ընելու Հայաստան հաստատուած սուրիահայերու ընկերա-տնտեսական համարկումը դերացնելու յանձնառութիւնը, հակառակ անոր որ Գործադիր Իշխանութեան, եւ թերեւս Հանրապետական Կուսակցութեան տարբեր հատուածներուն համար, այդ հարցերը կա'մ անընդունելի էին, կա'մ կը խանգարէին որոշ հասեր:

Հոս քննարկումի չի դրուիր օրինակի կարգով բերուած վերոյիշեալ հարցերու հանգուցալուծումը: Անոնցմէ իւրաքանչիւրը, օրինակի համար՝ քաղաքացիութիւնը, առանձին թեմայ կրնայ ըլլալ սփիւռքեան օրակարգի մը վրայ, եթէ օր մը նման օրակարգ կեանքի կոչուի եւ մտածումի եւ հրապարակային քննարկման ամէն ձեւի թափուները քանդուին: Բայց ե'ւ վերաբերումի պատշաճութեան, ե'ւ խորքային մեծ տարբերութիւն կայ մէկ կողմէ անցնող քսանհինգ տարիներու Հայաստան-Սփիւռք հանդիպման բեմէն հնչած պաշտօնական բոլոր խօսքերուն, ե'ւ միւս

կողմէ 18 Սեպտեմբեր 2024-ին Համաշխարհային Հայկական Երկրորդ Վեհաժողովին վարչապետ Նիկոլ Փաշինեանի տուած «հայրենասիրութեան» դասընթացքին, Յեղասպանութեան ոգեկոչման սեւացման եւ Սփիւռքին ուղղուած անարգական խօսքերուն միջեւ: Վարչապետը Սփիւռքի մէջ ամբողջ սերունդներ դաստիարակած հայրենասիրութիւնը որակեց «կայսերական մոտեցում», ըսաւ որ Յեղասպանութեան յիշատակումը «արտօնուած» է Խորհրդային Միութեան կողմէ որպէս գործիք Թուրքիոյ եւ ՆԱԹՕ-ի դէմ, իսկ Հայաստանին մարդասիրական օժանդակութիւն հասցնող սփիւռքահայութիւնը ամբաստանեց Հայաստանը որպէս «կարեկցանքի առարկայ» դիտելու, «գործածուած հագուստներ, ինքնաշարժներ, կիսամաշ անիւններ, կիսամաշ կօշիկ, եւ ժամկէտի մէկ շաբաթեայ աւարտով դեղեր» ուղարկելու մէջ: Փաշինեանի անարգանքը Սփիւռքի հասցէին արդէն շուրջ քամեց Լեւոն Տէր Պետրոսեանի «նարինջ ուտողներ» անարգանքին վրայ, եւ իր ձեռով, բովանդակութեամբ եւ բաց թէ թաքուն նպատակով Սփիւռքը ստորացնելու ամէն չափէ անդին անցաւ:

Բայց, դարձեալ, հոս հարցը Հայաստանի պետութեան ի դէմ օրուան իշխանութիւններու վերաբերումին չի' վերաբերիր: Անոնց քաղաքական վերլուծումը կրնայ միտք մը տալ, թէ ե'րբ եւ ինչո'ւ համար Սփիւռքը արժանացած է առաւել կամ նուազ ուշադրութեան, կամ ի'նչ նպատակով եղած է առաւել կամ նուազ թիրախ ամբաստանութիւններու եւ անարգանքի: Բայց թոյլ պիտի չտայ ընկալել Սփիւռք-Հայաստան խորքային Տարբերումը՝ համակարգային, շահագրգռութեան եւ մշակութային ու լեզուամտածողական իմաստով: Տարբերումը խզում չի' նշանակեր, ոչ ալ կը մերժէ համագործակցութիւնը իր բարձրագոյն մակարդակով: Դէմ չէ ոչ փոխ-սնուցման իտէալին, ոչ իսկ ինչ որ «միասնականութեան» կամ «միացում»ի նպատակին կամ նման առողջ ութոփիայի մը: Բայց այս բոլորին հետորաբանութիւնը եւ անոնց մարտավարական գործածումը, աւելի կամայ քան ակամայ շահարկում/մանիպուլացիան, հայրենի քաղաքական հատուածներուն կողմէ, Սփիւռքը կը կաշկանդէ, կամ ինքնակաշկանդումի կը մղէ՝ իր գոյավիճակի գիտակցութեան մեկնակէտէն իր անկախութեան անհրաժեշտութիւնը հասկնալու եւ քաղաքական ուրոյն օրակարգ մը ունենալու: Այնպէս ինչպէս կը թելադրէ Երրորդ Սերունդի ձգած ժառանգը, որ դեռեւս չէ ուսումնասիրուած իր ամբողջութեան մէջ: Ոչ ալ ստեղծուած է սփիւռքեան գոյավիճակի համապատասխան քաղաքական հաւաքական երեւակայութիւնն ու անոր նախագիծը: Սփիւռքի անկախութեան անհրաժեշտութիւնը հասկնալու համար, թերեւս նախ անդրադառնանք, թէ ի'նչ եղած է Սփիւռքի վերաբերումը Հայաստան-Սփիւռք հանդիպման ձեւաչափին անցնող քսանհինգ տարիներուն, ե'րբ եւ ինչպէ'ս լսուած են քննադական ձայներ եւ ի'նչ հետեւանք ունեցած են:

Գաղտնիք չէ, որ Հայաստան-Սփիւռք հանդիպման ձեւաչափը ներկայ իշխանութիւններուն օրօք քաղաքական որոշումով բացառած է սփիւռքեան կառույցներու ներկայացուցչական մասնակցութիւնը պետական համակարգին մէջ եւ գրաւը դրած է անհատներու վրայ: Սփիւռքեան համայնքները, Սփիւռքը ընդհանրապէս, որպէս անհատներու գումար ընկալելու հակումը քաղաքական-գաղափարախօսական մօտեցում մըն է, որ, միաժամանակ, իշխանութիւն-

Սիյու Էջը կը հովանաւորեն Ս. Եւ Ս. Մուրադ, Նորա Եւ Զապէլ ԹԷԷ



Wealth Management
Dominion Securities

Nahabedian Wealth Management Group of RBC Dominion Securities

Integrity, Trust, Respect, Client Focus and Commitment to Your Success!

Paul B. Nahabedian, CIM
Senior Portfolio Manager

Levon Nahabedian, CIM
Associate Advisor

www.paulnahabedian.com
514-878-5111

ներուն թոյլ կու տայ ընտրելու այն անհատները, որոնց կրնայ վստահել տուեալ համայնքի մէջ իր բաժանման քաղաքականութեան յառաջապահի դերը: Նման անհատներ միշտ ալ պիտի գտնուին: Յաճախ, անոնք համայնքային կազմակերպական կառոյցներու լուսանցքին անձիք են: Բայց կրնան ըլլալ նաեւ այդ կառոյցներու մէջ սեփական օրակարգ եւ փառասիրութիւն ունեցողներ: Բայց այդ մէկը խօսուն է նախ եւ առաջ համայնքներու կազմակերպութեան առնուազն թերի մակարդակին եւ սփիւռքեան օրակարգի բացակայութեան փաստին իմաստով: Սփիւռքը պարզապէս չի՝ գիտեր, թէ ի՛նչ կ'ուզէ հայրենիքէն, ինչ-պէ՛ս պիտի ուզէ եւ, մինչեւ իսկ, եթէ ինքզինքին կրնայ թոյլատրել հայրենիքէն որեւէ պահանջի իրաւունք ունենալ: Բացի այն սփիւռքահայերէն, միշտ անհատներ, որոնց համար Հայաստանի օրուան որեւէ իշխանութեան կողքին ու անոր ծառայութեան պատրաստ ըլլալը միջոց է իր սեփական շահերուն համար՝ գործարարական-ձեռնարկատիրական իմաստով թէ, ըսենք, Պատուոյ Հիւպատոսի տիտղոսի համար, երբեմն երկուքը միասին: Սոցիալական ցանցերու վրայ այս վերջին «վեհաժողովին» մասնակցած սփիւռքահայերու հատ ու կտոր յայտարարութիւններէն կարելի է շատ յստակ գաղափար մը կազմել, թէ Հայաստան-Սփիւռք հանդիպման ձեւաչափի ստեղծումէն քսանհինգ տարի անց, Սփիւռքը տակաւին չի՝ գիտեր, թէ ի՛նչ նպատակով կը մասնակցի նման հանդիպումներու, որոնք եթէ իշխանութիւններուն համար պետական ինչ որ ծրագրի մաս կը կազմեն, Սփիւռքին համար կը վերածուին ինքնանպատակ արարքի, որ հրաւիրուածներու ինքնասիրութիւնը կը շոյէ: Այս պայմաններուն մէջ թերեւս ինչ որ բաւարարութիւն կու տայ, երբ սփիւռքահայ մը կը խոստովանի, որ հրաւէր ստացած է մասնակցելու, բայց մերժած, որովհետեւ Սփիւռքին համար միջոցառման որեւէ նպատակ կամ իմաստ չի՝ տեսներ: Անշուշտ միշտ կարելի է հարց տալ, թէ ճի՛շդ է չմասնակցել կամ բացայայտօրէն պոյքոթել, թէ՞, ընդհակառակը, պէտք է ներկայ ըլլալ եւ քննադատական ելոյթներով բուռն բանավէճերու առիթ ստեղծել:

Նման քննադատական ելոյթներու տրամադրուածութիւն չէ եղած ընդհանրապէս նաեւ Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովներու ժամանակ: Այդուհանդերձ, տարբեր առիթներու հնչած են քննադատական ձայներ եւ ունեցած են իրենց անդրադարձը, թէկուզ եւ առանց հետեւանքի: Այդ ձայներու շարքին պիտի նշել յատկապէս Վահէ Օշականը, որ Հայաստան-Սփիւռք առաջին եւ հիմնարար խորհրդաժողովին յանդուգն կեցուածքով հարցականի տակ կը դնէր «մէկ մշակոյթ»ի հասկացողութիւնը, որով եւ կը յուշէր սփիւռքեան ուրոյն մշակոյթի առկայութիւնը, մերժումը՝ զայն լուծարելու տիրապետող հայ մշակոյթին մէջ, որ իր զարգացումը ապրած էր քսաներորդ դարուն, հիմնականին մէջ խորհրդային կարգերու տակ, եւ կոչը՝ տէր կանգնելու Սփիւռքի մշակոյթին որպէս ժառանգ, շարունակութիւն եւ զարգացում արեւմտահայ մշակոյթին: Վահէ Օշական անդիջող յայտարարութիւն ըրաւ նաեւ դասական ուղղադրութեան վերադարձին, միտք մը որ բուռն ծափահարութիւններու արժանացաւ: Խաչիկ Թէօթեանը, որ նոյն այդ խորհրդաժողովին իր պատրաստած տեղեկագրով հեռու կը մնար աժան հայրենասիրական հռետորութեամբ ողջունելէ օրուան իշխանութիւններու կողմէ առաջարկած քաղաքացիութեան օրէնքի փոփոխութիւնը, եւ, առանց ընդ-

դիմանալու գաղափարին, կը զգուշացնէր անոր հապճեպ, ոչ լաւ մտածուած կերպով ընդունման մասին: Հետագային, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառն էր, որ Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովի բեմէն լուսարձակի տակ առաւ Հայաստանի մէջ սոցիալական անարդարութիւնը եւ զգուշացուց՝ «Հայաստանը կը պարպուի»: Օրինակի կարգով բերուած այս սակաւաթիւ քննադատական ձայները արձագանգի արժանացան: Խօսքը միայն ծափահարութիւններուն չի վերաբերիր. Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովի նախաձեռնողները իրենք, անշուշտ ոչ հրապարակային կերպով, իրենց «սրտնեղութիւնը» արտայայտեցին տարբեր առիթներով:

Բայց քննադատական այդ ձայները մնացին «բարբարոյ յանապատի», չունեցան հետեւանք: Եւ, անգամ մը եւս, անոր պատասխանատուութիւնը Հայաստանի քաղաքական ղեկավարութեան, օրուան իշխանութեան թէ ընդդիմութեան, պէտք չէ վերագրել, որովհետեւ Սփիւռքի իրենց ընկալման կաղապարուած կառոյցին մէջ չկայ Սփիւռքէն եկած որեւէ քննադատական ձայն, նկատի ունենալու որեւէ հակում կամ շահ: Աւելին, պէտք է շատ զգուշութեամբ մօտենալ մինչեւ իսկ համահայկականութեան մասին որեւէ խօսոյթի, որ կու գայ Հայաստանի պետական մտածողութեան դիրքերէն, որովհետեւ անցնող քառորդ դարու փորձը ցոյց տուաւ, որ այդ մէկը հազիւ թէ տարբերի իշխանութեան վրայ գտնուող իւրաքանչիւր քաղաքական ուժի յատուկ հայաստանակեդրոնութեան ինչ որ տարբերակէ, ուր Սփիւռքի ուրոյնութիւնը գործնականօրէն նկատի ունենալու տրամադրուածութիւն չէ եղած: Համահայկականութիւնը, անշուշտ, այսօրուան իշխանութիւններուն խօսոյթին մէջ ոչ իսկ առկայ է: Օրուան իշխանութիւններու աշխարհահայեացքը «իրական» Հայաստանի մաքէթ մըն է, եւ Սփիւռքի հանդէպ իրենց քաղաքականութեան առանցքը այդ մաքէթը Սփիւռքին ընդունելի դարձնելն է, պետականութեան հետ նոյնացած հայրենիքի անայլընտրանք գաղափարն ու անոր ենթադրած պետականահայրենասիրութիւնը պարտադրելն է: Սփիւռքը ինքն է, որ պիտի հասկնայ Տարբերումի անհրաժեշտութիւնը, եթէ երբեք գիտակից է իր ինքնութեան ուրոյնութեան, գոյավիճակին եւ իրենցութեան:

Հայաստան-Սփիւռք համագործակցութեան քառորդ դարու փորձառութիւնը ցոյց կու տայ, որ այդ ձեւաչափը ինքզինք սպառած է որպէս համահայկականութեան բնորդ: Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովներուն փոխարինած Համաշխարհային Հայկական Վեհաժողով, համագործակցութեան նոյն ձեւաչափի տեղափոխումն է «իրական» Հայաստանի մաքէթի սահմանագատած եւ սահմանագծած «հայրենասիրութեան» տրամաբանութեան մէջ, որ Քառասունչորսօրեայ Պատերազմի պարտութեան պատասխանատու իշխանութիւնները կը փորձեն պարտադրել նաեւ Սփիւռքին: Եւ այնպէս ինչպէս նպատակադրած են իրենց քաղաքականութեան արդիւնքով վասալացող Հայաստանի մէջ հայու իրենց պատկերացուցած տեսակ ստեղծել, նոյն նպատակին ալ հետամուտ են Սփիւռքի մէջ՝ անտեսելով անոր կառոյցները, ներկայացուցչական հանգամանք տալով իրենց հետեւող անհատներու եւ վարձկաններու, եւ չեղարկելով Սփիւռքեան ինքնութեան եւ գոյավիճակի հաւաքական էթոս մը, որ Յեղասպանութենէն յետոյ իրերայաջորդ երեք սերունդներու ժամանակ երաշխաւորած է

Միշտ էջը կը հովանաւորեն Ա. Եւ Ս. Միրո եւ Միշտ Մարգարեան



ARZTM

fine foods
the essence of mediterranean gourmet
since 1989

Merry Christmas Happy New Year

Catered Food For All Your Holidays & Events.

TWO STORES TO SERVE YOU

720 Bristol Road West,
Mississauga, ON L5R 4A5
905.502.9292

1909 Lawrence Ave. East,
Scarborough, ON M1R 2Y6
416.755.5084



Scan Here
For Catering Book



WWW.ARZFINEFOODS.COM

@arzfinefoods



աշխարհացրիւ հայութեան լինելութիւնը:

Սփիւռքեան լինելութեան հաւաքական էթոսը համահայկական էր իր աշխարհընկալումով, որովհետեւ Սփիւռքը ինքզինք ճանչցած էր որպէս համաշխարհային ցանց, եւ կը գործէր որպէս այդպիսին «համաշխարհայնացում» հասկացողութեանն շատ առաջ: Այդ Սփիւռքին հայրենասիրութեան տեսլականը ամբողջական Հայաստանն էր, անկախ խորհրդային տարիներուն վարչակարգի ընդունման թէ մերժումի առաջացուցած ատենին մինչեւ իսկ շատ խոր բաժանման գիծին: Այդ տրամաբանութեամբ ալ Յեղապանութեան միջազգային ճանաչումն ու արդարահատոյցը անբաժան էին թէկուզ եւ ամէնէն աւելի խորհրդայնամէտ հատուածի հայու ինքնութեան եւ հայրենասիրութեան հասկացողութեանն: Հասկնալի է, որ այդ բոլորը կրնային յատուկ ըլլալ ոչ-պետական հաւաքականութեան մը: Սակայն այդ հաւաքական էթոսը փաստը տուաւ վերապրումի, հայապահպանումի եւ քաղաքականացման, եւ ոչինչ կ'արգելէր, որ այդ ամբողջ փորձառութիւնը անկախութենէն յետոյ յանգէր ռազմավարական համագործակցութեան մը, որուն Սփիւռքը համոզուած էր որպէս «բնական» գործընթաց, երբ պայմանները ստեղծուէին, բայց որ տեղի չունեցաւ Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպումներու ձեւաչափի «խորհրդաժողովային» թէ «վեհաժողովային» տարբերակներով: Ընդհակառակը, այդ ձեւաչափին մէջ տեղադրուած համահայկականութիւնը յանգեցաւ համասփիւռքեան ցանցի հորիզոնական կապերու թուլացման, ի հետեւանք իւրաքանչիւր համայնքի համար Հայաստանի հետ իր յարաբերութիւններու առաջնահերթացման:

Սփիւռքեան համայնքներու ինքնամփոփումը ջլատեց համահայկականութեան հաւաքական էթոսը, որուն սահմանման մենաշնորհը յանձնուեցաւ Հայաստանի պետութեան, այսինքն՝ օրուան իշխանութիւններու եւ իրենց յատուկ «պետական մտածողութեան» պայմանական շահերուն: Սփիւռքի կողմէ նման թէկուզ եւ անկեղծ այնուամենայնիւ միամիտ ու անպատասխանատու հրաժարումը համահայկականութիւնը սահմանող քաղաքական մտածողութենէն եւ աշխատանքին եղաւ իր գոյավիճակին եւ ինքնութեան լինելութեան համար մեծ սխալ: Անոր ազդանշանները առաւել կամ նուազ ուժեղութեամբ տրուեցան անկախութենէն ի վեր իշխանութեան եկած իւրաքանչիւր քաղաքական ուժի եւ ղեկավարութեան կողմէ, որքան ալ որ անոնցմէ ոչ մէկը այնքան կործանարար չէ եղած համահայկականութեան հաւաքական էթոսին համար, որքան ներկայ պարտուած իշխանութիւնները: Հետեւաբար, որքան ալ որ այս իշխանութիւններու հեռացումը համահայկականութեան աղաւաղումին եթէ ոչ պարզ եւ մէկին՝ չեղարկումին կարեւոր եւ մինչեւ իսկ անհրաժեշտ քայլ ըլլայ, այնուամենայնիւ Սփիւռքի համար Հայաստանի մէջ իշխանութեան վրայ գտնուող ուժի քաղաքականութիւնը չէ, որ պիտի պայմանաւորէ իր լինելութեան հաւաքական էթոսը: Սփիւռքը համահայկականութեան իր բնորոշ պիտի վերստեղծէ կազմակերպական ցանցի արդիականացման եւ զօրաշարժի վերաշխուժացման քաղաքական ուրոյն օրակարգի մը բանաձեւումով:

Նման նախանձախնդրութիւն չ'ենթադրեր ինչ որ «վերադարձ»ի էպոս, որ ենթադրել կու տայ, թէ կային կատարեալ ժամանակներ եւ իտէլական աշխարհ մը, զոր կարելի է վերակենդանացնել: Այս շատ աւելի կրօնադաւա-

նական աշխարհընկալման մօտեցումը, որ այնքան յատուկ եղած է Լուսաւորութեան յաջորդած երկու դարերու քաղաքական մտածողութեանց եւ գաղափարախօսութիւններու, յաճախ բախած է շատ աւելի բարդ կեանքի իրականութեան մը, երբ անսխալականութեան, կամ «պատմական առաքելութեան» համոզումով գործի դրուած է քաղաքական ծրագիր մը: Պիտի ընդունիլ նաեւ, որ նախա-Դէպի Երկիր Սփիւռքի քաղաքական մտածողութեան մէջ այս չափանիշին համազօր էին հայրենասիրութեան կարգ մը համոզումները, ինչպէս՝ հայրենիքի իտէլականացումը, պետականութեան փրկարարական առաքելութիւնը եւ հայրենադարձութեան եզրայանգումը սփիւռքեան գոյութեան, քանի որ Սփիւռքը դատապարտուած էր ձուլման, ուժացումի, ճերմակ ջարդի եւ Յայտնութեանական ոճի հանրային ճարերու եւ հրապարակագրութեան մէջ անխուսափելիորէն կրկնուող նմանօրինակ այլ յղացքներու եւ պատկերաւորումներու ենթադրած աւարտին:

Բայց 20-րդ դարու Սփիւռքի «էսքաթոլոժիք» այդ պատումը, որ Սփիւռքի պատմութեան աւարտի փրկութիւնը կը պայմանաւորէր բացառաբար կ'մ հայրենիք վերադարձով, կ'մ ալ ձուլումով եւ առաջացուցած էր վերապրումէն հայապահպանում տանող համայնքային կառույցներու ստեղծման եւ զարգացման նպատակամղուած տրամաբանութիւնը, քանդուեցաւ Երրորդ Սերունդին կողմէ՝ 1965-85/87 անկիւնադարձային քսանամեակին: Այդ «նորի ծծնդոցի ի ինդիր ստեղծագործ քանդում»ը տեղի ունեցաւ զրական-գեղարուեստական, հասարակագիտական եւ մտածողական ոլորտներուն մէջ, նախաձեռնութեամբ այդ տարիներուն դերակատար դարձած Երրորդ Սերունդի ներկայացուցիչներուն: Անոնք էին, որ արձակին ու բանաստեղծութեան առաջին հերթին, բայց նաեւ կերպարուեստին, թատրոնին եւ կատարողական միւս արուեստներուն տուին նոր ուղղութիւններ եւ բացուեցան իրենց շրջապատին: Անոնք էին, որոնք համալսարանական ծիրէն ներս Սփիւռքի ճանաչողութեան հաղորդեցին հասարակագիտական առարկայականութիւն եւ փորձեցին հայութեան սփիւռքեան փորձառութիւնը հասկնալ բախտորոշ այլ ժողովուրդներու փորձառութեան համեմատական ուսումնասիրութեան ընդմէջէն: Անոնք էին նաեւ, որ մտածողութեան ոլորտին մէջ Սփիւռքեան գոյավիճակը դուրս բերին ճակատագրապաշտական յանձնողականութեան լծացումէն եւ անձկութեան ապրումին տուին նոր հորիզոններ բացող միտք ու բանամթերք:

Սփիւռքի վերացափոխութեան ու կայացման այս գործընթացը տեղի ունեցաւ միջազգային յարաբերութիւններու մէջ Երրորդ Աշխարհի երկիրներու ինքնահաստատման եւ ժողովուրդներու ազգային թէ ընկերային ազատագրական պայքարներու տարածման պատմական ժամանակաշրջանի մը: Ինչ որ նաեւ կը բացատրէ այդ գործընթացի չորրորդ բաղկացուցիչ ոլորտը՝ քաղաքականացումը, որուն գործնական երեսը եղաւ Հայ Դատի պահանջատիրութիւնը ի դէմս Յեղապանութեան միջազգային ճանաչման համար մղուած պայքարին: Յետագարձ ակնարկով կարելի է ըսել, որ այդ պայքարի առաջին եւ ամենաէթոսը հանգրուանը, «մոռուած» ոճիրը միջազգային օրակարգի բերելը, իր յաջող լրումին հասաւ նաեւ այդ քսանամեակի աւարտին: Եւ թերեւս այդ յաջողութեան ամենաակնբախ ձեռքբերումները՝ Պենճամին Ուրթեքէրի

Սոյս էջը կը հովանաւորեն Ա. Ե. Ա. Գրասյր Եւ Խուրի Զաւարթան



KAREN



BARRY



GARO



ALEX



ARLENE

K A Z A N D J I A N

ACHAT|VENTE|FINANCE



RE/MAX 3000

IMMOBILIER

+

HYPOTHÈQUE

514 333 3000

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL

RANKED AMONGST THE HIGHEST PREFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE

*Karen Kazandjian, DA, courtier immobilier et hypothécaire agréé
*Barry Kazandjian, BA, courtier immobilier
*Garo Kazandjian, courtier immobilier
*Alex Kazandjian, courtier immobilier
*Arlene Der Ghougassian, courtier hypothécaire

Տեղեկագիրը (1985) եւ Եւրոպական Խորհրդարանի կողմէ Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի որդեգրումը (1987), հանդիսացան այն իրադարձութիւնները, որոնք այդ քսանամեակը բերին իր լրումին: Բայց կարելի է նաեւ մտածել, որ այս Եւրոպական Խորհրդարանի մէջ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման քաղաքական ձեռքբերումէն հազիւ ամիսներ անց ծնունդ առնելու սկսած Ղարաբաղեան Շարժումն էր այն անկիւնադարձային իրողութիւնը, որ 1988-ին նոր հանգրուան մը բերաւ Սփիւռքի համար, եւ նախորդ քսանամեակը իր լրումին հասցուց: Մէկ բան յստակ է. Ղարաբաղեան Շարժումով եւ աղիտալի երկրաշարժով է, որ սփիւռքեան կազմակերպութիւնները բոլորը անխտիր իրենց աշխատանքային դաշտը տեղափոխեցին հայրենիք եւ հոն կեդրոնացան: Ինչպէս վերը նշուեցաւ, այդ մէկը շատ հասկնալի եւ մինչեւ իսկ անխուսափելի էր: Խնդիրն այն է, որ իրենց աշխատանքային դաշտը բացառաբար Հայաստանի վրայ կեդրոնացնելու սփիւռքեան կազմակերպութիւններու որոշումը, ի բացակայութիւն ինքնաքննադատական ամէն բանավէճի, տարաւ Սփիւռքի ճակատագիրը դարձեալ պայմանաւորելու հայրենիքի հետ յարաբերութիւններով եւ Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպման ձեւաչափին մէջ, բացառելով սփիւռքեան նախագիծի մը /հետեւումով ուրոյն քաղաքական մտածողութիւն եւ օրակարգ:

Երրորդ Սերունդը Սփիւռքը վերացափոխեց լաւապէս ուսումնասիրելով նախորդ սերունդներուն՝ Ցեղասպանութեան վերապրողներն ու իրենց յաջորդածները ձգած ժառանգը՝ Սփիւռքը ընկալելու, նպատակամղելու եւ կազմակերպելու իմաստով: Այդ ժառանգի քննական/քննադատական վերլուծումը անոնց թոյլ տուաւ զնահատելու անցած ճանապարհը, մատնանշելու ժամանակներու փոփոխութիւնը եւ նոր հորիզոններ բանալու Սփիւռքեան գործընթացին մէջ: Սփիւռքեան գոյավիճակի ինքնուրոյնութիւնը այդ նոր հորիզոններու սկիզբի գլխաւոր ամրագրումն է: Սփիւռքի մէջ քաղաքական մտածողութիւնն ու գործն ալ անցնող տասնամեակներուն քննական/քննադատական վերլուծումի ուղիով ինքզինք վերաթարմացուց: Երեք կուսակցութիւններու որոշումը վեր ելլելու յետ-խորհրդայնացման եւ Պաղ Պատերազմի պառակտիչ երկբեւեռումէն եւ Հայ Դատի պահանջատիրութեան շուրջ միակամուրթի Սփիւռքի քաղաքականացման ամէնէն յուսադրիչ երեւոյթներն էին: Բայց մինչ Սփիւռքեան գոյավիճակի ստեղծագործական, ճանաչողական եւ մինչեւ իսկ մտածողական նախանձախնդրութիւնը պահուեցաւ եւ այդ առաքելութիւնը ստանձնածները շարունակեցին իրենց գործը, Սփիւռքեան կառոյցներու ղեկավարութիւնները իրենց քաղաքական-հասարակական գործի շարունակականութիւնը տեղադրեցին Հայաստան-Սփիւռք պաշտօնական հանդիպման ձեւաչափին մէջ, եւ չհասկացան կամ չուզեցին ընթացք տալ Սփիւռքեան քաղաքական նախագիծի եւ ուրոյն օրակարգի: Սփիւռքի ղեկավարութեանց ձախողութիւնը յստակօրէն կը տեսնուի Հայկական Սփիւռքի Հարցախոյզի ընդմէջէն, ուր տեսլականի բացակայութիւնը եւ քաղաքական կազմակերպութիւններու հազիւ տասը տոկոս վարկանիշը այդ մասին շատ բան կ'ըսէ:

Անցնող տարուան ընթացքին բացայայտ դարձաւ, որ եթէ Սփիւռքը շարունակէ իր գոյավիճակը դիտել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ծուռ հայելիին

մէջ, պիտի ստիպուի կա՛մ ընդունիլ «իրական» Հայաստանի, հայկական ինքնութեան եւ հայրենասիրութեան այն տարբերակը, զոր պարտուած իշխանութիւնները կը պարտադրեն, կա՛մ ալ համահայկականութեան իր բնորդը որպէս քաղաքական մտածողութիւն եւ օրակարգ ստեղծել: Հասկնալի է, որ սփիւռքեան որոշ հատուածներ, ի մասնաւորի անհատներ ու անձնաւորութիւններ, ինչ-ինչ շահերէ թելադրուած ընդունին «իրական» Հայաստանի ազգային ինքնութեանական սահմանազատումը անցեալին հետ եւ սահմանադուր վարչապետին գրպանին մէջ պտտող մաքէթի չափերով եւ համակերպին: Ազգային աղաւաղումի նման ծրագրին հակադրուած սփիւռքեան հատուածներուն համար սակայն Հայաստանի մէջ ողջունելի իշխանափոխութիւնը պէտք է յանգեցնէ անգամ մը եւս վերադառնալու Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ձեւաչափով ինքնաճանաչումի անուրջի վերադարձին: Սփիւռքեան գոյավիճակ մը կայ, որ մեկնակէտ է համահայկականութեան բնորդի մը քաղաքական նախագիծի եւ օրակարգի, որով եւ միայն պիտի նստիլ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու ձեւաչափի մը առաջացման բանակցութիւններու սեղանին: Սփիւռքեան գոյավիճակի ինքնուրոյնութեան ընկալման համար ունինք Երրորդ Սերունդին ձգած ամբողջ ժառանգը, որ դեռեւս հարկ եղածին չափ չէ զնահատուած յատկապէս քաղաքական մտածողութեան եւ գործի ոլորտին մէջ:

Այդ ժառանգը ստեղծած մեծ ռահվիրաներէն Յարութիւն Քիւրքճեանը հեռացաւ մեզմէ 2024-ին: Իրեն կը պատկանին հետեւեալ տողերը. «Տակաւին որքա՞ն ատեն - կը հարցուի յաճախ անձկութեամբ: Յանուն ինչի՞ր - կը լսուի երբեմն ալ սկեպտիկ, «իրապաշտ» շեշտով: Պատասխանը, կը հաւատանք, ճակատագիր մը չէ, նախ իրմէ՛ Սփիւռքէն պիտի գայ, Սփիւռքի կեանքէն, կեանքի վճիռէ՛ն: Եւ անիկա կրնա՛յ ըլլալ դրական, եթէ որդեգրուին աւելի ուժական, աւելի բաց սկզբունքներ՝ այդ կեանքի ղեկավարման մակարդակին: Նաեւ՝ եթէ կապն ու շփումը, գործակցութիւնը հայրենի նոր իրականութեան հետ դրուին ճիշդ հիմունքներու վրայ: Եթէ արեւմտահայ մշակոյթին եւ գրականութեան գոյատեւումն ու նորոգ գարգացումը ըստ էութեան ընդունուին իբր հայեցի արժէքներու գանձարանին այլազանման, հարստացման ուրոյն ուղի, եւ մասնաւորապէս քաղաքներուն անոր ինքնաբաւութեան, սեփական ներուժի վերստեղծման ձգտումները, հայրենիքի հետ կրաւորական յարաբերութիւններու փոխարէն...» մէջբերումը «Սփիւռքահայ գրականութիւնը՝ ժառանգորդ արեւմտահայ գրականութեան» յօդուածի եզրափակիչ հատուածն է: Լոյս տեսած է որպէս ներածութիւն Ծաղկաքաղ սփիւռքահայ գրականութեան հատորին (հրատ. Համազգային, Պէյրութ, 2009), եւ ներառուած Սփիւռք եւ Ինքնացում. Սփիւռքահայ Կացութիւն եւ գրականութիւն-վերլուծումներ հատորին մէջ (Բագին մատենաշար, Համազգայինի Վահէ Սէթեան Տպարան, Պէյրութ, 2022, էջ 208):

Յարութի Քիւրքճեան, Երրորդ Սերունդի յանձնառու մտաւորականը, որ Սփիւռքի՛ն խօսեցաւ: Սփիւռքը պիտի կարենա՞յ իր յիշատակին «Շարունակենք (քու)մեր Սուրբ Գործը» յանձնառութիւն վերցնել...

Խ. Տէր Ղուկասեան

Միս էջը կը հովանաւորեն Ա. եւ Ա. Յակոբ եւ Մուսիկոյ Մեր յուսալուրտեան



**ASSEMBLÉE
NATIONALE
DU QUÉBEC**

**Joyeux Noël et bonne année !
Nous vous souhaitons la paix dans le monde !**

Հնորհատոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ
մաղթելով խաղաղութիւն համայն աշխարհին



Marc Tanguay

Député de LaFontaine
Chef de l'Opposition officielle
Marc.Tanguay-LAFO@assnat.qc.ca
(514) 648-1007



Enrico Ciccone

Député de Marquette
Président de caucus de l'Opposition officielle
Enrico.Ciccone.MARQ@assnat.qc.ca
(514) 634-9720



Michelle Setlakwe

Députée de Mont-Royal-Outremont
Leader parlementaire adjointe de l'Opposition officielle
Michelle.Setlakwe.MROU@assnat.qc.ca
(514) 341-1151



Sona Lakhoyan Olivier

Députée de Chomedey
Sona.LakhoyanOlivier.CHOM@assnat.qc.ca
(450) 686-7153



Marwah Rizqy

Députée de Saint-Laurent
Marwah.Rizqy.STLO@assnat.qc.ca
(514) 221-4507



Elisabeth Prass

Députée de D'Arcy-McGee
Elisabeth.Prass.DMG@assnat.qc.ca
(514) 488-7028



Virginie Dufour

Députée des Mille-Îles
Virginie.Dufour.MIIL@assnat.qc.ca
(450) 661-3595



Frédéric Beauchemin

Député de Marguerite-Bourgeoys
Frederic.Beauchemin.MABO@assnat.qc.ca
(514) 368-1818



Brigitte Garceau

Députée de Robert-Baldwin
Brigitte.Garceau.ROBA@assnat.qc.ca
(514) 684-9000

Հայկական սփիւռքի մերօրեայ մարտահրաւերը

Երբ 20-րդ դարի առաջին քառորդի վերջում հայ գաղթաշխարհը, շնորհիւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան պետական այրերի, քաղաքականացում էր ու վերածուում սփիւռքի, վերջինիս առջեւ ծառայած բազմաթիւ մարտահրաւերները մէկն էլ ազգային-պետական իտէալները պահպանումն էր, զարգացումը եւ նոր սերունդներին փոխանցումը: Սա կատարում էր այն հաւատով, որ վաղ թէ ուշ, հայրենի պետութեան վերականգնումից եւ միջազգային նպաստաւոր իրավիճակի ձեւաւորումից յետոյ հնարաւոր կը լինէր նորովի հետապնդել մեր իրաւունքները վերատիրացման պայքարը: Հայաստանի անկախութեան բացակայութեան պայմաններում հայկական սփիւռքը ե՛լ քաղաքական, ե՛լ համայնքային առումներով ինքնակազմակերպուեց, պետականութեան բացակայութեան պայմաններում շուրջ 7 տասնամեակ վառ պահեց պայքարի ոգին, հունաւորեց Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքները, ամէն կերպ սատար կանգնեց դարաբաղեան շարժմանն ու նպաստեց Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Արդէն անկախութեան շրջանում սփիւռքը, գոնէ դրա քաղաքականապէս ակտիւ մասը, նեցուկ ու զօրակից էր նորանկախ հայրենիքին:

2020 թ. արցախեան պատերազմը, ապա 2023 թ. էթնիկ գտման ցեղասպան քաղաքականութիւնը խիստ բացասական ազդեցութիւն ունեցաւ նաեւ հայկական սփիւռքի վրայ՝ վերջինիս մօտ խորացնելով յուսահատութիւնը, ընկճուածութիւնը եւ հայրենազրկման ցաւը: Այդ ամէնին գումարուեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան, որպէս պետութեան թուլացումն ու ազգային իտէալները դէմ պայքարի ելած ապաշնորհ իշխանութիւնները:

Անկեղծութեան համար սակայն պէտք է նշել, որ հայկական սփիւռքի գոնէ քաղաքական հատուածը, շատ ակտիւ արագ ու արդիւնաւէտ յաղթահարեց շոկը, քան Հայաստանի Հանրապետութեան քաղաքական դաշտը, յատկապէս իշխանական:

Այսօր արդէն, հայկական սփիւռքի հիմնական քաղաքական կազմակերպութիւնների քաղաքական առաջնահերթութիւնների ու գործունէութեան հիմնական ուղղութիւնների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ հայկական սփիւռքը սթափ քաղաքական գնահատումների ու պրագմատիկ մօտեցումների կարողականութիւն ունի, ինչի որոշ արդիւնքների ու սփիւռքին պարտադրուած նոր մարտահրաւերներին կ'անդրադառնանք ստորեւ:

Քանիցս առիթ ունեցել ենք Հայ դատի յանձնարմբերի ու գրասենեակների համաշխարհային ցանցը բնորոշել որպէս հայկական սփիւռքի քաղաքական գործունէութեան հիմնական դերակատար, ուստի հայկական սփիւռքի քաղաքական գործունէութեանը կ'անդրադառնանք Հայ դատի համակարգի դիտանկիւնից:

Ի հարկէ երկար կարող ենք խօսել Հայաստանի Հանրապետութեան, դրա շուրջ ստեղծուած ռազմաքաղաքական իրավիճակի, իշխանութիւնների ապաշնորհութեան եւ առհասարակ պետութեան միջազգային ազդեցութեան վերաբերեալ, սակայն սոյն յօդուածում առաջարկում ենք

Հայաստանի Հանրապետութեանն ընդունել այնպէս ինչպէս որ այն այժմ կայ եւ փոխարէնը կեդրոնանալ հայկական սփիւռքի նոր մատահրաւերի վրայ՝ այն է, Հայաստանի Հանրապետութեան օրիէկտիւ ու սուբէկտիւ կազմակերպութեան պայմաններում իրապէս իրականացնել ազգային նպատակների միջազգային հետապնդումը, մինչեւ Հայաստանում եւ արտաքին ասպարէզում համեմատաբար բարենպաստ իրավիճակի ձեւաւորումը:

Ընդհանրապէս քաղաքական գիտութեան մէջ ընդունուած է կարծել, որ սփիւռքները գրեթէ միշտ հանդէս են գալիս ազգային շահի ընկալման, մեկնաբանման ու հետապնդման ինքնուրոյնութեամբ: Այդ ինքնուրոյնութիւնը դրսեւորում է ինչպէս ընդունող, այնպէս էլ հայրենի պետութիւններից: Նաեւ դա է պատճառը, որ արդի միջազգային յարաբերութիւններում սփիւռքները հանդէս են գալիս որպէս անդրազգային անկախ քաղաքական դերակատարներ, որոնց սահմանած քաղաքական հայեցակարգերը յաճախ կարող են ուղեւորային մակարդակի բարձրանալ՝ էապէս տարբերելով ազգային շահի՝ հայրենի պետութեան մեկնաբանումից: Վերջին շրջանում քիչ չեն իրադարձութիւնները, որոնք լինելով հայկական սփիւռքի քաղաքական գործունէութեան արդիւնք, յանգեցրել են միջազգային յարաբերութիւններում հայկական խնդիրները շօշափող այնպիսի հարցերի քննարկման, որոնք դուրս են Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան շրջանակից, բայց անվիճելիօրէն բխում են հայրենի պետական շահերից:

Վերջին երկու ամիսների ընթացքում օրինակ, ասուածի իրականութիւնը վկայող բազմաթիւ փաստեր կան: Նախ Գանատայի արտաքին գործերի նախարար Մելանի ժոլին Արցախի հայաթափման առաջին տարեկից առթիւ հանդէս եկաւ յատուկ յայտարարութեամբ, ինչին նախորդել էր Հայ դատի Գանատայի յանձնախումբի պաշտօնական ակտիւ հաղորդակցութիւնը նախարար ժոլիի հետ: Ի թիւս այնի՝ նախարարը նկատել էր, որ Գանատան աջակցում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բանակցային քաղաքական լուծմանը եւ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականութեան յարգման սկզբունքներին եւ ինքնորոշման իրաւունքին՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղութեան հասնելու բանակցութիւններում: Ըստ ժոլիի դա պէտք է ենթադրի Հայ խաղաղ բնակիչների վերադարձի անվտանգ եւ արժանապատիւ իրաւունքը, երաշխաւորի մարդու իրաւունքների եւ քաղաքացիական կենսամիջոցների պաշտպանութիւնը եւ տարածքում հայկական մշակութային ու պատմական վայրերի պահպանումը:

Աւելի ուշ, ՀՀ անկախութեան օրուայ առթիւ, ԱՄՆ նախագահի դեմոկրատ թեկնածու, երկրի գործող փոխնախագահ Քամալա Հարիսը հրապարակել էր ուղերձ՝ ուղղուած ամերիկահայութեանը: Դրանում Հարիսը աջակցութիւն է յայտնել «Լեռնային Ղարաբաղից տեղահանուած հայերի՝ իրենց տներն անվտանգ վերադառնալու իրաւունքին»: Դեմոկրատ թեկնածուն նաեւ նկատել է. «Մենք եր-

Միս էջը կը հովանաւորեն Ա. Եւ Ս. Տաւրիկ Եւ Միս Գարաշեան



բեք չպէտք է մոռանանք Հայոց ցեղասպանութիւնը», ինչպէս նաեւ՝ յանձնառու է «Հայաստանի եւ իր հարեւանների միջեւ ինքնիշխանութիւնը, անկախութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը յարգող կայուն խաղաղութեանը հասնելուն»:

Արդէն օրեր անց, նախագահի հանրապետական թեկնածու եւ արդէն իսկ ընտրուած նախագահ Տոնայտ Թրամփին էր նախ սոցցանցային գրառում կատարել՝ օգտագործելով «Արցախ» բառն ու կատարուածը որակելով որպէս էթնիկ զտում, ապա եւ հեռախօսազրոյց ունեցել Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի հետ: Համաձայն, Անթիլիասի մայրավանքի յայտարարութեան՝ նախագահ Թրամփի ու Արամ Ա.-ի հեռախօսազրոյցի ընթացքում վերջինիս կողմից բարձրացուել է ԱՄՆ առաջիկայ կառավարութեան կողմից արցախահայութեան վերադարձի ու ինքնորոշման իրաւունքներին զօրակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ ընդգծուել է արցախահայութեան դէմ իրագործուած ցեղասպանական գործողութիւնների համար պատասխանատուութեան ենթարկելու անհրաժեշտութիւնը: Կաթողիկոսի կողմից նաեւ անհրաժեշտ է նկատուել նոր կառավարութեան մէջ ունենալ ամերիկահայ համայնքը ներկայացնող անձ:

Ուշագրաւ է, որ Արամ Ա.-ն առաջարկել է բարձրացուած հարցերի վերաբերեալ խորհրդակցել ինչպէս ԱՄՆ երկու ասիերի ազգային առաջնորդարանների, այնպէս էլ Հայ դատի Ուաշինկթոնի գրասենեակի պատասխանատուների հետ:

Տեղափոխուելով Եւրոպա? միայն Հոկտեմբերի վերջին եւ Նոյեմբերի սկզբին, Հայ դատի Եւրոպայի գրասենեակի աշխատանքների արդիւնքում համաեւրոպական մակարդակում արձանագրուել են արցախահայութեան իրաւունքների իրացման պահանջով մի քանի կարեւոր իրադարձութիւններ՝ քաղաքական եւ քարոզչական բնոյթի:

Նախ, Հոկտեմբերի 22-ին Եւրոպական խորհրդարանի

Ստրասպուրկի լիազուժար նիստի ընթացքում խորհրդարանի աւելի քան 30 պատգամաւորներ իրենց ելոյթներում անդրադարձել են Արցախում աւրպէյճանական ցեղասպան քաղաքականութեանը: Եւրոպական խորհրդարանի պատգամաւորների կողմից, ի թիւս այլնի, կարեւորուել է հայ ռազմագերիների ազատ արձակումը, հայկական մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնը, արցախցիների՝ արժանապատիւ ու ապահով վերադարձի իրաւունքի իրացումը: COP 29-ին ընդառաջ՝ խստօրէն քննադատուել է Ալիեւի ռեժիմի յանցագործ քաղաքականութիւնը: Մի շարք պատգամաւորներ հանդէս են եկել Ատրպէյճանի նկատմամբ թիրախային պատժամիջոցների կիրառման, ԵՄ էներգետիկ համագործակցութիւնը դադարեցնելու պահանջներով: Կարեւոր էր նաեւ Պաքուի կողմից միջազգային կառույցներում կոռուպցիոն սխեմաներ ստեղծելու եւ օտարերկրեայ պաշտօնեաներին կաշառելու կամ շանտաժի ենթարկելու դրսեւորումների մասին պատգամաւորների զգուշացումներն ու յայտարարութիւնները:

Արդէն Հոկտեմբերի 24-ին խորհրդարանն ընդունեց «Ատրպէյճանում տիրող իրավիճակի, մարդու իրաւունքների եւ միջազգային իրաւունքի խախտման ու Հայաստանի հետ յարաբերութիւնների մասին» բանաձեւը, որի նախաբանում Եւրոպական խորհրդարանը գտնում է, որ Ատրպէյճանի կողմից մարդու իրաւունքների շարունակական խախտումներն անհամատեղելի են այդ երկրում COP-29-ի անցկացման հետ: Նաեւ արձանագրուում է Ատրպէյճանում մարդու իրաւունքների շարունակաբար վատթարացումը, միջազգային իրաւունքի կոպիտ խախտումները՝ այդ թւում Հայաստանի հանդէպ ագրեսիւ պահուածքը, քաղաքացիական հասարակութեան եւ լրատուամիջոցների նկատմամբ խիստ սահմանափակումները, Եւրոպական պաշտօնեաներին կաշառելու՝ «խաւիարային դիւանագիտութեան» արատաւոր մեխանիզմները, 2023 թ. Լեւնային Ղարաբաղի անօրինական շրջափակումը, միջազգային իրաւունքի

Միշտ էջը կը հովանաւորեն Ասրգրս, Թեքտիքրս եւ Մարօն Քօստիան

խախտմամբ իրականացուած յարձակումը, էթնիկ գտումները, 23 հայերի՝ այդ թւում Արցախի ռազմաքաղաքական դեկավարութեան պատանդառուները, ՀՀ ինքնիշխան տարածքի օկուպացիան: Խորհրդարանը վերահաստատում է իր դիրքորոշումը, առ այն, որ ԵՄ-ն պէտք է պատրաստ լինի պատժամիջոցներ կիրառել ցանկացած ֆիզիքական անձի եւ կազմակերպութեան նկատմամբ, որը սպառնում է Հայաստանի ինքնիշխանութեանը, անկախութեանը եւ տարածքային ամբողջականութեանը:

Բանաձեւի բուն տեքստում խորհրդարանը, COP 29-ին ընդառաջ, խստորէն դատապարտում է Ալիեւի ռեժիմին, գործադիր իշխանութեանը կոչ է անում կասեցնել Ատրպէյճանի հետ էներգետիկ յուշագիրը, յորդորում է դուրս բերել զինուած ուժերը ՀՀ ինքնիշխան տարածքից, դատապարտում է Հայաստանի նկատմամբ ագրեսիան, ողջունում է որոշ անդամ պետութիւնների կողմից Հայաստանին տրամադրուող պաշտպանական ռազմական օժանդակութիւնը: Խորհրդարանը պահանջում է արցախահայրենիքի վերադարձի իրաւունքի իրացում, արցախահայրենիքի հետ անկեղծ ու թափանցիկ երկխօսութեան մեկնարկ՝ վերջիններիս իրաւունքների պաշտպանութեան համար երաշխիքների տրամադրման շուրջ:

Խորհրդարանը նաեւ կարեւորում է Արցախի դէմ կատարուած պատերազմական յանցագործութիւնների անկախ յետաքննութեան, ինչպէս նաեւ Արցախի գրաւումից յետոյ ձերբակալուած անձանց ազատ արձակման անհրաժեշտութիւնը: Յատուկ անդրադարձ կայ Արցախի պատմամշակութային ժառանգութեան պաշտպանութեանը, ինչի համատեքստում պահանջում է ԵՄԻՆԵՍՔՕ-ի համապատասխան առաքելութեան մուտքը տարածաշրջան:

Եւրոպական խորհրդարանի պատգամաւորների շրջանում, Հայ դատի Եւրոպայի գրասենեակը ծաւալուն աշխատանքների արդիւնքում, որոնք COP 29-ին ընդառաջ, միտուած էին բարձրացնելու նրանց իրազեկուածութիւնը Ատրպէյճանում մարդու իրաւունքների եւ բնապահպանական խնդիրների վերաբերեալ, Խորհրդարանի հիմնական քաղաքական խմբերը ներկայացնող թուով 52 պատգամաւորներ Հոկտեմբերի վերջին ու Նոյեմբերի սկզբին ստորագրել են յայտարարութիւն, որով Ատրպէյճանին կոչ են անում անյապաղ ազատ արձակել Հայ ռազմագերիներին, երաշխաւորել Արցախի մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնը, ատրպէյճանական զինուած ուժերը ՀՀ բռնագրաւուած տարածքներից:

Աւելի ուշ՝ Նոյեմբերի 5-ին Եւրոպական խորհրդարանի կիրպրոսցի պատգամաւոր Լուկաս Ֆուրլասի եւ ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի համատեղ աշխատանքի արդիւնքում Եւրոպական խորհրդարանում, անցկացուել է «COP 29-ը Պաքուում. քողարկելով էթնիկ գտումը» խորագրով խորհրդաժողովը, որին մասնակցում էին Եւրոպական խորհրդարանի տարբեր քաղաքական խմբեր ներկայացնող պատգամաւորներ, պեւճիքացի քաղաքական գործիչներ, դիւանագէտներ, քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ, լրագրողներ եւ պեւճիքահայ համայնքի ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովի նպատակն էր կեդրոնանալ Ատրպէյճանում COP 29-ի անցկացմանն առնչուող տարբեր խնդիրների վրայ՝ Արցախի էթնիկ գտումների ետնապատ-

կերում: Խորհրդաժողովի ընթացքում անդրադարձ է կատարուել Արցախի հայութեան բռնի տեղահանումը պարտակելուն միտուած՝ Ատրպէյճանի կառավարութեան շարունակական արշաւին, ինչպէս նաեւ մարդու իրաւունքների խախտումների եւ շրջակայ միջավայրի հանդէպ այդ երկրի աղաղակող վերաբերմունքին: Ընդհանուր առմամբ քննարկումները ծաւալուել են քաղաքական, բնապահպանական եւ մարդու իրաւունքների ոլորտներում Ատրպէյճանի ապակառուցողական դիրքորոշումների վերհանման շրջանակում:

Այսպիսով, ակնյայտ է, որ Հայ դատի յանձնախմբերի ու գրասենեակների կատարած նպատակադրուած աշխատանքի արդիւնքում, որոնք վերջին ամիսների ընթացքում շեշտադրում էին նաեւ Պաքուում COP 29-ի անցկացման համատեքստում, հայութեան համար առանձնակի կարեւորութիւն ունեցող խնդիրները, յատկապէս վերադարձի իրաւունքը, արցախահայրենիքի հաւաքական այլ իրաւունքների խնդիրները, ռազմագերիների եւ գերիների ազատ արձակումը, Արցախի պատմամշակութային ժառանգութեան պահպանումը, Ատրպէյճանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, միջազգային յարաբերութիւններում Ատրպէյճանի նկատմամբ օբեկտիւ իրազեկուածութեան բարձրացումը եւ այլն բարձրացան քննարկումների ամենաբարձր մակարդակներ: Փաստ է, որ վերոգրեալը Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքական առաջնահերթութիւնները չեն եւ նոյնիսկ արտաքին յարաբերութիւնների օրակարգում էլ չեն: Փաստ է նաեւ, որ հայկական սփիւռքը միայնակ կարողացել է այս հարցերը դարձնել միջազգային քննարկման առարկայ՝ դրանով լուծելով ներկայ ժամանակաշրջանի համար ռազմավարական կարեւորութեան մէկ խնդիր՝ դարաբաղեան հակամարտութիւնը պահել միջազգային օրակարգում: Ըստ մեզ հենց սա է հայկական սփիւռքի նորօրեայ մարտահրաւէրը՝ ամէն գնով չլուծուած հակամարտութիւնը պահել միջազգային ասպարէզում, մինչեւ որ հայրենիքում եւ արտերկրում քաղաքական զարգացումները թոյլ կը տան աւելի նպատակաւոր դիրքերից հետապնդել այս խնդիրը:

Գեորգ Դուկասեան
Քաղաքական գիտութիւնների թեկնածու,
ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի կեդրոնական գրասենեակի
յատուկ ծրագրերի պատասխանատու

«Գանատան աջակցում է Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի բանակցային քաղաքական լուծմանը եւ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականութեան յարգման սկզբունքներին եւ ինքնորոշման իրաւունքին՝ այս տարածաշրջանի ժողովրդի համար արդար եւ տեւական խաղաղութեան հասնելու բանակցութիւններում»:

Այս էջը կը հովանաւորեն Պաֆֆի, Մարի-Վիբո, Թալիս Սուրի եւ Առնօ Զազուազժեան

Meet the Hearing Aid Brothers: Edmond and Andre Ayvazyan

Experience the Future of Hearing with Hearing Aid Source

Discover the Difference:

HEAR

Enjoy crystal-clear speech in any environment with our cutting-edge Augmented Focus technology. Say goodbye to struggling with conversations.

CHARGE


Ditch the hassle of tiny batteries. Our rechargeable hearing aids ensure you're always ready to go without the fuss of changing batteries.

CONNECT

Seamlessly link your hearing aids to your Android or iPhone smartphone. Enjoy hands-free calls, music streaming, and more, directly through your hearing aids.

Why Choose Hearing Aid Source?

- **Risk-Free Trials:** Try our hearing aids with no obligation. Experience the improvement in your hearing without any risk.
- **Free Hearing Tests:** Get a comprehensive hearing assessment at no cost. Understand your hearing health and get personalized recommendations.
- **Expert Care:** With years of experience, Edmond and Andre Ayvazyan are dedicated to providing the highest quality hearing care.
- **Custom Hearing Protection:** Protect your hearing with custom solutions tailored to your needs.



Visit Us Today:

Coxwell Avenue Location:
702 Coxwell Avenue, Toronto, ON M4C 3B9
Tel: 416-463-4327 (HEAR)

Parkway Mall Location:
85 Ellesmere Road, #29 Toronto, ON M1R 4B9
Tel: 416-754-4327 (HEAR)

Contact Us:

hello@hearingaidsource.ca
www.hearingaidsource.ca

Your Hearing Health Matters.

Take the first step towards better hearing.
Schedule your free hearing test and no-obligation trial today.
Call 416-754-4327 to book an appointment.

Rediscover the joy of hearing with Hearing Aid Source –
where advanced technology meets compassionate care.



hearing aid source

hearing instrument specialists

Կրասնոտարի համայնքային կեանքին մասին



Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցի, Կրասնոտարի Արմատ դպրոցի եւ Հարաւային Ռուսաստանի եւ Կրասնոտարի երկրամասի Հայոց Թեմի առաջնորդարանի բակ

Աշխարհի տարբեր երկրներում շատ քաղաքներ կան, որտեղ բաւականին ակտիւ են գործում հայկական համայնքները: Այդպիսի ակտիւ, եթէ չասենք չափազանց ակտիւ, համայնքներից է Ռուսաստանի Դաշնութեան Կրասնոտար քաղաքի հայկական համայնքը:

Ռուսաստանի հարաւում գտնուող հայաշատ այս քաղաքում հայկական երկու կայացած կազմակերպութիւն է գործում: Համայնքային կեանքի համար կարեւոր ու առանցքային նշանակութիւն ունի նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հարաւային Ռուսաստանի Հայոց Թեմը, որի առաջնորդարանը նոյնպէս գտնուում է Կրասնոտարում:

Որպէսզի աւելի պատկերաւոր լինի, թէ որքան բազմաշերտ ու յազեցած է Կրասնոտարի հայերի համայնքային կեանքը, պէտք է ասեմ, որ քաղաքում գործում է հայկական երկու դպրոց: Դպրոցներից մէկը՝ «Արմատը» գտնուում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հարաւային Ռուսաստանի Հայոց Թեմի հովանու ներքոյ, հենց առաջնորդարանի եւ առաջնորդանիստ եկեղեցու հարեւանութեամբ, իսկ երկրորդ դպրոցը, որը կրում է Հայ մեծանուն բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի անունը, գործում է «Կրասնոտարի երկրամասի տարածաշրջանային հայկական ազգային-մշակութային ինքնավարութեան» հովանու ներքոյ: Հարկ է նաեւ նշել, որ «Կրասնոտարի երկրամասի տարածաշրջանային հայկական ազգային-մշակութային ինքնավարութեան» հովանու ներքոյ գործում է նաեւ հայկական «Արեւիկ» մանկապարտէզը:

Գործող հայկական երկու դպրոցներում առաջնահերթ կարեւորութիւն է տրուած Հայոց լեզուի ուսուցմանը: Կրասնոտար քաղաքում եւ յարակից բնակավայրերում բնակուող հայ ընտանիքները ունեն բացառիկ հնարաւորութիւն իրենց երեխաներին այդ դպրոցների առկայութեամբ հայեցի դաստիարակելու: Այդ դպրոցները հայապահպանութեան կարեւոր առաքելութիւն են այսօր իրականացնում հայրենիքից հեռու ապրող հայութեան համար:

Մասերով Ռուսաստանի հարաւային մայրաքաղաք Կրասնոտարի հայկական համայնքային կեանքի մասին, պէտք է առանձնակի ներկայացնել նաեւ համայնքում գործող մետիալրատուական կառույցների՝ «Hayk media» եւ «KUBAN ARM» ընկերութիւնների մասին, որոնք ամէնօրեայ ռեժիմով ռուսերէն եւ հայերէն լեզուներով հայութեանն են ներկայացնում լուրեր հայկական աշխարհից հայկական թեմատիկայով պատմավաւերագրական ֆիլմեր, գեղարուեստական ֆիլմեր, հարցազրոյցներ, առանձին ծրագիրներ եւ այլն: Մետիալրատուների կողմից իրականացուող այս աշխատանքները կարեւոր նշանակութիւն ունեն ոչ միայն տեղի հայութեան, այլեւ աշխարհասփիւռ հայերի համար, քանի որ հայկական թեմատիկայով հաղորդումների արտադրութիւնը հայապահպանութեանն ուղղուած նշանակալի ներդրում է: «Կրասնոտարի երկրամասի տարածաշրջանային հայկական ազգային-մշակութային ինքնավարութիւն»ը համայնքային կեանքի աշխուժացման համար շատ ջանքեր է գործադրել եւ գործադրում, որպէսզի

Միս էջը կը հովանաւորեն Ա. եւ Ա. Բարգիւ եւ Սիմֆոնի Կարապետեան



Noix Orientale

ASSORTED NUTS - COFFEE - DRIED FRUITS - SPICES

ROASTED DAILY-ALWAYS FRESH



Assorted Nuts



Coffee




Spices



Nougat



Dried Fruits



Chocolates

2180 BOUL. CURÉ-LABELLE,
LAVAL, QC, H7T 1R1

+1 (450) 682-3602

www.noixorientale.com

տեղի հայութիւնը հայրենիքից դուրս, հայրենիքով ապրելու հնարաւորութիւն ունենայ: Արցախեան վերջին պատերազմից յետոյ, երբ արցախահայութիւնը բռնի տեղահանուեց, եւ արցախցիները ստիպուած սկսեցին ապրելու նոր հասցէներ գտնել աշխարհի տարբեր անկիւններում, այդ թւում նաեւ Կրասնոտարում, «Կրասնոտարի երկրամասի տարածաշրջանային հայկական ազգային-մշակութային ինքնավարութիւն»ը արցախահայութեանն օգնելու, նրանց խնդիրներին հնարաւորինս լուծումներ տալու, Արցախի էթնիկ դիմագիծը պահպանելու համար ինքնավարութեան հովանու ներքոյ ստեղծեց «Արցախ» էթնոմշակութային կեդրոնը: Ստեղծման առաջին իսկ օրերից կեդրոնը սկսեց ակտիւ աշխատանքներ իրականացնել տեղի արցախահայութեան հետ՝ նրանց ցուցաբերելով ինչպէս նիւթական օժանդակութիւն, այնպէս էլ իրաւաբանական խորհրդատուութիւններ: Ինքնավարութեան հովանու ներքոյ գործող «Արցախ» էթնոմշակութային կեդրոնի հովանաւորութեամբ վերջերս մայրաքաղաք Երեւանում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս Եպիսկոպոս Աբրահամեանի նախաձեռնութեամբ եւ Բաֆֆի Փորթոյեանի հեղինակութեամբ հրատարակուեց Արցախում Ատրպէյճանի կողմից իրականացուող մշակութային ցեղասպանութիւնը նկարագրող գիրք:

Գրքի հրատարակումից յետոյ, Կրասնոտարում ինքնավարութեան հովանու ներքոյ տեղի է ունեցել հանդիպում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս Եպիսկոպոս Աբրահամեանի հետ, որտեղ ինչպէս արցախահայերը, այնպէս էլ Կրասնոտարում բնակուող հայութիւնը հնարաւորութիւն ունեցաւ յուզող հարցերի մասին զրուցելու Սրբազան Հօր հետ:

Հայկական մշակոյթի, նրա աւանդոյթները եւ առանձնայատկութիւնների պահպանութիւնը չի վրիպում «Կրասնոտարի երկրամասի տարածաշրջանային հայկական ազգային-մշակութային ինքնավարութեան» ուղադրութիւնից, այս ուղղութեամբ բազմաթիւ աշխատանքներ են իրականացուում, այդ թւում՝ մշակութային միջոցառումներ համերգներ հայկական թեմատիկայով, կարեւոր նշանակութիւն պարունակող գրքերի հրատարակումներ, կլոր սեղան-հանդիպումներ եւ այլն: Օրինակ վերջերս Կրասնոտար քաղաքում ինքնավարութեան նախաձեռնութեամբ տեղի է ունեցել Կոմիտաս Վարդապետի 155-ամեակին նուիրուած երեկոյ, որտեղ ամենաբարձր մակարդակով ներկայացուել է



Նոր կառուցուող հայկական եկեղեցուց նսխապատկեր

մեծանուն հայի թողած երաժշտական մեծ ժառանգութիւնը: Հայութիւնն այդ օրը հնարաւորութիւն է ունեցել կենդանի կատարմամբ լսելու եւ վայելելու Կոմիտասի յայտնի ստեղծագործութիւնները:

Կրասնոտարում հայկական համայնքի ակտիւութիւնը նկատելի է նոյնիսկ անգէն աչքով, տեղի հայութիւնը տարբեր ձեւաչափերով ընդգրկուած է համայնքային կեանքին: Այս ամէնում մեծ դեր ունի նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հարաւային Ռուսաստանի հայոց թեմը: Կրասնոտարում գործող հայկական երկու-երեք եկեղեցիները հնարաւորութիւն են տալիս, որպէսզի հայութիւնը չկտրուի իր հոգեւոր արմատներից եւ ամուր պահի քրիստոնէական արժէքները: Գործող հայկական եկեղեցիներին զուգահեռ ներկայ պահին Կրասնոտարում ընթանում են հայկական նոր եկեղեցու կառուցման աշխատանքները: Կառուցուող եկեղեցին դառնալու է Հարաւային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստը:

Երկար, շատ երկար կարելի է խօսել Կրասնոտարի հայկական համայնքի մասին, որովհետեւ այն իրականում բազմաշերտ է, եւ նրան կարելի է անդրադառնալ օրերով, ամիսներով, տարիներով եւ այն էլ՝ առանց կանգ առնելու: Ես փորձեցի ընդամէնը մի փոքրիկ անդրադարձ կատարել, նկարագրելով այդ ամէնի ամենացայտուն կէտերը, բայց ասելիքն ավելին է: Տեղի ունեցող միջոցառումները, իրականացուող ծրագրերը, ընթացող համայնքային աշխատանքներն այնքան շատ են, որ նրանցից իւրաքանչիւրին կարելի է անդրադառնալ առանձին եւ ավելի մանրամասն: Աւարտելով խօսքս՝ ուզում եմ ասել, որ հայրենիքից դուրս հայրենիքով ապրելը պէտք է դառնայ մեր նպատակներից գերազոյնը, որովհետեւ Հայաստան աշխարհը մեր մարմնի, հոգու, մտքի եւ ապրելու միակ բարձրագոյն արժէքն է:

Սերգէյ Սաֆարեան, բանաստեղծ.

Արցախի եւ Հայաստանի գրողների միութիւնների անդամ
ՀԱՍԵ Արցախի թեմի թեմական խորհրդի անդամ



«Վարդանեան կրթամշակութային կեդրոն»
Արմատ դպրոցի շէնքը

Սիւսէլը կը հովանաւորուի Ա. եւ Ա. Մկրտչու եւ Ծովիկ Գաւիթ-Տեանի

AUTOMOBILES INTER-LUX INC.



Centre de collision approuvé
Approved Collision Centre

FRANCK ALTAN
PRÉSIDENT

MIKE BACHEKJIAN
DIRECTEUR DE CARROSSERIE

Mercedes-Benz



Centre de Collision Certifié Mercedes-Benz de Laval

2025 rue Monterey, Laval PQ H7L 3T6

Téléphone: 450-686-8866 | info@interlux.ca | collisionmblaval@interlux.ca | www.inter-lux.ca

«Հայ Դատի աշխատանքները անդուլ կերպով պիտի շարունակենք, որպեսզի Արցախի հարցը մշտական քննարկումի առարկայ ըլլայ Գանատայի քաղաքական ոլորտէն ներս»։ Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի հետ

Հ.- Ինչպէ՞ս կ'արժեւորէ՞ք անցնող տարուան ընթացքին մեր գաղութի կառուցներուն եւ կազմակերպութիւններուն գործունէութիւնը:

Խ.Տ.- 2023-ին ընդհանրապէս գաղութը եւ մեր կազմակերպութիւնները որոշ լծացած վիճակի մէջ էին. Արցախի պատերազմին հետեւանքները եւ թաղաժամհարի ազդեցութիւնը մեծապէս զգալի էին: Մեր նպատակն էր այս անցնող տարուան ընթացքին վերաշխուժացնել մեր աշխատանքները, թէ՛ կուսակցական մեր կառույցներու պարագային, թէ՛ Հայ Դատի աշխատանքներուն, ինչպէս նաեւ համայն գաղութի ուղեկից միութիւններուն, եկեղեցիներուն, մեր կեդրոններուն, երիտասարդականի եւ պատանեկանի գործունէութեանց պարագային: Հետեւաբար աշխատանք տարինք, որ այդ սառած վիճակէն դուրս գանք, վերաշխուժանանք, եւ մեր կառույցները կենսաւորենք: Կրնամ ըսել, որ այդ աշխատանքին արդիւնքը քաղցինք անցնող տարուան ընթացքին, սակայն մեզի համար բաւարար չէ, մենք տակաւին յաւելեալ աշխատանք տանելու կարիքը ունինք, որպէսզի առաւել եւս վերակենդանանայ մեր գաղութը իր բոլոր հիմնարկներով:

Հ.- 2023 թուականի Հոկտեմբերին Հայաստանի մէջ բացումը կատարուեցաւ Հայաստանի մօտ Գանատայի դեսպանատան: Այսօրուան դրութեամբ ի՞նչ աշխատանքներ իրագործած է դեսպանատունը:

Խ.Տ.- Նախ ըսեմ, որ դեսպանատան բացումը ինքնին մեծ իրադարձում մըն էր. մենք կը դիտարկենք զայն որպէս նոր քայլ Գանատա-Հայաստան յարաբերութիւններու զարգացման գործընթացին մէջ: Մեր գործակցութիւնը այս պարագային բացումէն ետք եղած է զանաատական կառավարութեան ներկայացուցիչներուն հետ, որպէսզի Հայաստանի տնտեսական եւ ընկերային հարցերը առաջնահերթ ըլլան իրենց սեղաններուն վրայ, ինչպէս նաեւ Արցախի մեր ժողովուրդին իրաւունքները, հողային պահանջներն ու վերադարձի



իրաւունքը:

Բացումէն ետք հինգ տարբեր առիթներով մենք հանդիպումներ ունեցած ենք Հայաստանի մօտ Գանատայի դեսպան Անտրու Թըրըրի հետ: Անկախ անկէ մենք քաղաքական տարբեր դէմքերու հետ եւս հանդիպումներ ունեցած ենք, որոնք աջակցութիւն ցուցաբերած են Հայաստանի հողային ամբողջականութեան եւ գերիշխանութեան հարցերով: Յատուկ աշխատանք տարած ենք Գանատայի պետութեան մօտ, որ իր 2024-ի տարեկան մարդասիրական նպատար Հայաստանի մէջ հիմնականօրէն տրամադրուի Սիւնիքի մարզի մեր հայրենակիցներուն, նկատի ունենալով այդ շրջանին դէմ ծառայած բազմաթիւ դժուարութիւնները:

Կ'ուզեմ շեշտել, որ նման աշխատանքներ անդուլ են, յարատեւութիւնը շատ կարեւոր է մեզի համար, որպէսզի Գանատան մնայուն կերպով աջակից ըլլայ Հայաստանի՝ նիւթապէս եւ բարոյապէս, ինչպէս նաեւ քաղաքական գետնի վրայ: Դեսպանատան բացումը, ինչպէս ըսի, մեծ իրադարձում էր եւ տարիներու վրայ երկարող հետեւողական աշխատանքի արդիւնք, սակայն պէտք չէ բաւարարուիլ անով, պէտք է շարունակենք մեր համագործակցութիւնը, բոլոր ոլորտներէն ներս:

Հ.- ՀՅԴ Գանատայի կառոյցն ու կուսակցութեան ուղեկից կազմակերպութիւններն ու միութիւնները արցախահայութեան աջակցութեան համար ի՞նչ ծրագիրներ մշակեցին անցնող տարուան ընթացքին:

Խ.Տ.- Այս տարուան սկիզբը ՀՕՄ-ի միջոցաւ մեր ուղեկից միութիւնները մղեցինք, որ միասնաբար դրամահաւաք կազմակերպեն, անմիջական օգնութեան ձեռք երկարելու Արցախի մեր ժողովուրդին, հոգալով անոնց կենսական պէտքերը, որովհետեւ երկար շրջափակումէ, պատերազմէ եւ բռնագաղթի ենթարկուելէ ետք, մօտ 120 հազար արցախցի Հայաստանի մէջ որոշ չափով ձգուած էին իրենց ճակատագրին: Մենք շուտով գործի լծուեցանք, որ մեր ժողովուրդը անտէր չմնայ, եւ կարենանք գէթ իրենց հիմնական պէտքերը հոգալ:

ՀՕՄ-ի միջոցաւ անշուշտ եւ յարակից մեր միութիւններուն մասնակցութեամբ, ինչպէս նաեւ Գանատայի տարածքին մեր կոմիտէութիւններուն եւ կազմերուն աջակցութեամբ, յաջողեցանք 500 հազարէն աւելի գումար հանգանակել եւ ուղարկել, որով ապահովուեցաւ ուստեսեղէն, դեղորայք եւ բնակարան մեր ժողովուրդին:

Ասոր կողքին մենք շարունակեցինք մեր Հայ Դատի աշխատանքը, որ քաղաքական ոլորտէն ներս տեւական քննարկումի առարկայ դառնայ Արցախի հարցը, ժողովուրդին վերադարձի իրաւունքը եւ Ատրպէյճանի կառավարութեան իրագործած ցեղասպանական արարքները: Կարելի է ըսել, որ այս ուղղութեամբ աշխատանքը իր դրական արդիւնքը տուաւ, որովհետեւ Գանատայի կառավարութիւնը տակաւին կը խօսի Արցախի ինքնորոշման եւ ժողովուրդին վերադարձի իրաւունքին մասին: Այս մէկը շատ կարեւոր է, որպէսզի յարատեւ արձարծուով հարցը իր արդար ու վերջնական լուծումին հասնի:

Հ.- ՀՅԴ Գանատայի երիտասարդական, պատանեկան եւ ուսանողական շարքերը ի՞նչ ծրագիրներ իրագործեցին:

Սիւս էջը կը հովանաւորեն Ս. Եւ Ս. Յակոբ Եւ Ստեփ Թաշժեան

Residential complexes for retirees

BACK TO YOURSELF

...

To age is to progressively
Come back home...
To your familiar nook,
To a presence, all your own.

To age is to walk
towards a kingdom that's yours...
Where the coziest feeling,
Greet you at the door.

To age isn't about
Rediscovering who you are...
It's a profound knowing,
That's with you from the start.

To age isn't about
A search for knowing...
It's already a deep understanding
While still growing.

To age is to experience
A joy that's real...
That never ceases to amaze,
That you'll forever feel.

To age is to live.

**LE GROUPE MAURICE WISHES YOU
A RADIANT AND JOYFUL HOLIDAY SEASON!**

2024 թուականին:

Խ.Տ.- Սկսինք երիտասարդակա- նով. շատ կարեւոր դեր կը խաղայ երի- տասարդութիւնը գաղութի վերաշխու- ժացման առնչութեամբ, հետեւաբար ես կոչ կ'ուղղեմ ընդհանուր առմամբ մեր երիտասարդութեան, որ մաս կազմեն մեր միութիւններուն, մեր կազմակեր- պութիւններուն, մեր կառույցներուն՝ կուսակցական, մարզական, սկստակա- նական, եկեղեցական, մարդասիրական եւ մշակութային՝ ըստ իրենց նախասիրու- թիւններուն: Ես կը հասկնամ, որ այսօր- ուան կեանքի հեւքը կը սպառէ մեր երիտասարդներուն առօրեան՝ աշխա- տանքի եւ ուսումի բերումով, բայց ես կոչ կ'ուղղեմ իրենց, որ յաւելեալ ճիգ թափեն եւ ժամանակ տրամադրեն իրենց գաղութին ծառայութեան, երիտասար- դական մեր կազմակերպութիւններուն, մեր յարակից միութիւններուն՝ ՀՄԸՄ- ին, ՀՕՄ-ին եւ Համագայինին, որով- հետեւ մեր կառույցները կարիքը ունին, իրենց ներուժին, իրենց նորարարական գաղափարներուն եւ իրենց տեսակէտ- ներուն: Մենք ալ մեր կարգին իրենց տեղ պէտք է տանք ու քաջալերենք:

Ըսեմ, որ մեր երիտասարդականը իր եռանդուն աշխատանքը շարունա- կեց այս տարի եւս: Քանի մը օրինակ յիշելու համար ըսեմ, որ մեր երիտա- սարդականը ամէն տարի ամրան Լոռիի մարզին մէջ կը կազմակերպէ Վանաձո- րի ճամբարը տեղացի պատանիներուն համար: Թագաժամհանքը ստիպուած էինք դադրեցնել, սակայն անցնող ամ- րան վերսկսաւ այս նախաձեռնութիւնը, եւ շուրջ 200 պատանի երկու շաբթուան ընթացքին, ստացան ազգային դաստի- արակութիւն: Այս նախաձեռնութիւնը ԳԵՄ-ի մեր անդամներուն համար կա- րեւոր կը նկատենք, որովհետեւ իսկա- կան կապ կը ստեղծէ մեր երիտասարդ- ներուն եւ մեր հայրենիքին միջեւ, նաեւ Վանաձորի եւ շրջակայքի պատանի- ներուն համար օգտաշատ է, որովհե- տեւ ընկերային մթնոլորտ ստեղծելու եւ ազգային դաստիարակութիւն ստանա- լու առիթ կ'ընծայէ իրենց: Այս ճամբար- րը կրկին հերթականօրէն տարեկան դրութեամբ պիտի շարունակուի:

Երկրորդ օրինակ մը տալու համար յիշեմ Ապրիլ 24-ի քայլարշաւն ու ցոյցը թրքական ղեկավարման դիմաց, որ կը կազմակերպուի ԳԵՄ-ին կողմէ: Քայ- լարշաւի լոգոնգներու պատասխաններն ու ձեռնարկի յայտագիրը լաւապէս կազ-

մակերպուած էր:

Գալով Պատանեկան միութեան այս տարի տեղի ունեցաւ վարիչնե- րու վերաորակաւորման սեմինար, որուն ընթացքին կրցանք մեր պատա- նիներուն յատուկ դաստիարակութիւն տալ՝ ղեկավար ըլլալու մօտեցումներն ու անհրաժեշտ գիտելիքները փոխան- ցելով իրենց: Նման միջոցառումներ նպատակաւորուած դաստիարակչա- կան ծրագիր կ'իրականացնեն ԸՎՄ-ի կազմակերպութեամբ: Պատանեկանի Համագանատական տարեկան սեմինա- րին եւս 150-էն աւելի մասնակիցներ կային Գանատայի ամբողջ տարած- քէն, որուն ընթացքին դարձեալ մեր պատանիները Հայ Դատի վերաբեր- եալ եւ մեր պատմութեան վերաբերեալ դասախօսութիւններ ունեցան:

Այս տարի մեր շրջանը հիւրըն- կալեց Տարածաշրջանային Պատանեկան Առաջին Խորհրդաժողովը. պատանիներ Գանատայէն, Արեւելեան եւ Արեւմտ- եան Ամերիկաներէն եւ Աւստրալիայէն մասնակցեցան սոյն խորհրդաժողո- վին, որուն ամբողջական կազմակեր- պութիւնը ստանձնած էր Գանատայի ԸՎՄ-ը: Այս մէկը աննախընթաց էր մեր շրջանին համար, նաեւ ցուցանիչ է մեր Պատանեկան կառույցի աշխուժութեան:

Ուսանողականին վերաբերեալ անոնք յաջորդ տարեշրջանին համար վերսկսած են իրենց ծրագրային աշխա- տանքները, որպէսզի յառաջիկային հա- մալսարանական ոլորտներէն ներս մեր ձայնն ու մեր քարոզչութիւնը լսելի դարձնեն:

Հ.- Գանատայի Հայ Դատի յանձ- նախուժը միշտ պատկէշի վրայ է եւ իր յանձնառութեան հաւատարիմ յառաջ կը տանի իր առաքելութիւնը: Ինչպիսի՞ տարի մը բոլորեց Գանատայի Հայ Դա- տի յանձնախումբը:

Խ.Տ.- Բաւական զբաղ եւ ծան- րակշիռ տարի մըն էր Հայ Դատի յանձ- նախումբին համար. աշխատանքները հիմնականօրէն տարբեր ոլորտներ կը պարփակէին՝ Հայաստանի ընկերային եւ տնտեսական աջակցութիւն, ինչ- պէս նաեւ Գանատա-Հայաստան յա- րաբերութիւններու ծաւալում, որպէսզի Գանատան յանձնառու ըլլայ առաւե- լագոյնս օժանդակելու Հայաստանի: Կրնամ ըսել, որ որոշ չափով յաջողե- ցանք՝ Գանատայի կառավարութեան նիւթական օժանդակութիւնը ապահո-

վելով:

Ներգաղութային գործունէու- թեան առումով Հայ Դատի յանձնա- խումբը Գանատայի մէջ ժողովրդահա- ւաքներ կազմակերպեց, Մարտ ամսուան ընթացքին, Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ, որոնց ընթացքին մեր գործակա- րը եւ Ամերիկայի Հայ Դատի յանձնա- խումբի ներկայացուցիչներ ներկայա- ցուցին իրենց աշխատանքները: Նշեալ հաւաքներուն մեր ժողովուրդը առիթ ունեցաւ նաեւ բաժնելու իր մտահոգու- թիւնները եւ տեսակէտներ փոխանցե- լու: Այսպիսով մենք կը փորձենք Հայ Դատի յանձնախումբի աշխատանքները ներկայացնել մեր գաղութին, որպէսզի աջակցին մեր գործունէութեան:

Արցախի հարցով քաղաքական ոլորտէն ներս միշտ առկայ է Արցախի մեր ժողովուրդին իրաւունքներուն վե- րատիրանալու հարցը եւ հողային պա- հանջները: Մենք յաջողեցանք նա- եւ մամլոյ ասուլիս կազմակերպել, երբ Ատրպէյճան հիւրընկալեց COP-29 մի- ջոցառումը: Մամլոյ արձագանգը բա- ւական գոհացուցիչ էր այս առնչու- թեամբ:

Ցեղասպանութեան ճանաչման շուրջ կը շարունակուին մեր աշխա- տանքները, որպէսզի ինչ որ առ այ- սօր իրագործած ենք Գանատայի մէջ կարենանք ամրապնդել եւ մոռացու- թեան չտալ մեր պահանջատիրութիւնը թուրք իշխանութիւններէն: Մենք ոչ միայն ցեղասպանութեան ընդունումը կը պահանջենք, այլ մեզի համար կա- րեւոր է նաեւ հատուցումը: Դժբախ- տաբար Հայաստանի ներկայ կառավա- րութեան վարած քաղաքականութեան պատճառաւ այս աշխատանքը թէպէտ աւելի դժուար է, բայց շատ աւելի կարե- ւոր է, որ Սփիւռքի մէջ մենք այդ ձայնը բարձրացնենք եւ մնանք պահանջատէր:

Այս ծիրէն ներս առաջին անգամ ըլլալով Մայիս 1-ին կազմակերպեցինք քաղաքական հաւաք, որուն 70-էն աւե- լի քաղաքական ղեմքեր եւ ղեկավարներ ներկայ գտնուեցան Օթթաուայի Խորհր- դարանին մէջ: Գանատայի բոլոր կու- սակցութիւններէն եւ օտար երկիրնե- րու ղեկավարներ ներկայ էին, ուր մենք դարձեալ մեր պատգամը փոխանցեցինք եւ մեր հողային պահանջները շեշտե- լով հարցը կրկին անգամ արձարծեցինք:

Հարցազրոյցը վարեց Սոնա Թիթիզեան

Միշտ էք կը հովանաւորեն Արեւմտ, Մարտի եւ Միւս Բարանայու լեւան




**5291 Henri-Bourassa Blvd Ouest
Saint-Laurent, QC, H4R-1B7**

**514-337-6664
info@vinorosso.ca
www.vinorosso.ca**



Չայն բազմաց՝ ձայն Աստուծո՞յ

Կ'ըսուի, ըսուած է Vox populi, vox Dei, այսինքն՝ ժողովուրդի ձայնը Աստուծոյ ձայնն է:

Հայերէն դարձուածքն է՝ «ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»:

Իրապէ՞ս:

Ինչպէ՞ս հաւատալ այդպիսի անհեթեթութեան, երբ աշխարհի ամենէն զարգացած, ամենէն հզօր երկիրը համարուող պետութեան նախագահ կրնայ ընտրուիլ գիտէք թէ ով: Ժողովուրդի ձայնո՞վ: Ո՞ր ժողովուրդի: Եւ այդ ձայնը Աստուծո՞յ ձայնն էր: Տեղին չէ՞ հարց տալ՝ ո՞ր Աստուծոյ:

Այս տողերը գրի կ'առնեմ, որովհետեւ մեր մէջ քիչ չեն հանրային կարծիք ըսուածին կարեւորութիւն տուողները: Ժողովուրդի ձայնը կամ հանրային կարծիքը նոյն իմաստը ունին:

Կրնանք բազմաթիւ սահմանումներ կամ հոմանիշներ տալ այդ հանրային կարծիք ըսուածին. օրինակ՝ տգիտութեան կարծիք, ուժի կարծիք, դրամի կարծիք, շուկայի կարծիք, սովորաժողովեան կարծիք եւ այլն: Ինչո՞ւ, — որովհետեւ այդ բոլորը եւ տակաւին այլ ազդակներ իրենց դերը ունին հանրային կարծիքի կազմաւորման, աւելի ճիշտ մշակման մէջ:

Արդ, որո՞նք են հանրային կարծիքին վրայ ազդեցութիւն ունեցող գլխաւոր ուժերը, ըլլայ դրական թէ բացասական առումով:

Առաջին հերթին, եւ երկա՛ր ժամանակ, եկեղեցին ու պետութիւնն էին զայն ձեւաւորողը: Սուրբ գիրքերը, — ի՛նչ կրօնէ որ բխած ըլլան, — եւ սահմանադրութիւնները, — ի՛նչ պետութեան որ պատկանած ըլլան, — անկասկած ոչ միայն նպաստած, այլեւ պարտադրած են այդ կարծիքը. պատմութիւնը լի է պարտադրանքներու, եւ ատոնց հետեւանք՝ բռնու բախումներու, պատերազմներու օրինակներով: Բռնապետական վարչակարգերը՝ հին Հռոմէն մինչեւ Օսմանեան կայսրութիւն ու Խորհրդային Միութիւն եւ մինչեւ ներկայ պետութիւններէն շատեր իրենց «գօրավիզ» հանրային կարծիք վայելած են ու կը վայելեն տակաւին:

Այսօր սակայն բազմացած են ազդեցութիւն բանեցնողները, որոնց պարտադրանքները յաճախ ծածուկ են, անզգալի, քաղցրօրէն փոխանցուած. օրինակ, ծխախոտի պահանջը, որ որպէս թէ անգերազանցելի վայելք մըն է, որ տարիներով, տասնամեակներով քարոզուած է արտադրիչ ընկերութիւններուն կողմէ, գեղանի կիներու նկարներով զարդարուն ազդերով, եւ հանրային կարծիքը դարձած է ի նպաստ ծխելուն՝ հակառակ առողջապահական բոլոր նախազգուշացումներուն: Աստուծոյ ձայնո՞վ է եղած այդ, թէ՞ արտադրիչներու հարստացման շահազգուցութիւններով:

Նոյնն է պարագան շուկայի բոլոր արտադրանքներուն, յատկապէս պերճանքներու պարագային, որոնք կը ստեղծեն պահանջը չզրկուելու այդ պերճանքներէն՝ հսկայ բնակարաններէ, ծախսալից ճամբորդութիւններէ,

ճոխ խնջոյքներէ ու տօնախմբութիւններէ եւ այլ շքեղ հաճոյքներէ: Եւ մարդիկ կը ստիպուին աւելի ու աւելի աշխատիլ, որպէսզի ձեռք ձգեն նիւթական միջոցները, կամ կը դիմեն ապօրինի միջոցներու, գողութեան, նոյնիսկ սպանութիւններու՝ այդ նպատակով: Vox Dei?

Այդ բոլորին հետեւանքով ալ կը նահանջեն կրթութիւնը, ընդհանուր զարգացումը, հարցերը քննական աչքով դիտելու ունակութիւնը, նոյնիսկ ինքնութեան գիտակցութիւնը: Արդիւնքը՝ հանրային կարծիքը կը հիմնուի անտեղեակութեան վրայ, տգիտութեա՛ն վրայ. անձնական նպատակներու եւ նախասիրութիւններու մղումով՝ փոխանակ հաւաքական բարօրութեան հետապնդումի: Հանրային կարծիք, ի՞նչ հանրային կարծիք:

Փակագիրծի մէջ կ'արժէ այստեղ յիշել, որ ԺԹ. դարու վերջաւորութեան, երբ հայ յեղափոխական շարժումը կը կազմակերպուէր, ստրկութեան մէջ դարերով ապրած հայ ժողովուրդը կ'ընդդիմանար այդ շարժումին՝ նախընտրելով շարունակել ապրիլ ամենէն անմարդկային պայմաններու մէջ, քան թէ գէնք վերցնել ու պաշտպանել ինքզինք: Այսօր ալ նոյնը չէ՞ որեւէ երկրի մէջ, երբ ընդհանրութեան կարիքներուն համար մատ չեն ուզեր շարժել, եթէ իրենց անձնական կարիքները չափով մը գոհացում կը ստանան:

Գալով հարցախոյզերուն, որոնք որպէս թէ ժողովուրդի տեսակէտերը կը փորձեն ի մի բերել ու «հասարակաց տեսակէտ» մը մատուցել, անոնք ալ միջոց մը չեն միթէ այդ տեսակէտը ձեւաւորելու, թէկուզ փոքրամասնութեան փոքրամասնութիւնը հանդիսանան հարցախուզողները:

Չմոռնանք. այսօր հաղորդակցութեան գլխաւոր սպասարկութիւնները, — գրաւոր, բանաւոր թէ պատկերաւոր, — սակաւաթիւ մեծ դրամատէրերու ձեռքն են, ու անոնց միջոցաւ է, որ «կը զարգանայ» հանրային կարծիքը:

Չմոռնանք տակաւին մէկ այլ պարագայ, որ առկայութիւնն է առցանց հարթակներու, — նոյնպէս մեծագոյն դրամատէրերու սեփականութիւնը, — որոնց վրայ ամեն տեսակ «կարծիք» կրնայ տարածուիլ, ամեն տեսակ սուտ՝ բարեկամի թէ թշնամիի կողմէ: Եւ մենք՝ որպէս այդ հարթակներուն հետեւողներ, պատրաստ ենք ընկալելու, «կլլելու» այդ սուտերը, անոնց համաձայն դառնալու եւ գործադրելու անոնց հրահանգները, մանաւանդ գնելու անոնց ապրանքները՝ ձեւ տալով այդ հանրային կարծիք ըսուածին:

Աւելցնեմ, որ վաղը նաեւ արուեստական բանակաւորութիւնը իր այլազան կանոնաշարերով (algorithms) պիտի ըլլայ հայթայթողը այդ սուտ եւ իրաւին, ձեւաւորողը՝ «ժողովուրդի ձայնին», առանց իսկ մեզի հարցնելու: Ու մենք պիտի հաւատանք, թէ մեր կարծիքն է, որ կ'արտայայտուի: Ուղեղալուացքո՞վ ստեղծուած կարծիքը:

Գուցէ ձայն բազմաց, բայց երբե՛ք ձայնն Աստուծոյ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Սիւսէր կը հովանաւորեն Ա. եւ Ա. Յովիկ եւ Արլիսա ՄիլիանՅեանս եւ զաւակուել



WWW.CENTREARMENIE.COM

Պիտի լուսանկարեմ տուն դարձի ճանապարհը.

Անի Մանկասարեան

Չորս պատերազմ... շրջափակում... հայրենագրկում.... բռնագաղթի դաժան ճանապարհ... նոր կեանք... արարում... եւ տուն դարձի հաւատք...

Այս է գրուցակիցիս՝ արցախցի լրագրող Անի Մանկասարեանի անցած կեանքի ուղին, գոր ամփոփած է իր օրագրութեան մէջ եւ յետագային զայն վերածած երկրագնաց գիրքի՝ վերնագրելով «Անիի նոթատետրը», «Ani's Diary»:


Հեղինակը գիրքի ենթավերնագրով կը նշէ, որ «պատերազմը հնարաւոր չէ յօրինել»... Այս տողին մէջ խտացուած է «Անիի նոթատետրը» գիրքին մեծագոյն արժէքը...

Անին իր օրագրութեամբ պատերազմը չի նկարագրեր կամ պատմեր յօրինուած նախադասութիւններով ու սրտանմալի բառերով, այլ՝ ընթերցողի ձեռքէն բռնած, գինի իր հետ կը տանի Արցախ եւ կ'ապրեցնէ պատերազմը՝ կուռ ու անկեղծ նախադասութիւններով, առանց աւելորդ դաբանութիւններու եւ շատ բան ըսող մանրութիւններով: Ան երբեք ընթերցողը կ'ապրեցնէ պատերազմի կամ շրջափակման մէջ ապրած երեխայի հոգեվիճակով, երբեք ալ՝ մօր, հօր, դրացիի, զինուորի ծնողի կամ տարեցի կեանքով... երբեք մեզ կը տանի՝ դպրոց, տուն, փողոց, աշխատատեղ, խանութ... Համեմատականներ կ'ընէ իր մանկութեան եւ իր գաւազանի ապրած պատերազմներուն միջեւ... Աննկարագրելի տառապանքի մէջ անպայման կը տեսնէ նաեւ գեղեցիկը՝ ինչպէս ծաղկած բալենին, յուսադրողը՝ այդ պայմաններուն մէջ ծնած բազում երեխաներու աւետիսը եւ կը յորդորէ ապրեցնել երեխաները. «...երեխաներին պէտք է գոյն նուիրել»:

- Արցախի կորուստին ցաւը մնայուն է իւրաքանչիւր գտարիւն հայու, առաւել եւս՝ արցախցիի համար: Այնուամենայնիւ, առանց Արցախի արցախցիին ի՞նչ հոգեվիճակի մէջ է այսօր...

- Ժամանակը այնքան ալ զօրեղ չէ այս մեծ ցաւը մեղմացնելու համար, սակայն միշտ վերադարձի հաւատք ունենալը պարելու յոյս կը ներշնչէ եւ կամքի ուժ կու տայ,- կ'ընէ գրուցակիցս եւ կը շարունակէ,- այդ ցաւը երբեք չի մեղմանար, որովհետեւ մենք պիտի վերադառնանք: Կենցաղային դժուարութիւններ, ծանր հոգեվիճակը երթալով աւելի կը ծանրացնէ մեր կեանքը, սակայն երբ հոգիի մէջ կայ վերադարձի յոյսն ու հաւատքը՝ կ'ըսես այսօր ալ միջնեց, այսօր ալ անօթի չմնացինք, այսօր այս գործը ըրինք... վաղն ալ անպայման պիտի վերադառնանք...

- Սովորաբար տառապանքը, մեծ ցաւն ու կորուստը ի զօրու են մարդը չարացնելու, կոտորելու, խեղճացնելու եւ կամ կամքը զօրացնելու, կոփելու եւ պայքարի ուժ տալու. արցախցիին երկրորդ խումբին կը պատկանի, նաեւ արարելու յատկութիւն ունի... ինը ամիս տեսած շրջափակման ընթացքին չյանձնուեցաւ՝ հնարամտութիւններով շարունակ-



կեց ապրիլ ու մնալ իր հողին վրայ... Արցախցիին ինչպէ՞ս «հեռացաւ» Արցախէն...

- Այս անգամ ուրիշ էր, անհնար էր մնալ այնտեղ, ուր թշնամին մէկ օր առաջ գլխատած է հայրդ, եղբայրդ, զաւակդ, չես կրնար գլուխդ հանգիստ դնել բարձին, երբ գիտես, որ մէկ քայլ անդին թշնամին է, իսկ դուռն որեւէ յեռարան չունիս, բոլորովին մինակ ես: 2023 թուականի պատերազմը տարբեր էր այն բանով, որ մենք բոլորովին մինակ էինք, ներքին հաւատք կար, որ կը դիմադրենք, բայց գիտնալով թշնամին ուժը եւ հասկնալով մեր անօգնական ըլլալը, կը թուլնայինք... հոգեպէս ուժեղ էինք, բայց միայնակ հզօր զէնքերու դէմ դիմադրելն անիմաստ էր...

Օրերով թշնամիի սպիտակ հացով լի բեռնատարները կանգնած մնացին Ասկերանի սահմանէն այն կողմ, իսկ սահմանէն այս կողմ բոլորս սոված էինք, բայց թոյլ չտուինք, որ բեռնատարները ներս մտնեն, մենք սոված՝ հացի դէմ կը պայքարէինք, որովհետեւ Պաքուէն հաց վերցնելը՝ Պաքուին ենթարկուել կը նշանակէր, իսկ մեր պայքարը Արցախի մէջ արժանապատիւ պարելու համար էր... Մենք պատրաստ էինք այդ պայմաններով շարունակել ապրիլ, սեւ հաց ուտել կամ նոյնիսկ չուտել, բայց թշնամիի ձեռքէն հաց չէինք վերցնել՝ եղածով կը բաւարարուէինք ...

Հիմա ալ երանութեամբ կը յիշեմ այդ օրերը, երբ հոսանք չկար, կազ չկար, անձրեւ էր եւ համապատասխան

Սիւսի էջը կը հովանաւորեն Գարիա, Թալիսա եւ Պրօ Մանուսեան



KOMITAS

SALON FUNÉRAIRE



Un environnement chaleureux, accueillant et inclusif.
Un service hors pair, attentionné et bienveillant.

Célébration de la vie | Inhumation | Crémation | Rapatriement International

5180 rue de Salaberry,
Montréal, Québec, H4J 1J3

www.komitas.ca
24/7 (514)-331-0400



կօշիկ ու անձրեւանոց չունէինք, փոխադրամիջոց չկար՝ ոտքով ամէն տեղ կը հասնէինք, սոված հացի հերթի կը կենայինք, կապ չունէր արեւ էր թէ անձրեւ, նոյնիսկ սովամահութեան դէպք գրանցուեցաւ, բայց մէկ է, երանութեամբ կը յիշեմ այդ օրերը, որովհետեւ մենք մեր տան, մեր Հայրենիքին մէջ էինք...

- Արցախցի միշտ լաւատես է, կեանքը սիրող, բոլոր իրավիճակներուն մէջ անկոտորում կամփի ուժ դրսեւորող, ո՞րքէ կը ստանաւ այդ ուժը:

- Արցախի մէջ ծնին ու այլ տեղ ապրելը նոյնը չէ, ինչ ծնին Արցախի մէջ ու մնաս այնտեղ. ապրիս չորս պատերազմներու, ջարդերու եւ տեղահանումներու դժուարութիւնները, երեւի այս տողերով ամէն ինչ պարզ է...

Սեպտեմբեր 19-ի առաւօտեան, երբ կիսասոված երեսնասուներկուսը կը տանէի, տեսայ որ բալենին ծաղկած է... մէկ ճիւղը կանաչ, միւսը չորացած, մէկն ալ ծաղկած... ես այդ մէկը համարեցի նոր կեանքի սկիզբ... ամէն ինչի մասին կը մտածենք լաւատեսօրէն...

- Մանկութիւնդ անցած է պատերազմներով, աղջկադ մանկութիւնը նոյնպէս, ինչո՞վ կը տարբերին այդ երկու սերունդներուն մանկութիւնները...

- Ես հասունացայ պատերազմի մէջ, աղջիկս՝ շրջափակման... Կարելի է ըսել պատմութիւնը կը կրկնուի. 1990-ականներու պատերազմին՝ մայրս ձեռքս բռնած նկուղէ նկուղ կը տանէր, 1920-ականներու պատերազմին՝ ես երեսայիս ձեռքէն բռնած նկուղէ նկուղ կը վազէի... Բայց ես ունեցած եմ երջանիկ մանկութիւն, այո՛ իմ տեսած պատերազմը աւելի դժգոյն էր, մեր գիւղը գետնին հաւասարեցաւ, բայց միայն տասը ամիս Երեւան մնացինք ու յետոյ վերադարձանք տուն... Այնտեղ ունեցայ երջանիկ

մանկութիւն, պատանեկութիւն, գեղեցիկ ընտանիք կազմեցի, երեսներ ունեցայ, բայց իմ երեսաս մէկ տարիէն աւելի է, որ տուն չէ դարձած եւ յայտնի չէ՝ երբ կը դառնայ... Ես համոզուած եմ, որ դարձեալ հնարաւորութիւն պիտի ընձեռուի Արցախ վերադառնալու եւ մենք պիտի վերադառնանք, ես ալ հաստատ կը վերադառնամ...

- Ձեր մանկութիւնը կը համարէք երջանիկ, հակառակ անոր որ պատերազմի դժգոյնութիւններով լի մանկութիւն էր... ինչպիսի՞ն էր այդ «երջանկութիւնը»...

- 1993 թուականի Փետրուար 13-ին ազատագրուեցաւ Մարտակերտի Վաղուհաս գիւղը, որ իմ ծննդավայրս է եւ միակ գիւղը, որ այդ պատերազմին հիմնայատակ աւերուած էր... մէկ կանգուն պատ անգամ չկար... մենք Երեւանէն վերադարձանք աւերակ դարձած գիւղ եւ մէկ տարիէն աւելի մնացինք մեր մեքենայի տնակին մէջ, որ նոյնիսկ դուռ չունէր, հայրս մեր աչքի առջեւ այնտեղ երկու յարկանի տուն կառուցեց, 1994 թուականի Մայիսին, այսինքն մեր վերադառնալէն մէկ տարի ետք, նոր կնքուեցաւ զինադադարը, ամբողջ մէկ տարի լարուած ապրած ենք... հայրս մեծ բեռնատար ունէր, գէնք-զինամթերք կը տանէր զինուորներուն եւ միշտ կ'ըսէր զգօն եղէք, բան մը պատահի, ես ձեզի բեռնատարով կը տանիմ...

Հայրս ճամբուն վրայ տախտակներ շարած էր եւ կը զգուշացնէր անպայման այդ տախտակներուն վրայէն քալենք, որ յանկարծ ականի չհանդիպինք. մեր շուրջը ամէն տեղ ականի հանդիպելու վախ կար... սակայն, մանկութիւնս երջանիկ էր, որովհետեւ մեր տան մէջ էի... գիւղին մէջ հազիւ քսան-քսանհինգ մարդ կար, որոնցմէ վեցը մեր ընտանիքն էր (չորս քոյր ենք): Մեր գիւղի ազատագրումէն ետք հայրական կողմի հարազատները գացին Ռուսաստան, երբեմն կը մտածէի, ինչո՞ւ հայրս մեզի ալ չտարաւ, մենք

Միշտ էլ կը հովանաւորեն Զարեհ եւ Միքիլի Վրոյապետան ի յիշատակ Մեր Մոտրամասեանի

CSN



COLLISION CENTER - CENTRE DE COLLISION

Etablissement Tavoukdjian

6055 Pontgravé, Montreal, Quebec H4K-2E7

Tel : (514) 274-4133

Fax : (514) 904-2313

Email : info@autoralph.com



երեսուն տարի վախով ապրեցանք այդ գիւղին մէջ... Սակայն հիմա կը մտածեմ, եթէ նոյն հնարաւորութիւնը ունենամ, ես ալ նոյնը կ'ընեմ. իմ երեխաներս պէտք է ապրին Արցախի մէջ...

- Ինչպէ՞ս ստեղծուեցաւ ձեր կապը «Հորիզոն»ի հետ:

- 2018 թուականին, Արցախի Հանրային հեռուստատեսութեան «Ողջոյն Արցախ» նախագիծին հաղորդավարն էի, հիւրընկալեցի Արցախին աջակցութեան ձեռք մեկնելու եկած «Հորիզոն»ի խմբագիր Վահագն Գարազաշեանը, անկէ ետք կապը շարունակուեցաւ, ամէն այցին կը տեսնուէինք եւ կը խօսէինք Արցախի մէջ իրականացուցած ծրագրերուն մասին... շրջափակման օրերուն, երբ նոյնիսկ գիտես, որ մարդը որեւէ բանով չի կրնար օգնել քեզի, սակայն կը յիշէ քեզ եւ հաղորդագրութեամբ կը հարցնէ իրավիճակի մասին, արդէն այդ մէկը ուժ կու տար մեզի... Այդպէս կը զգայինք, որ Սփիւռքը մեր կողքին է, գիտէինք, որ հոգեպէս մարդիկ մեզի հետ են եւ հնարաւորութեան պարագային անպայման կը հասնին մեզի:


- Եկէ՛ք պատկերացնենք, որ Արցախը ազատագրուած է եւ պիտի վերադառնաք, ի՞նչ պիտի ըլլայ ձեր առաջին ընելիքը:

- Ես կը լիցքաւորեմ հեռաձայնս եւ ուրախութեամբ կը նկարեմ տուն դարձի ուղին... Գաղթի ճանապարհին հեռախօսս լիցքաւորած էի, որ ամբողջ ճանահարձը նկարեմ, որովհետեւ գիտէի այդ նկարներուն արժէքը, անոնք պահեր էի, որ յետագային պատմութիւն պիտի դառնային, պէտք էր աշխարհին ցոյց տալ այդ բոլորը, բայց միշտ չէր, որ կը համրձակէի հանել հեռաձայնս... այնքան ողբերգական դէպքեր ապրեցայ, բայց այդ պահուն կը փորձէի մարդոց ֆիզիքապէս օգնել, ոչ թէ հեռաձայնս վերցնել ու նկարել, թէ ինչպէս մարդը սովէն կ'ուշաթափի, կամ ցուրտ եղանակէն կը սառի...

Այս անգամ ես կը նկարեմ ուրախ զգացումներով տուն գացող մարդիկ...

Այս անգամ առանց տատամսելու, առանց ամօթի զգացում ապրելու կ'անմահացնեմ ուրախութեան պահերը եւ այդ լուսանկարներով ու մեկնաբանութիւններով կը հրապարակեմ նոր գիրք մը՝ «Վերադարձ Արցախ»...

Նայիրի Մկրտիչեան



Այս անգամ ես կը նկարեմ ուրախ զգացումներով տուն գացող մարդիկ...
Այս անգամ առանց տատամսելու, առանց ամօթի զգացում ապրելու կ'անմահացնեմ ուրախութեան պահերը եւ այդ լուսանկարներով ու մեկնաբանութիւններով կը հրապարակեմ նոր գիրք մը՝ «Վերադարձ Արցախ»...

Այս էջը կը հովանաւորեն Ս. եւ Ս. Մայք եւ Բանի Թիրփլեան



Pâtisserie Samadi

All kinds of fine and artisanal sweet and salty pastries, baklavas, maamouls, knefeh, petits-fours, cakes, ice cream, salted sticks, croissant and small bites, only to name a few. Our first priority is to produce fresh pastries every day. They are carefully hand-made with premium natural products.



We Have Local and International Delivery!

NEW LOCATION !

📍 5995 Boul Gouin O,
Montréal, QC,
H4J 2P8

☎ +1 (514) 315-9572

📍 595 Boulevard Cote Vertu O,
Saint-Laurent, QC,
H4L 1X8

☎ +1 (514) 507-9573

📍 **2100 Boul. Le Corbusier,
Laval, QC, H7S 2C9**

☎ +1 (450) 368-8855

«Պիտի հաւատանք, որ այս երկիրը կարելի է վերականգնել, որ աներակներու փոշին կարելի է թօթափել, որ փլատակները կարելի է վերակառուցել եւ քանդուածները վերաշինել»։ Սուրիոյ խորհրդարանի պատգամաւոր Մարիա Գարրիէլեան

Սոյն հարցազրոյցը կատարուած է 27 Նոյեմբերին սկիզբ առած Սուրիոյ ռազմաֆաղափական վերջին իրադարձութիւններու անմիջական նախօրեակին: Զայն կը հրատարկենք որպէս «Հորիզոն»-ի արխիւային հարցազրոյց

Փաստարան, հայերէնի դասատու, Հալէպի Համագգայինի Հայագիտական հիմնարկի դասախօս, Հալէպի Պետական Համալսարանի դասախօս եւ Հայաստանի Հանրային հեռուստակայանի Սուրիոյ քրթակից Մարիա Գարրիէլեան անդամ է Հալէպի Փաստարաններու Արհ. Միութեան, 2018-ին ընտրուած է Հալէպի նահանգային խորհուրդի անդամ, 2012-2018 եղած է Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինի բանբեր, եղած է ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական խորհուրդի անդամ, իսկ 16 Յուլիս 2024-ին ընտրուեցաւ Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխան:



ինչ որ առաւել ծանր պարտաւորութիւն դրաւ թեկնածուի ուսերուն:

Հ.- Սուրիոյ խորհրդարանի օրէնսդրական 4-րդ նստաշրջանին որպէս հայ ազգի միասնական թեկնածու, դուք ընտրուեցաք խորհրդարանի երեսփոխան. Սուրիոյ հայ գաղութին առումով ինչպէ՞ս կը մեկնաբանէք «միասնական թեկնածու» հասկացութիւնը:

Մ.Գ.- Հալէպահայ Համայնքէն ներս, հայկական սփիւռքի համարեա՛ր բոլոր համայնքներուն նման, կը գործեն հայկական երեք յարանուանութիւններն ու կազմակերպութիւնները, ազգային, կրթական, մշակութային, երիտասարդական, մարզական, կրօնական, բարեսիրական եւ այլ միութիւններ ու հաստատութիւններ: Միասնական թեկնածուն համայնքը ներկայացնող վերոնշեալ բոլոր կողմերու ներկայացուցիչն էր:

Համայնքը իր այս կեցուածքով միասնականութեան լաւագոյն օրինակը դրսեւորեց:

Խորհրդարանական ընտրութիւններուն հայ համայնքի մասնակցութեան պատկերը խրախուսիչ էր,

Հ.- Ինչպիսի՞ մարտահրաւերներ կը դիմագրաւէ այսօր Սուրիոյ Խորհրդարանի յատկապէս հայ երեսփոխանը:

Մ.Գ.- Հայ երեսփոխանը, յար եւ նման բոլոր երեսփոխաններուն, բազմաթիւ եւ բազմաբնոյթ մարտահրաւերներ կը դիմադրաւէ առնչուած երկրի տարբեր բնագաւառներու իրավիճակի բարելաւման եւ քաղաքացիներուն ընդհանրապէս ու սուրիահայ յոյժեան մասնաւորապէս ակնկալիքները բաւարարելու ուղղութեամբ:

Անցնող տասներեք տարիներէն իւրաքանչիւրը իր խնդիրներն ու պայմանները ունեցաւ: Պատերազմի եւ յետպատերազմի տարիներու մարտահրաւերները նոյնիսկ թուարկելի

կրնան չըլլալ: Երկրի բոլոր բնագաւառներուն մէջ իրավիճակի բարելաւման աշխատանքներու ծաւալումը բոլորիս արդար պահանջն է: Պահանջին եւ անոր իրագործման կարելիութիւններուն միջեւ հեռաւորութիւնը ցարդ ընդարձակ է եւ այստեղ կը կայանայ երեսփոխաններուն գլխաւոր մարտահրաւերը: Երեսփոխանը ծանօթանալով իրավիճակի մանրամասնութիւններուն կը համոզուի, որ փոփոխութիւնները ժամանակի կը կարօտին, սակայն այս պատկերը հասարակութեան սեփականութիւնը դարձնելը դժուարութիւններ կը յարուցանէ: Այսուհանդերձ պատկերը մթազնած չէ, արդէն տեսանելի սկսած են դառնալ երկրի կազդուրման համար ի գործ դրուած ջանքերու արդիւնքները: Այս իմաստով նորանշանակ կառավարութեան ներկայացուցած նախագիծը, որ խորհրդարանի կողմէ վաւերացուեցաւ, իրատեսական յուսադրութեան մը կը մղէ:

Հ.- Որպէս նորընտիր երեսփոխան, ըստ ձեզի ինչպէ՞ս կարելի է սատարել պատերազմական երկար տարիներ ապրած եւ նոր կազդուրուող այս երկրին վերականգնման:

Մ.Գ.- Միայն ու միայն աշխատանքով: Շատ երկիրներ դիմադրաւած են ա՛յն բոլոր ահաւորութիւնները, որ մեր երկիրը դիմակայեց: Առաւել եւս Սուրիան տիեզերական պատերազմի ենթարկուեցաւ: Սուրիոյ դէմ մղուած պատերազմի պատմութեան, ընթացքին ու աւարտին ծանօթներուն համար, «տիեզերական պատերազմ» արտայայտութիւնը երբեք չափազանցութիւն կարելի չէ համարել: Այսուհանդերձ յոյսով ու աշխատանքով անկարելիութիւններու տոկոսը հետգ-

Այս էջը կը հովանաւորեն Ս. եւ Ա. Թորոս եւ Անի Մայրիկեան



Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեան
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը
և Թեմի բոլոր եկեղեցիները՝

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Նշան Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Գէորգ Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Պօղոս Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Վարդան Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Ստեփանոս Հայց. Առաքելական Եկեղեցի

Կը շնորհաւորեն Գանատահայութիւնը, մաղթելով՝
որ յառաջիկայ 2025 տարին աշխարհի համար ըլլայ
խաղաղութեան և մարդկութեան համար ողջամտութեան տարի:

հետև կը նուազի:

Երկրի վերականգնման համար առարկայական բարեփոխումներ իրականացնելու տարողություններ կարելու են ենթակայական բարեկարգումները: Այստեղ մեծ տեղ վերապահում է քաղաքացիներու գիտակցութեան մակարդակի բարձրացման: Պիտի հաւատանք, որ այս երկիրը կարելի է վերականգնել, որ աւերակներու փոշին կարելի է թօթափել, որ փլատակները կարելի է վերակառուցել եւ քանդուածները վերաշինել: Ի վերջոյ պիտի հաւատանք, որ կարելի է ապրիլ նախապատերազմեան Սուրիոյ փառքերն ու բարիքները: Այն սերունդը, որ ապրած է փառքի այդ օրերը կը հաւատայ վերականգնումին, սակայն այն երիտասարդները, որ երբ աչքերնին կեանքին բացին միայն պատերազմ, անգործութիւն, կենսական կարիքներու սահմանափակում, չգոյութիւն, սղութիւն եւ սակաւութիւն տեսան, ապա անոնց համոզելու դժուարութիւն ունինք: Այս երիտասարդները մինչեւ շօշափելի բարեկարգումներ չտեսնեն պիտի չհամոզուին: Արդ, երկրի օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնները համատեղ, համախորհուրդ եւ համաբազուկ պիտի գործեն հանգրուանայինօրէն բարելաւումներ իրականացնելու համար:

Հ.- Սուրիոյ մեր հայ գաղութին Ինչպիսի՞ ծառայութիւններ մատուցելու հնարաւորութիւն ունի հայ երեսփոխանը:

Մ.Գ.- Սուրիահայ համայնքը ազգային, կրթական, մշակութային, տնտեսական, մարզական, բարեսիրական բնագաւառներուն, նոյնիսկ դատական համակարգի անձնական իրաւանց օրէնքին մէջ, գործելու լայն

ազատութիւն կը վայելէ, հետեւաբար ընդգծուած բոլոր մարզերուն մէջ անկարիք կ'ունենայ օրէնսդրական բարեփոխումներու, պետական այրերու հետ համագործակցութեան օրակարգերով յարաբերութիւններ մշակելու եւ նմանօրինակ այլ աշխատանքներու: Հայ երեսփոխանը ծանօթ ըլլալով սուրիահայ համայնքի դրուածքին, գործունէութեան ու ծրագրերներուն, միաժամանակ երկրի օրէնքներուն ու անոնց գործադրութեան ընթացակարգին ապա այս ուղղութեամբ ծառայութիւններ կ'ընայ մատուցել:

Հ.- Վերջապէս, մեր հայրենիքին հետ խորհրդարանական կապերու ամրապնդման առումով, կորուսեալ Արցախի հարցով եւ Հայ Դատի սատարման ի խնդիր ինչպիսի՞ ծրագրեր կը նախատեսուէ՞ք մեր չորս տարուան ծառայութեան ընթացքին:

Մ.Գ.- Հայաստանի եւ Սուրիոյ խորհրդարանական յարաբերութիւններու զարգացման համար խորհրդարանէն ներս կը գործէ Սուրիա-Հայաստան բարեկամական յարաբերութեան յանձնաժողովը: Այս յանձնաժողովին ճամբով կը մշակուին համագործակցական ծրագրեր: Իսկ ինչ կը վերաբերի Արցախի հարցին կամ Հայ Դատին ապա իրաւական եւ քարոզչական հարթակներու վրայ կարելի է գործել: Սուրիան ականատես վկան է ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան, այլեւ տարագրութեան ուղիներուն, հիւղաւաններու պատմութեան, հայու տարտղնուած բեկորներու միացման, անշնչացած մարմնի վերակենդանացման, ազգային ոգիի պահպանման, հայեցի դաստիարակութեան, հայ հաւատի ու դպրութեան կենսունակութեան: Սուրիահայութիւնը Սուրիոյ

բնակչութեան մէջ շատ ջնջին տոկոս մը կազմէ, սակայն չէք գտներ սուրիացի արաբ մը, որ չէ լսած հայու մասին, չունի հայ ընկեր կամ բարեկամ, դրացի կամ դասընկեր: Չէք գտներ արաբ մը, որ դրուատիքով չ'արտայայտուի հայու մասին: Չէք գտներ արաբ մը, որ հայուն գովքը չի հիւսեր:

Սուրիան որպէս մարդկային իրաւունքներու պաշտպանութեան մայրաքաղաք, որպէս աշխարհի հնագոյն մշակոյթներու պահպանման ոստան, որպէս երկնային կրօններու ապաստան միշտ ալ եղած է իրաւատիրոջ կողքին, հետեւաբար Հայ Դատը բացառութիւն չի կազմեր այստեղ, Սուրիան խօսքով ու գործով եղած է եւ պիտի շարունակէ մնալ Հայ Դատի կողքին եւ նպաստել արդարութեան վերականգնման:

Նշեմք, որ Սուրիոյ Խորհրդարանի հիմնադրման (1928) առաջին իսկ օրէն ունեցած ենք հայ երեսփոխաններ, իւրաքանչիւր շրջանին ունենալով 3-4 պատգամաւորներ (վերջին տարիներուն միայն ունենալով 1-2 պատգամաւորներ): Ընդհանուր առմամբ 1928-2024 տարիներուն ընթացքին Սուրիոյ Խորհրդարանի հայ ներկայացուցիչներուն թիւը կը կազմէ 25 պատգամաւոր, որոնցմէ եղած են Մուսա Լեբան հերոսամարտի զինուորական ղեկավար Մովսէս Տէր Գալուստեան եւ հասարակական ու քաղաքական գործիչ Հրաչ Փափագեան, ինչպէս նաեւ այժմ հայրենիքի մէջ Սուրիոյ դեսպան դոկտ. Նորա Արիսեան:

Հարցազրոյցը վարեց Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Սուրիան ականատես վկան է ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան, այլեւ տարագրութեան ուղիներուն, հիւղաւաններու պատմութեան, հայու տարտղնուած բեկորներու միացման, անշնչացած մարմնի վերակենդանացման, ազգային ոգիի պահպանման, հայեցի դաստիարակութեան, հայ հաւատի ու դպրութեան կենսունակութեան:

Միշտ էք կը հովանաւորեն Սիրս, Մայրիքի, Բաճի եւ Աւուակ Գրքիքիքեան



BMW WEST ISLAND

**ICONIC DESIGN, ADMIRER BY ALL.
THE NEW BMW 4 SERIES COUPÉ.**



Vahan Vartanian
General Sales Manager

vahan@bmwwestisland.ca

BMW WEST ISLAND
2000 Transcanadienne Sud
Dorval, QC H9P 2N4
(514) 914-7777
www.bmwwestisland.com

Հացի գիւղը՝ Արցախի մշակութային գանձարանը, որ այժմ բռնագրաւուած է



Հացի գիւղը, որը դարեր շարունակ եղել է Արցախի Մարտունու շրջանի հայ ժողովրդի կենսունակ կեդրոններից մէկը, այսօր կանգնած է իր պատմական ճանապարհի ամենածանր փորձութեան առաջ. այն բռնագրաւուած է Ատրպէյճանի կողմից, իսկ գիւղի բնիկ հայերը ստիպուած են եղել լքել իրենց տունը:

Հացին տեղակայուած է Բովուրխանի լեռնազանգուածից դէպի Մարտունի ձգուող լեռնաճիւղի արեւելահայեաց լանջին, դիրքը գեղատեսիլ ու լեռնահովտային է, կլիման, օդը եւ ջուրը առողջարար են:

Հացին Արցախ աշխարհի հնագոյն եւ պատմական նշանաւոր գիւղերից է, որն ունի 2000 տարուց աւել պատմութիւն:

Տարբեր ժամանակաշրջաններում Հացին երեք անգամ փոխել է իր բնակատեղին, առաջին բնակատեղին կոչւում էր՝ Դրրդեն Վըղ, երկրորդը՝ Խաչին Վըղ եւ վերջին դիրքը՝ Պըտկեսա Պերք (Պըտկեսա Պերք լեռան ստորոտում գտնուելու համար է անուանումն առաջացել), որը ընտրել է գիւղը հիմնել են Ղազի պապն ու Հլեմա պապը:

Գիւղի անուանումը հետաքրքրական ստուգաբանութիւն ունի:

Քրիստոսից առաջ Արցախում պաշտամունքի առար-

կաներ են հանդիսացել բուսատեսակները՝ հացին, բոխին, սօսին եւ դրա հետ կապուած Արցախում առաջացել են մի շարք տեղանուններ: Բացի այդ կայ նաեւ անուան երկրորդ ստուգաբանութիւն, ըստ որի, հացեցիները լինելով շատ հիւրասէր եւ հիւրընկալ մարդիկ՝ անուանուել է Հացի:

Ղ. Աղայեանի «Անահիտ» հեքիաթում գիւղը նշուած է Հացիկ անունով: Այս բնակավայրի հետ է կապուած Աղուանից թագաւոր՝ Վաչական Բարեպաշտի (5-րդ դ.) ու նոյն գիւղի նախրապանի աղջկայ՝ Անահիտի հանդիպման սիրային պատմութիւնը, որի հիման վրայ էլ գրուել է «Անահիտ» հեքիաթը:

Այն աղբիւրը, որտեղ տեղի է ունեցել նրանց հանդիպումը մինչեւ այժմ էլ կոչւում է Անահիտի աղբիւր: Այն Արցախի առաւել նշանաւոր պատմական յուշարձաններից է: Աղբիւրի գլխավերեւում կայ մի շքեղ, քանդակազարդ խաչքար: Իսկ խաչքարի մեծ խաչի թեւերի տակ քանդակուած են երկու փոքր խաչքարեր:

Դարերի ընթացքում Հացին եղել է Արցախի հարուստ մշակոյթի կեդրոններից՝ պահելով իր իւրայատուկ ականդոյթները եւ յուշարձանները: Այն վկայութիւն է հայկական հարուստ մշակութային ժառանգութեան, որն այսօր վտանգուած է:

Այս էջը կը հովանաւորեն Էջիպայէր, Կարօ եւ Պաֆֆի Օւանտան



Մինչ կը մօտենանք Նոր Տարուան, կը փոխանցենք մեր շնորհաւորանքը ձեզմէ իւրաքանչիւրին: Ընթացիկ տարին եղաւ մարտահրաւերներու եւ իրագործումներու տարի մը, իսկ ձեր նուիրումն ու կարեկցութիւնը եղան փարոսներ՝ ծանր եւ դժուարին ժամանակներու մէջ: Երբ դժուարութիւններու դէմ յանդիման գտնուեցանք, դուք օժանդակութեան ձեռք երկարեցիք՝ կարիքաւորներուն յոյս եւ քաջալերանք ցոյց տալով:

ՀՕՄԻ մեծ ընտանիքը շնորհակալ է բոլոր անոնց, որոնք կը մարմնաւորեն ծառայութեան իսկական ոգին: Ձեր յանձնառութիւնը, ուժն ու միասնականութիւնը եղան ներշնչման աղբիւրներ եւ մեր կազմակերպութիւնը ուժեղ պահեցին: Մենք շնորհակալ ենք մեր զօրակիցներուն՝ իրենց անվերապահ աջակցութեան եւ հաւատքին համար, հանդէպ մեր առաքելութեան: Իւրաքանչիւր նուիրատուութիւն մեծ եւ իմաստալից ազդեցութիւն ձգեց բազմաթիւ անձերու վրայ՝ անգամ մը եւս փաստելով գթութեան եւ առատաձեռնութեան անսահման ուժը:

Մինչ կը պատրաստուինք մեր կազմակերպութեան 115 ամեակին, կը գնահատենք կտակը մեր հիմնադիր սերունդին, որուն արիութիւնն եւ տեսիլքը ընթացք տուաւ հարիւր տարի առաջ սկսուած մեր երթին: Խորապէս կը հաւատանք, որ ապագային իրերայաջորդ սերունդները մեր գործը պիտի շարունակեն, յառաջ տանելով միասնականութեան արժէքները, կարեկցութիւնն ու կամաւոր աշխատանքը, որ մեր առաքելութեան հիմքն է:

Նոր Տարին կը դիմաւորենք տոկունութեամբ եւ դժուարութիւնը յաղթահարելու խոր յանձնառութեամբ: Խորապէս կը հաւատանք, որ միասնաբար կրնանք դիմագրաւել որեւէ մարտահրաւեր եւ նոյնիսկ կրնանք նոր գագաթներ նուաճել:

Խոր գնահատանքով՝ ձեզի կը մաղթենք ուրախ Սուրբ Ծնունդ եւ խաղաղութեամբ, առողջութեամբ եւ յոյսով պարուրուած Նոր Տարի մը:

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւն

Գիւղի տարածքում պահպանուել են բազմաթիւ ճարտարապետական կոթողներ: Առաւել մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Բռի Եղջի վանական համալիրը, այն յիշատակում է 13-րդ դարից, սակայն ժողովրդի մէջ պահպանուած աւանդութիւն ու վաղ ժամանակաշրջանի բեկորները վկայում են, որ Բռի Եղջին շատ աւելի հին պատմութիւն ունի. այն եղել է հեթանոսական կառոյց, որի վրայ Վաչական Բարեպաշտ թագաւորը եկեղեցի է կառուցել, հետագայում արշաւանքների ժամանակ այդ եկեղեցին աւերուել է, եւ արդէն 13-րդ դարում վերակառուցուել է՝ Աղուանից Կաթողիկոս Ստեփանոսի, նրա եղբայր Ներսէս Եպիսկոպո-

հայ մանուկներին են նուիրել հացեցի անգաւակ ամուսիններ՝ Զիւանշիր ու Գիւլբահար Ղազիեանները: Դպրոցի շէնքի պատին վիմափորուած են հետեւեալ սրտառուէ խօսքերը.

Հայ մանուկներին.
Թող ձեր բերանում հնչեն դարեդար,
Սահակ, Մեսրոպ մայրեցի բարբառ,
Սիրեցէ՛ք բարին, լոյսը, գիտութիւն,
Որ տանում են մեզ դէպի փրկութիւն...
Նուիրեցին Հացի գիւղին Զիւանշիր եւ Գիւլբահար
Գազիեանցներ, 1911 թուական.



սի, Խաչենիկ Անեցի եւ Շահէն ճարտարապետների կողմից: Վանքային համալիրի տարածքով մէկ սփռուած են 5-7-րդ դարերի հիմնապատեր, զարդանախշերի բեկորներ, խոյակներ: Տեղացիները վկայում են նաեւ, որ 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը Արցախ այցելութեան ժամանակ եղել է նաեւ Բռի Եղջիում: Բռի Եղջու համալիրը բաղկացած է 4 եկեղեցիներից, գաւթից, երեք որմնափակ խաչքարերից, մատուռից, օժանդակ շինութիւններից եւ ընդարձակ գերեզմանատնից: Համալիրի տարածքում պահպանուել են նաեւ կամարակապ խաչքարեր, որոնց տեղացիները անուանում են՝ ձօխտ Տեմ, որոնք մետաքսի ճանապարհի ուղեւորներն էին համարում: Այս նոյն ճանապարհով եկել եւ անցել են իրենց զօրքերով Մխիթար Սպարապետը, Դրաստամատ Կանայեանը: Գիւղի կեդրոնական հատուածում վեր է խոյանում 113 տարին բոլորած դպրոցի երկարկանի քարէ շէնքը, որը

Եզակի դպրոցներից է, որի բակի յետնամասում գտնուում է Ս. Աստուածածին եկեղեցին: Այն կառուցուել է 19-րդ դարում՝ Յարութիւն եւ Հուրի Մուսայէլեանների կողմից, որոնք երեխայ ունենալու նպատակով, իրենց միջոցներով հիմնել են այն եւ նուիրաբերել գիւղին: Տարբեր ժամանակներում հացեցիները ակտիւ մասնակցութիւն են ունեցել հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին: Մեծ հայրենականի տարիներին պատերազմ գորակոչուած 157 հացեցիներից 66-ը զոհուեցին օտար ամբարշտուածներին: Նրանց յիշատակին կառուցուած յուշակոթողի մօտ են ամփոփուած արցախեան առաջին զոյամարտում նահատակուած գիւղի հինգ զաւակների աճիւնները՝ Ռաֆիկ Մուսայէլեանի, Ռոպրթ Աղաբեկեանի, Կարէն Մուսայէլեանի, Դաւիթ Սարգսեանի, Կամօ Ղահրամանեանի: Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում են հանգչում ծնունդով հացեցի՝ Վլադիմիր Մուսայէլեանը, Արթուր Աղաբեկեանը եւ դիպուկահար, մարտական խաչ 2-րդ աստիճանի չքանչանակիր Մարգարիտա Սարգսեանը: 2020 թուականի արցախեան 44-օրեայ պատերազմում Հացի գիւղի զաւակներ՝ Ապաւէն Բարսեղեանը, Միքայէլ Յովսէփեանը եւ Արմէն Յարութիւնեանը հերոսաբար նահատակուեցին հայրենիքի համար մղուող մարտում:

Այսօր հացեցի սփռուած է, իսկ Հացին՝ դատարկ... 2023 թուականի Սեպտեմբերից յետոյ Հացին ամբողջութեամբ դատարկուեց հայ բնակչութիւնից: Ատրպէյճանի վերահսկողութեան տակ մնալը վտանգի տակ է դրել ոչ միայն գիւղի մշակութային ժառանգութիւնը, այլեւ նրա պատմական յիշողութիւնը: Գիւղի պատմութիւնը եւ դրա հայկական բնոյթը չպէտք է մոռացուեն, նոյնիսկ այսօր՝ այն կորցնելու ծանր պայմաններում: 2022 թուականի Դեկտեմբերի 12-ից սկսած, երբ Արցախը յայտնուել էր շրջափակման մէջ, կեանքը լիովին դժուարացել էր Արցախում ապրող հայերի համար: Իմ յիշողութեան մէջ այդ ամիսները անջնջլիօրէն դաջուել են. շրջափակումը իր ցաւոտ եւ դառը հետքերի հետ մէկտեղ տուեց նաեւ խորը դաստիարակչական դասեր՝ աւելի մեծ սէր դէպի կեանքը, մարդկանց, հայրենիքին, ուսեիքին եւ ամէն ինչին: Հացի գիւղը շրջափակման օրերին համախմբուել էր մէկ ընտանիքի պէս: Բնակիչները օգնում եւ հոգ էին տանում միմեանց, մարդիկ իրար ձեռք էին մեկնում, հաց էին կիսում, կարեկցում: Քաղաքում ապրող հարազատների համար ուսեիք հասցնում:

Սիւսէլ Կր Խովսէպուրեան Ս. եւ Ս. Մազարէք եւ Լուրի Մազարեան



Խանութները, դեղատները դատարկուում էին զնալով, եւ ոչինչ արդէն հնարաւոր չէր գնել: Մարդիկ իրենց պայմաններում ստեղծում էին այն ամէնը ինչը առաջնային էր պարելու համար:

Յիշում եմ, երբ ես ու ընկերուհիս թէյ պատրաստելու համար գնացինք մեր դաշտերից խոտաբոյս հաւաքելու, իսկ երբ լրիւութեամբ աղի պաշարը վերջացել էր՝ աւազից աղ էինք եփում եւ զտում, ալիւրը շատ ինսյոյղաբար էինք օգտագործում, որ չվերջանար, ամրան ամիսներին բանջարեղէն էինք մարինացնում, միրգ չորացնում, որպէսզի ձմրանը ուտելու պաշար ունենայինք: Մենք ամէն կերպ դիմադրում էինք բոլոր դժուարութիւնները՝ յանուն մեր հարազատ ծննդավայրում ապրելու:

1988 թուականին, երբ սկսեցին հայ-ատրպէյճանական ընդհարումները՝ ցոյցեր, քաջջուկներ, կոչեր, Հացի գիւղի բնակիչներ՝ Սօս Բարսեղեանը, Արա Գասպարեանը, Ալեքսանդր Մուսայէլեանը գաղտնի ժողովներ սկսեցին կազմակերպել, որին միացան նաեւ այլ գիւղացիներ: Առաջին հերթին գործը եղաւ հանրային ունեցուածքի պահպանութիւնը՝ հիմնականում անասնաֆերմաները, որոնք գտնուում էին անմիջապէս սահմանին, այդ ժամանակ ատրպէյճանցիները անասնապահների վրայ էլ էին կրակում, փորձում անասունները գողանալ, ներխուժել տարածք: Այնուհետեւ սկսեցին հերթապահութիւն սահմանել գիւղի մուտքի մօտ: Այդ ընթացքում միաժամանակ մտածում էին նոր գէնքեր հայթայթելու մասին, քանի որ նրանց ունեցածը որսորդական էր միայն: Համագիւղացիներ՝ Վովա Մուսայէլեանը, Վանիկ Գասպարեանը եւ Վիգէն Ասլանեանը գաղտնի կերպով գէնք եւ ինքնաչէն նունակներ էին հասցնում գիւղ, որոնք պահուում էին գաղտնի՝ գետնի տակ

պահպանելով:

Նրանք Կապը միշտ պահում էին հարեւան գիւղերի հետ:

Սկզբում մեր հարեւան գիւղի՝ Աւդուռի տղաների հետ էին հանդիպում անտառներում. Սօսը եւ Աւդուռեցի Ալիտշան հմուտ որսկաններ էին, նրանց միջոցով շրջայցներ էին կատարում, տեղանքն էին ուսումնասիրում, հետագայ անելիքներն էին պլանաւորում:

1990 թուականի վերջերին մեր տանը երգման արտողութիւն եղաւ, մեր գիւղից երեք հոգի, հայրս՝ Արա Գասպարեանը, Սօս Բարսեղեանը, Ալեքսանդր Մուսայէլեանը երգում տուեցին եւ անցան Դաշնակցութեան շարքերը: Անմիջապէս կազմակերպուեց խումբ, որի անունն էր Եղնիկասար: Այնուհետեւ կազմուեց ջոկատ: Սկզբից խմբում երեքն էին, յետոյ եօթ, յետոյ տասնմէկ...

Ի դէպ դեռեւս 1920-ական թուականներին մեր գիւղում շատ դաշնակցականներ կային՝ Ալեքսան Բարսեղեանը, ով նաեւ Դրաստամատ Կանայեանի սուրհանդակն էր, Գրիգորի Մուսայէլեանը, Սանթուր Սարգսեանը եւ շատ շատերը, որոնց անունները ցաւօք սրտի ինձ հասանելի չդարձաւ: Այդ թուականներին գիւղում կար նաեւ Դաշնակցութեան գրասենեակ:

Հացի գիւղը մեզ համար ոչ միայն հայրենի գիւղ է, այլ նաեւ մեր պատմութեան եւ ինքնութեան մի մաս: Չնայած նրա ներկայ իրավիճակին, Հացին կը մնայ հայ ժողովրդի յիշողութեան մէջ՝ որպէս տոկունութեան եւ հաւատարմութեան խորհրդանիշ:

Տիրուհի Գասպարեան

Այս էջը կը հովանաւորեն Ս. և Ս. Գաւնիկ և Գարիսա Ռայրքեան

Արցախում պատմական հետքի ոչնչացում է տեղի ունենում, իսկ միջազգային հանրությունը չի զսպում Ատրպեյճանին. Արմին Է Տիգրանեան

Արմին Է Տիգրանեան մշակութային ժառանգութեան փորձագետ է եւ «Ամբերդ» հետազոտական կեդրոնի հետազոտող: Նրա հետ զրուցել եմք Արցախի հարուստ մշակութային ժառանգութեան մասին, որն Ատրպեյճանը ջանում է վերացնել, իւրացնել, ոչնչացնել...

Հ.- Տիկին Տիգրանեան, Ատրպեյճանն այժմ ի՞նչ գործողութիւններ է իրականացնում Արցախի հայկական մշակութային ժառանգութեան հետ կապուած՝ կեղծ տեղեկութիւններ տարածելու, դրանք աղաւաղելու, ատրպեյճանականացնելու, իւրացնելու ուղղութեամբ:

Ա.Տ.- Պատմական հետքի ոչնչացումն Արցախում տեղի է ունենում երկու հիմնական ուղղութիւններով. մշակութային ժառանգութեան ոչնչացում (Արցախի եկեղեցիների, խաչքարերի, Արցախի անկախութեան շրջանի յուշարձանների, Արցախեան ազատամարտին, Հայոց ցեղասպանութեանն ու Հայրենական պատերազմին նուիրուած յուշարձանների եւ յուշահամալիրների ոչնչացում, պատմական գերեզմանոցներ, ամբողջական թաղամասերի ու գիւղերի ոչնչացում, թանգարանների, հաւաքածոների, մշակութային գործիչների յուշարձանների, կիսանդրիների ոչնչացում եւ այլն) եւ մշակութային ժառանգութեան իւրացում (մշակութային ժառանգութեան աղուանացում, իսլամացում, ատրպեյճանականացում, թիւրքացում, ուղտացում եւ այլն):

Մշակութային ժառանգութեան ֆիզիքական ոչնչացումն Ատրպեյճանի կողմից կիրառուող քաղաքականութիւն է, որով փորձ է արւում հիմնայատակ ոչնչացնել կամ մասնակիօրէն վնասել Արցախի հայկական ժառանգութիւնը:

Արցախի եկեղեցիների ոչնչացմամբ Ատրպեյճանը վնասում է արցախահայերի հոգեւոր կապն այդ արժէքների հետ, զրկում ծէսերի եւ աղօթքների կարեւոր տարածքներից՝ խոչընդոտելով ծիսական գործունէութիւն ծաւալելու՝ նրանց հետագայ կարողութեանը: Այդպիսի ժառանգութեան ոչնչացման ակնյայտ դէպքերից էր դեռեւս 2020 թուականին Մեխակաւան բնակավայրում Զօրաւոր Սուրբ Աստուածածին, Մոխրենիս գիւղի Սուրբ Սարգիս, Կանաչ ժամի՝ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիների հիմնայատակ աւերումը: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին թիրախաւորուեց, դմբէթը աւերուեց... եւ այդ եկեղեցին շարունակում են վնասել. վերականգնման քօղի տակ արձանագրութիւններն են մաքրում, Քրիստոսի պատկերաքանդակը, խաչանշանները ոչնչացնում: Այս ամէնն Ատրպեյճանի վարած քաղաքականութեան խօսուելի կայութիւններ են:

2023 թուականին Ատրպեյճանը 1838 թուականին կառուցուած Շուշիի Մեղրեցոց Ս. Աստուածածին եկեղեցու պատմական շերտերն աւերակի վերածեց, հեռացրեց Վանքասարի 7-րդ դարի եկեղեցու խաչը, տապալեց Ստեփանակերտի տաճարի խաչը, շինարարական միջամտութիւնների արդիւնքում քերեց Ծարի Սուրբ Սարգիս եւ Սուրբ Գրիգոր



միջնադարեան եկեղեցիների եզակի արձանագրութիւնները, խաչքանդակները...

Եկեղեցիներից գատ՝ Ատրպեյճանի հայատեաց քաղաքականութեան թիրախներից են խաչքարերը, որոնք շարունակաբար ոչնչացւում են: Խաչքարը հայ ինքնութեան ամենաբնութագրական եւ ինքնատիպ խորհրդանշաններից է: Ատրպեյճանի համակարգուած արշաւն այս ուղղութեամբ յատկապէս ընդգծւում է մի քանի նշանակալից խաչքարերի ոչնչացմամբ: Դրանց թւում են դեռեւս 2020 թուականին ոչնչացուած Հաղրութի շրջանի Առաքել գիւղի, Հաղրութ քաղաքի ազատամարտիկների յուշահամալիրի խաչքարերի, Բերձորի պատմական գերեզմանոցի 14-րդ դարի եզակի խաչքարի, 15-16-րդ դարերով թուագրուող մի շարք խաչքարերի ոչնչացման արձանագրումով: 2022 թուականին աւերուել են Մատաղիսում գտնուող «Ղարաբաղեան պատերազմի վետերանների միութեան» մատուռն ու շրջակայքում գտնուող խաչքարերը, ոչնչացուել Շուշիի հայ-յունական հին գերեզմանոցի 12-13-րդ դարերի եզակի խաչքարերը:

Աւերուել են նաեւ Հաղրութի շրջանի Ուխտաձորի, Որոտան քաղաքի Արցախեան ազատամարտին նուիրուած խաչքարերը: Կաւաքավանք եկեղեցու տարածքից անհետացել է դեռեւս 1995 թուականին տեղադրուած խաչքարը: 2024 թուականի Յունուարի 7-ին պարզ դարձաւ, որ Մարտակերտի Դանիէլ Վարուժան փողոցում ոչնչացուել է 2021 թուականի Հոկտեմբերին արցախեան ազատամարտի

Միս էջը կը հովանաւորեն Կրօնքրիստոս ԹԲԻ եւ Հարազ ՄարազՏեան



WELCOME TO TOYOTA GABRIEL



Tania Bewadekian

General Manager
Toyota St-Laurent
tbewadekian@gabriel.ca

Kevork Jamgosian

Sales Manager
Toyota Centre-Ville
kjamgosian@gabriel.ca

**GABRIEL
ST-LAURENT**



3333, chemin Côte-de-Liesse
Saint-Laurent, QC H4N 3C2
514 748-7777
toyotagabrielstlaurent.com

**GABRIEL
CENTRE-VILLE**



1945, rue Sainte-Catherine O
Montréal, QC H3G 2S2
514 937-7777
toyotagabrielcentreville.com

հերոսներին յիշատակին նուիրուած յուշարձան-խաչքարը՝ Քաջաթաղի Աղանուս գիւղի աղբււր-յուշարձանին կից երկու խաչքարերի հետ միասին:

Խաչքարերի ոչնչացումը արցախահայութեան մշակոյթի իրաւունքի բազմակողմանի ոտնահարում է: Խաչքարերի համակարգուած ոչնչացման՝ Ատրպէյճանի քաղաքականութիւնն ունի խորքային արմատներ: 1998-2006 թուականին «խաղաղութեան պայմաններում» Ատրպէյճանական բանակը ծանր շինարարական տեխնիկայով քանդել եւ հողին է հաւասարեցրել հազարաւոր փորագիր խաչքարեր եւ գերեզմանաքարեր՝ գերեզմանոցի բացառիկ պատմամշակութային նմոշներից «ազատուած» տարածքը վերածելով հրաձգարանի:

Համլէտ Պետրոսեանն իր «Ջուղայի խաչքարերի պատկերագրութիւնը» յօդուածում նշում է. «17-րդ դարում Ջուղայում մօտ 10 հազար խաչքար կար: 20-րդ դարի վերջին մնացել էր մօտ 3 հազարը: 2002 թուականի տարեվերջին Ատրպէյճանի կառավարութեան կազմակերպուած բարբարոսութեան հետեւանքով վերացուեցին Ջուղայի վերջին խաչքարերը»:

Յատկանշական է, որ «Հայկական խաչքարերի արուեստը. խաչքարերի սիմպոլիզմն ու վարպետութիւնը» 2010 թուականից ընդգրկուել է ԵՄԻՆԵՍՔՕ-ի «Ոչ նկւթական մշակութային ժառանգութեան ցանկում»՝ ընդգծելով վերջինիս համընդհանուր մշակութային արժէքի կարգավիճակը: Ուստի, այս արժէքների ոչնչացումը ծանր հարուած է մարդկութեան ընդհանուր ժառանգութեանը, համամարդկային արժէքներին: Սա ողջ մարդկութեան դէմ ուղղուած ծանր յանցագործութիւն է:

Աւերածութիւնների այս շղթայի ակնառու օրինակներից են նաեւ Ասկերանի շրջանի Մատաթաշէն գիւղի դպրոցին կից 1904 թուականին կառուցուած Ս. Աստուածածին եկեղեցու կողքին գտնուող՝ Արցախեան ազատամարտի զոհերին նուիրուած յուշարձանը: Հաղրութի Ազոխ գիւղում աւերուել են երեք առանձին յուշարձաններ՝ նուիրուած Հայրենական մեծ պատերազմի, Արցախեան առաջին պատերազմի եւ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Սրբապղծուել են Ջարդանաշէն եւ Աւետարանոց, աւերուել Թալիշ, Քարինտակ եւ Մոխրենես գիւղերի՝ Արցախեան ազատամարտին նուիրուած յուշակոթողները եւ բազմաթիւ այլ յուշակոթողներ:

Վանդալիզմի եւ ոչնչացման է ենթարկուել նաեւ Հայաստանի եւ Արցախի ազգային հերոս, սպարապետ Վազգէն Սարգսեանի արձանը: Ստեփանակերտում ոչնչացուել է

Ալեքսանդր Միասնիկեանի արձանը, Արցախի հերոս Աշոտ Ղուլեանի յուշաքարը, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան հասարակական-քաղաքական գործիչ Ստեփան Շահումեանի պրոնգաձոյլ արձանը, Անատոլի Զինեւիչի կիսանդրին, Ստեփանակերտի վերին զբօսայգում գտնուող Արծուի յուշարձանը, Հայ-Ֆրանսական պուրակում գտնուող Շառլ Ազնաւուրի արձանը:

Պատերազմից յետոյ, Ատրպէյճանի թիրախում յայտնուեցին Արցախի պատմական գերեզմանոցները՝ խոշորամասշտապ ճանապարհաշինական աշխատանքների քօղիներքոյ: Ծանապարհների մօտ գտնուող Շուշիի, Ասկերանի շրջանի Շոշ համայնքի Սղնախի 18-րդ դարի հայկական պատմական գերեզմանոցները հիմնայատակ աւերուել են: Նման ճակատագրի է արժանացել Հաղրութի եղբայրական գերեզմանոցը, Ստեփանակերտի գինուորական պանթէոնը: Աւերուել են Տող գիւղի Արցախեան ազատամարտի ակաւոր գործիչների գերեզմանները:

2023 թուականի Մայիսին Ատրպէյճանի կողմից վնասուել են նաեւ Բերփերի եւ Հաղրութի պատմական գերեզմանոցները, որին յաջորդեց արդէն Նոյեմբերին Շուշիի գերեզմանատների աւերումը:

Գերեզմանոցները ոչ միայն նախնիներին յիշելու եւ յարգելու ֆիզիքական տարածքներ էին, այլեւ համայնքի շարունակականութեան ու պատկանելութեան կոլեկտիւ յուշարձաններ: Դրանք պատմական արձանագրութիւնների (անուններ, տարեթուեր, իրադարձութիւններ) մատեաններ էին, որոնց ոչնչացումը յանգեցնում է եզակի տեղեկատուութեան, ընդհանուր յիշողութիւնների կորստի:

Պատմական ժառանգութեան համատարած այսօրինակ ոչնչացումները ազատ ճանապարհ է բացում դէպի պատմական զեղծարարութիւններ ու իւրացում:

Իւրացման քաղաքականութեան վերջնանպատակը տարածքային նուաճումները լեգիտիմացնելն էր, միֆստեղծելը, ըստ որի՝ տուեալ տարածաշրջանում ատրպէյճանցիները կամ նրանց յօրինած «նախնիները» ապրել են Արցախում դարեր շարունակ: Այս քաղաքականութեամբ Ատրպէյճանի կողմից կեղծուած է ժառանգութեան իրական պատմութիւնը, իսկութիւնը:

Հայկական մշակութային խորհրդանիշների եւ պատմութեան իւրացման այս գործընթացները ներառում են հայկական եկեղեցիների աղուանացումը՝ հայկականութեան ժխտումը, Արցախի ողջ տարածքի քաղաքների, գիւղերի, փողոցների անուանափոխումը, հայկական բնակավայրերի իսլամացումը, թիւրքացումը, ռուսականացումը,

«17-րդ դարում Ջուղայում մօտ 10 հազար խաչքար կար: 20-րդ դարի վերջին մնացել էր մօտ 3 հազարը: 2002 թուականի տարեվերջին Ատրպէյճանի կառավարութեան կազմակերպուած բարբարոսութեան հետեւանքով վերացուեցին Ջուղայի վերջին խաչքարերը» Համլէտ Պետրոսեան

Այս էջը կը հոյսմաստորակու Ս. եւ Ս. Գէորգ եւ Թափն Գաբարոնցեան



Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արեւելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մէնէիշ, պանիրով պէօրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոթ, չի բօֆթ, լման հաւու խորոված, սուճուխ եւ այլ տեսակի աղանդերներ:



ՀԱՍՅԷ՝
1848 Lawrence Avenue East
Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝
(416) 750-7404 կամ (416) 750-7400



**NEW
LOCATION
NOW
OPEN**

Մեր յաճախորդներուն կը յայտնենք, որ մեր նոր մասնաճիւղը կրնաք այցելել հետեւեալ հասցեով՝

Ghadir Meat & Restaurant
769 Southdale Road East
London, Ontario N6E 3B9

Tel: 519-668-1800
519-204-2525

եկեղեցիների կեղծ վերականգնումը, ծիսակարգի խաթարումը եւ այլն:

Պատահական չէր, որ շուրջ 120 հազար արցախա-հայերի բռնի տեղահանումից ընդամենը մի քանի օր անց, Ատրպեյճանն արդէն սկսեց հերքել Արցախի քարիտո-նէական ամենակարեւոր վանական համալիրների հայկա-կանութիւնը՝ դրանք հռչակելով ալպանական: Վերջերս Ատրպեյճանում Կովկասի պատմութեան կեդրոնի տնօրէն Ռիզովան Ղուսոյնովը տեսանիւթեր հրատարակեց Գանձա-սարի, Դադիվանքի եւ Ամարասի վանական համալիրներին՝ նշելով, հայերն, իբր, փոխել են այդ վանքերի պատմական տեսքը, հայացրել դրանք, վերափոխել, կեղծել արձանագ-րութիւնները:

Այս եւ նմանատիպ այլ յայտարարութիւնները բացի պետական քաղաքականութիւնը առաջ տանելուց՝ նաեւ էթնոմշակութային խտրականութեան հիմքով արցախահա-յերի ինքնութեան ջնջման ու հայկականութեան հետքն ի սպառ վերացնելու՝ Ատրպեյճանի հարիւրամեայ ծրագիրն աւարտին հասցնելու գերնպատակ է:

Ատրպեյճանի իրականացրած «վերականգնման» պա-րագայում այդ յուշարձանները կորցնելու են իրենց պատ-մական, մշակութային ինքնութիւնը, ջնջուելու է դրանց իսկութիւնը: 2024 թուականի Հոկտեմբերի 7-ից ատրպեյ-ճանական լրատուամիջոցներով եւ սոցիալական ցանցերով տարածուեցին տեսանիւթեր՝ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու «վերականգնում» նոր տեսքով, որոնք փաստում են, որ 19-րդ դարի եկեղեցու գմբէթն այլափոխուած է. հայկական եկեղեցին շինարարական անթոյլատրելի միջամտութեամբ եւ աւերումներով դարձել է այլ կառոյց, ընդ որում, ատրպեյճանցիների պնդմամբ՝ այն ռուսական եկեղեցի է:

Հայկական ժառանգութիւնը աղուանական եւ իսլա-մական հռչակելուն գուգահեռ՝ Ատրպեյճանի իւրացման քաղաքականութիւնը ներառում է նաեւ հայկական եկեղե-ցիները ռուս ուղղափառ հռչակելու կեղծիքը:

Ջարդուփշուր է արուել նաեւ Քարինտակի Սուրբ Աստուածածին եկեղեցու՝ խորանի սուրբ սեղանը եւ այն մահմետական աղօթքի վայր դարձուել: Իսլամական աղօթ-քը՝ նամազը, կատարելով քրիստոնէական եկեղեցու կամ սրբազան տարածքում ոտնահարում է արցախահայե-րի կրօնական իրաւունքները՝ համարուելով մշակութային անզգայունութեան դրսեւորում, անյարգալից վերաբեր-մունք, աւանդոյթների ու սովորոյթների մերժում, քրիստո-նէական եկեղեցու պատմական նշանակութեան անարգում, սրբազան տարածքի եւ քրիստոնէական համայնքի հոգեւոր փորձառութեան խարխում է:

Ատրպեյճանի այս քաղաքականութիւնը ոչ միայն ժառանգութեան ոչնչացման անպատեղիութեան հետե-ւանք է, այլեւ նոր ինքնութեան ստեղծում՝ հայկականի ժխտման ճանապարհով:

Համաձայն «Ձինուած հակամարտութիւնների ժա-մանակ մշակութային արժէքների պաշտպանութեան մա-սին» Հաագայի 1954 թուականի համաձայնագրի լրացու-ցիչ՝ 1999 թուականին ընդունուած երկրորդ արձանագրու-թեան սկզբունքների՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական ցանկում ընդգրկուած արժէքները՝ ներառեալ խաչքարա-յին ողջ մշակոյթն, ունեն ուժեղացուած պաշտպանութիւն:

Բացի այդ՝ 1954 թուականին Հաագայի համաձայնագրի 4-րդ յօդուածը պատերազմող կողմերին պարտաւորեց-նում է յարգել ինչպէս իրենց, այնպէս էլ միւս կողմի տա-րածքում գտնուող մշակութային արժէքները՝ արգելելով այդ արժէքների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինուած ընդհարման դէպքում կարող են յանգեցնել դրանց ոչնչացմանը կամ վնասուելուն՝ ձեռնպահ մնալով դրանց դէմ ուղղուած թշնամական ցանկացած գործողու-թիւնից:

Հաագայի 1954 թուականի համաձայնագրին կից՝ նոյն տարում ընդունուած առաջին արձանագրութեան դրոյթ-ների համաձայն՝ գրաւեալ տարածքներում պետութիւնը պարտաւոր է արգելել, կանխել եւ խափանել, եթէ անհրա-ժեշտ է, մշակութային արժէքների գողութեան, կողոպուտի կամ ապօրինի իւրացման նաեւ դրանց նկատմամբ վան-դալիստական ցանկացած գործողութիւն: Հաագայի 1999 թուականի՝ երկրորդ արձանագրութիւնը վերահաստատում է այս պահանջը եւ նման արարքը 15-րդ յօդուածով որա-կում որպէս միջազգային յանցագործութիւն:

Ատրպեյճանի կողմից ոչնչացուած են 1988-1994 թուականների Արցախեան ազատագրական պայքարի ու յաղթանակը, 1915 թուականի Հայոց Յեղասպանու-թեան զոհերի յիշատակը յաւերժացնող յուշարձանները, որը արցախահայութեան մշակոյթի իրաւունքի խախտում է: Այս գործընթացը ջնջում է հաւաքական յիշողութեան տարրերը, խաթարում պատմական կարեւոր իրադարձու-թիւնները յարգելու եւ յիշելու համայնքի կարողութիւնը, խոչընդոտում հերոսապատմանների փոխանցումը գալիք սերունդներին, նուազեցնում հպարտութեան եւ միասնու-թեան զգացումը:

- Արդեօ՞՞ք միջազգային հանրութիւնը եւ մշակու-թային ժառանգութեան պահպանութեամբ զբաղուող կա-ռոյցները, գիտական հաստատութիւնները համարժէ՞ք գնա-հատական են տալիս Ատրպեյճանի կատարած վանդալիզ-մին կամ ջանո՞ւմ են արդեօ՞ք կանխել այդ վանդալիզմը՝ նկշման միջոցներ բանեցնելով:

- 2020 թուականի Սեպտեմբերի 27-ից Նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատուածում միջազգային հանրութիւնը համապատասխան գնահատական չի տուել Ատրպեյճա-նի յստակ ընդգծուած մշակութասպան քաղաքականու-թեան դրսեւորումներին եւ բաւարարուել է երկու կողմերին ուղղուած զսպուածութեան կոչերով: Սակայն պատերազ-մից յետոյ միջազգային կլոպալ անկայունութեան պայ-մաններում Եւրոպայի խորհրդարանի մի շարք բանաձեւե-րով եւ ՄԱԿ-ի Հաագայի արդարադատութեան միջազգա-յին դատարանի որոշումներով ուրուագծուեց Ատրպեյճանի գործողութիւնների դատապարտման եւ դրանց համապա-տասխան գնահատականներ տալու նոր հեռանկար:

Պատերազմից գրեթէ մէկ տարի անց միջազգային հանրութիւնը սկսեց պատմութեան մէջ եզակի ազդեկա-տութեամբ արձագանգել Լեռնային Ղարաբաղի եւ տա-րածաշրջանի մշակութային արժէքների ոչնչացման ատր-պեյճանական գործողութիւններին: Այս ընթացքում փորձ արուեց 44-օրեայ պատերազմի ժամանակ մշակութային արժէքների ոչնչացումը կապել Ատրպեյճանի կողմից Նա-խիջեւանում իրականացուած վանդալիզմի եւ արդէն 20-

Միս էջը կը հովամաւորեն Միքոմ եւ Ատրա Մայիսաւաւան

ՀՕՄ-ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Եւ իր 10 մասնաճիւղերը կը շնորհաւորեն
Նոր Տարին եւ Ա.Ծնունդը
իրենց բարերարներուն, նուիրատուներուն,
բարեկամներուն եւ անդամներուն
website www.ars-canada.ca
e-mail ars-canada@bellnet.ca



«ԱՐԱՉ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՎԱՆԳՈՒՎԸՐ

«ՌՈՒԲԻՆԱ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԹՈՐՈՆԹՕ

«ՌՈՒԲԻՆԱ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՈՒԻՆԾԸՐ

«ԱՐԱԳԱՍՏ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՄԻՍԻՍՈԿԱ

«ՍԵՒԱՆ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՕԹԹԱՈՒՎ

«ՍՕՍԷ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՄՈՆԹՐԵԱԼ

«ԱՐԵՒ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՀԱՄԻԼԹԸՆ

«ԱՐԱՉ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՍԵՆԹ ԳԱԹՐԻՆՉ

«ՇՈՒՇԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԼԱԲԱԼ

«ՄԵՂՐԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԳԷՄՊՐԻԾ

րդ դարասկզբին ձեւաւորուած քաղաքականութեան հետ՝ առաջին անգամ հայատեացութիւնը համարելով 100-ամեայ պետական քաղաքականութիւն:

Միջազգային դերակատարները Ատրպէյճանի գործողութիւնները բնութագրեցին որպէս ցեղասպանութեան շարունակութիւն եւ էթնիկ զտում: Եւրոպական խորհրդարանը, ձայների 607 կողմ, 27 դէմ եւ 54 ձեռնպահ յարաբերակցութեամբ 2021 թուականին ընդունեց հայ ռազմագերիների մասին բանաձեւ (N 2693), որի 16-րդ կէտով խստօրէն դատապարտուեց հայկական ժառանգութեան ոչնչացման ցանկացած գործողութիւն եւ կոչ արուեց Ատրպէյճանին վերականգնել վնասուած յուշարձանները:

2021 թուականի Յունիսի 27-28-ը Շուէյցարիայի կողմից Քրիստիան Լեւրանտի նախագահութեամբ Ֆրանկֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի կրթութեան, հաղորդակցութեան եւ մշակութային հարցերի յանձնաժողովը Վալոնի Պրուքսէլի Ֆետերատիւ խորհրդարանի անունից Պրուքսէլում ընդունել է հռչակագիր «Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութեան պաշտպանութեան մասին»:

2021 թուականի Յունիսի 2-ին Պրուքսէլում աշխարհի շուրջ 90 խորհրդարաններ եւ միջխորհրդարանական կազմակերպութիւններ միաւորող Ֆրանկֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի կրթութեան, հաղորդակցութեան եւ մշակութային հարցերի կոմիտէն հանդէս է եկել ժառանգութիւնը պաշտպանելու յանձնառութեամբ:

2021 թուականի Սեպտեմբերի 27-ին Սթրասպուրկում ընդունուեց Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հումանիտար հետեւանքների վերաբերեալ ԵՆՆՎ բանաձեւը (N 2391), որով դատապարտուեց ոչ միայն 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ Ատրպէյճանի կողմից իրականացուող մշակութային վանդալիզմի քաղաքականութիւնը, այլեւ առհասարակ վերջին 30 տարուայ ընթացքում (սկզբնապէս՝ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնում) եկեղեցիների եւ գերեզմանատների աւերումը կամ վնասումը: Առաջին անգամ խորհրդարանական վեհաժողովն իր անհանգստութիւնների շրջանակն ընդլայնեց հայկական ժառանգութիւնը որպէս «կովկասեան-աղուանական» ժառանգութիւն ներկայացնելու ատրպէյճանական յորինուածքի մասին կասկածով՝ յորդորելով ԵՈՒՆԵՍԿՕ-ին ուսումնասիրել ժառանգութեան օբեկտիւ պատմութիւնը:

ԵՆՆՎ յիշեալ բանաձեւին յաջորդեց ՄԱԿ-ի Հաագայի (Նիդեռլանդներ) արդարադատութեան միջազգային դատարանի՝ ընդդէմ Ատրպէյճանի Հայաստանի հայցի հիման վրայ 2021 թուականի Դեկտեմբերի 7-ին կայացրած որոշումը ՄԱԿ-ի 1965 թուականին ընդունած «Ռասայական խտրականութեան բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի խախտումների վերաբերեալ՝ ժամանակաւոր միջոցների կիրառման միջնորդութեամբ: Դատարանը, քննելով Հայաստանի հայցը, յուշարձանների ոչնչացման փաստական տուեալներն ընդունել է որպէս ռասայական խտրականութեան ապացոյցներ: Համաձայն միջանկեալ միջոցների կիրառման որոշման՝ Ատրպէյճանը պէտք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հայ ազգային կամ էթնիկ ծագում ունեցող անձանց դէմ ռասայական ատելութեան եւ խտրականութեան հրահրումն

ու խթանումը, ինչպէս նաեւ պարտաւորում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու եւ պատժելու վանդալիզմի ու պղծման գործողութիւնները հայկական մշակութային ժառանգութեան դէմ՝ ներառելով, բայց չսահմանափակուելով եկեղեցիներով եւ պաշտամունքի այլ վայրերով:

Սա միջազգային իրականութեան եզակի նախադէպ էր, քանզի դատարանը հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացումը չի դիտարկում որպէս առանձին գործողութիւններ, այլ դա համարում հայատեացութեան համակարգուած, պետական մակարդակով ատրպէյճանական իշխանութիւնների կողմից խրախուսուող քաղաքականութիւն, որը ներառում է նաեւ անմարդկային վերաբերմունքը, բռնութեան հերոսացումը եւ տարածքային պահանջատիրութիւնը Հայաստանի դէմ:

Միջազգային արձագանգի առումով յատկապէս կարեւոր է նշել, որ Ցեղասպանութեան կանխարգելման Լեմկինի ինստիտուտը ցեղասպանութեան կարմիր դրօշով հինգ անգամ ահազանգել է միջազգային կառոյցներին եւ պետական մարմիններին՝ նշելով, որ Ատրպէյճանը շարունակում է պետական մակարդակով քարոզել ատելութեան խօսք, կատարել վայրագութիւններ՝ հայկական ինքնութեան դէմ, որոնք, որդեգրուած լինելով 1915 թուականից իբրեւ թուրք-ատրպէյճանական ընդհանուր քաղաքականութեան բաղկացուցիչ մասեր, որակում են ցեղասպանական ակտ:

Եւ սա միջազգային արձագանգի միայն մի մասն է: Դրանք քիչ չեն:

Իսկ 2023 թուականի Արցախի բռնի տեղահանութիւնից յետոյ, երբ 120 հազար արցախահայեր գրկուեցին իրենց հայրենիքից, եւ մշակութային արժէքների հետ հաղորդակցման հնարաւորութիւնից, միջազգային կազմակերպութիւնները կրկին բաւարարուեցին չէզոք յայտարարութիւններով ու բռնի տեղահանուածների իրաւունքների պաշտպանութեան կոչերով:

Ատրպէյճանի կողմից ոչնչացում են 1988-1994 թուականների Արցախեան ազատագրական պայքարի ու յաղթանակի, 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակը յաւերժացնող յուշարձանները, որը արցախահայութեան մշակութային իրաւունքի խախտում է: Այս գործընթացը ջնջում է հուաքական յիշողութեան տարրերը, խաթարում պատմական կարեւոր իրադարձութիւնները յարգելու եւ յիշելու համայնքի կարողութիւնը, խոչընդոտում հերոսապատումների փոխանցումը գալիք սերունդներին, նուազեցնում հպարտութեան եւ միասնութեան զգացումը:

Այս էջը կը հովանաւորեն Ս. Եւ Ս. Գրիգոր Եւ Զրիարիան Միջուստան

granite Prestige[®]

COMPTOIRS DE CUISINES ET SALLES DE BAIN
KITCHEN & BATHROOM COUNTERS



Spécialiste Comptoirs
Counter Specialists
Granite ~ Quartz
Marble ~ Marbre

Service
Clé en main



Prise de mesures laser
Fabrication
Livraison et Installation
Laser Templating
Manufacturing
Delivery and Installation

GRATUIT
FREE*
Évier de cuisine / Kitchen Sink



Achetez au Prix du Fabricant!
Buy direct from the Manufacturer!

514.331.8337

www.graniteprestige.com

7111 ROUTE TRANSCANADIENNE
VILLE ST-LAURENT, QC H4T 1A2

VOISIN DE RONA et GUZZO • NEXT TO RONA HARDWARE & GUZZO

ESTIMATION
GRATUITE
FREE ESTIMATE

Մեծ հաճությո՞վ կը սպասարկենք Մե՞ծն Մոնթրեալի Նայ գաղութին

Այդ նոյն ընթացքում Ատրպեյձանը, որն ամենաշատն էր խախտել ԵՄԻՆԵՍՔՕ-ի կոնվենցիաներն ու ժառանգութեան պահպանութեան սկզբունքները, դարձաւ փոխնախագահող երկիր: Տարբեր եկեղեցիների ու գերեզմանոցների հիմնայատակ աւերումների հետ կապուած միջազգային հանրութիւնը լուռ մնաց՝ բացառութեամբ մի քանի ընդհանրական ձեւակերպումների, որոնցում Արցախի մշակութային արժէքների պաշտպանութեան խնդիրը հիմնականում աղճատուած էր ներկայացուած:

Այժմ կոնկրետ քայլերի բացակայութեան պատճառով եզակի արժէքների կորուստը շարունակուած է, ժառանգութեան միջազգային փաստագրումն ու ԵՄԻՆԵՍՔՕ-ի առաքելութեան ուղարկումը մինչ օրս չեն իրականացուել, ժառանգութեան կորուստը չի դադարել, Ատրպեյձանը դեռեւս չի դատապարտուել:

Կարծում եմ՝ միջազգային հանրութեան արձագանգը անհամաչափ է: Արձագանգելուց զատ՝ պէտք է նաեւ զսպել Ատրպեյձանին:

- Արցախում քանի՞ պատմամշակութային արժէք ունենք: Արդեօ՞ք կան արդէն վիճակագրական տուեալներ, թէ հայաթափումից յետոյ քանի յուշարձան է վանդալիզմի ենթարկուել՝ քանդուել, աւերուել կամ լրիւ վերացուել:

- Արցախում գրանցուած մօտ 4 հազար պատմամշակութային յուշարձան կայ, այդ թւում՝ ամրոցներ, եկեղեցիներ, խաչքարեր, դամբանադաշտեր, յուշարձաններ... Բայց գրանցուած, ցուցակագրուած յուշարձաններից զատ՝ կան նաեւ չցուցակագրուածներ, այնպէս որ, պատմամշակութային յուշարձանների թիւը հասնում է 5 հազարի, այսինքն՝ մօտ հազարը ցուցակագրուած չէ: Եւ սա միայն նիւթական ժառանգութիւնն է: Պատմամշակութային ժառանգութիւն ասելով՝ մենք նկատի ունենք նաեւ ոչ նիւթականը՝ արհեստները, արուեստները, հմտութիւնները, ծէսերը, որոնք, կապուած լինելով արցախահայերի հետ, բռնի տեղահանութեան հետեւանքով ի սպառ ոչնչացման եզրին են: Ոչ նիւթական ժառանգութեան զարգացման ու փոխանցման համար անհրաժեշտ է համայնք, միջավայր: Իսկ այժմ համայնքը կազմաքանդուել է, եւ արցախահայերն իրենց բնական միջավայրում չեն այլեւս: Կազմաքանդուած է մշակութային համայնքը:

Արցախի հայաթափումից յետոյ այնտեղ գտնուող նիւթական մշակութային ժառանգութիւնը վանդալիզմի է ենթարկուել: Արդեօ՞ք Հայաստանի պատկան մարմինները ձեռնարկում են համապատասխան քայլեր, որպէսզի գոնէ միջազգային հանրութեան ճշման ներքոյ ատրպեյձանցիները դադարեն աւերել մեր պատմամշակութային ժառանգութիւնը:

- Այս փուլում ի՞նչ կարող են անել հայ անհատ մասնագէտները (մշակութաբանները, պատմաբանները, հնագէտները, ազգագրագէտները) մեր ձայնն աշխարհին, միջազգային հանրութեանը լսելի դարձնելու ուղղութեամբ, որպէսզի համապատասխան միջոցներ ձեռնարկուեն Արցախում մեր պատմամշակութային ժառանգութիւնը փրկելու համար:

- Անհատները արդար, օբիեկտիւ հետազոտութիւններ պէտք է կատարեն, համախմբուեն: Երբեմն հայ մասնա-

գէտները փորձում են միայնակ աշխատել, ոչ թէ օգնել ու խրախուսել միմեանց: Շատ կարեւոր է նաեւ, որ հետազոտողները համագործակցեն պետութեան հետ: Կարծում եմ՝ սա մեծ խնդիր է, որին ինքս բազմիցս բախուել եմ: Արցախի մշակութային ժառանգութեան խնդիրներով անհատներից զատ՝ զբաղւում են նաեւ մի շարք կազմակերպութիւններ՝ «Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկում»-ը (MONUMENT WATCH), որն անկախ ակադեմիական հարթակ է, որի կազմում աշխատում եմ նաեւ ես, «Բնօրրան պատմական յուշարձանների պահպանման հայկական ընկերութիւն» հասարակական կազմակերպութիւնը, «Ամբերդ» գիտահետազոտական կեդրոնը եւ այլ կառոյցներ: Հարկւոր է անդադար միասնաբար աշխատել:

- Այս ուղղութեամբ ի՞նչ քայլեր պիտի անի պետութիւնը: Արդեօ՞ք հնարաւոր է այս հարցը լուծել նաեւ իրաւական քննադատութեամբ:


- Այո՛, հնարաւոր է: Այդ գործիքներից է Միջազգային քրէական դատարանի Հռոմի ստատուտի վաւերացումը (Հայաստանն արն արդէն վաւերացրել է): Այն կարող է օգտակար լինել մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւնները քննելու կոնտեքստում: Արցախի հայաթափումը, մշակութային արժէքների ոչնչացումը, Ատրպեյձանի գործած պատերազմական յանցագործութիւնները կարող են որպէս մարդկութեան դէմ ծանր յանցագործութիւններ՝ քննուել միջազգային դատարաններում: Միւս կառոյցները Հաագայի արդարադատութեան դատարանը, Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը... կարեւոր է արցախահայերի խնդիրները մեկնաբանել մարդու իրաւունքների տեսանկիւնից, քանի որ բռնի տեղահանումը, ժառանգութեան ոչնչացումը ուղիղ կերպով խախտում են մարդու մշակութային իրաւունքը, իսկ դրանք համայնքի կեանքին մասնակցելու, մշակութային բարիքներից օգտուելու իրաւունքը եւ հնարավորութիւնն են:


- Պետք է արձանագրել, որ նիւթական ժառանգութեանը զուգընթաց՝ Ատրպեյձանը թիրախաւորում է նաեւ մեր ոչ նիւթական ժառանգութիւնը: Ատրպեյձանը ինչպէ՞ս է փորձում վերացնել նաեւ ոչ նիւթական ժառանգութիւնը:

- 2023 թուականին Ատրպեյձանի համակարգային հայատեացութեան ռազմավարութեան՝ պատերազմական յանցանքների, շրջափակման եւ ժառանգութեան ոչնչացումների արդիւնքում բռնի տեղահանուց շուրջ 120 հազար հայ: Պատերազմների ընթացքում նիւթականի վնասը շատ դէպքերում ակնյայտ եւ տեսանելի է, իսկ ոչ նիւթականն ընդհանրապէս անհետացման վտանգի առջեւ է յայտնուում, եւ հնարաւոր չէ այն գնահատել: Այս իմաստով կորուստն աւելի մեծ է՝ ինքնութեանական է, քանզի նաեւ շարունակականութեան անհնարինութեան վտանգ է առաջանում, որը չէր լինի, եթէ համայնքը շարունակէր իր բնականոն կենսագործունէութիւնը:

Արցախի ոչ նիւթական արժէքների կորուստը ներկայացնելու համար կարելի է դիտարկել մշակութային փառատօների, տօների, կենցաղավարման մշակոյթի եւ արհեստների կասեցման օրինակները: Փառատօները հարկադրաբար կասեցուել են: Դրանցից շատ յայտնի են Հադրութի շրջանի Տողի դինու փառատօնը, որն անցկացուած էր

Սիւսէր կը հովանաւորեն Ս. եւ Ս. Յովիկ եւ Դանէթ Թիւֆէլիճեանս եւ դարբնը



 ԽՕՄ-ի Մոնթրեալի
«Սօսե» մասնաճիւղի վարչութիւնը
կը շնորհաւորէ ձեր Նոր Տարին եւ
Սուրբ Ծնունդը, մաղթելով որ 2025-ի
բոլոր օրերը ըլլան բարեբեր, շէն
ու պայծառ, առողջութեամբ եւ
արեւշատութեամբ լի, երջանկութեամբ
եւ բերկրութեամբ առլցուն:



2014 թուականից սկսած ամէն տարի Սեպտեմբերին Տողի մելիքական ապարանքում: Ներկայացնում էր գինեգործութեան հնագոյն եւ ինքնատիպ ծիսակատարութիւնը՝ գինու ճգմում, արցախեան ականդական ուտեստների հիւրասիրութիւն (ժենգեալով հաց, լաւաշ, կուրկուտ), ազգագրական պարերի, երաժշտութեան ներկայացում:

Տողում էր գտնուում «Կատարոյ» գինու գործարանը եւ խաղողի այգին: Այժմ վերացման եզրին են յայտնուել այն փորձն ու գիտելիքը, որոնք բնորոշ էին հենց արցախեան գինեգործական մշակութային լանդշաֆտին եւ կեանք էին հաղորդում գինեգործական ոչ նիւթական պրակտիկային:

Արցախի Մարտակերտի շրջանի Հաթերք գիւղում 2018 թուականից սկսած անցկացուող ժենգեալով հացի փառատօնին մասնակցում էր մինչեւ 12 հազար այցելու: Փառատօնի ծրագրում ժենգեալով հացի պատրաստումն էր, համեսը, հիւրասիրութիւնը եւ վաճառք՝ գիւղատնտեսական այլ մթերքների հետ միասին: 2019 թուականի փառատօնը ընդգծուեց պատմական նշանակութեամբ. թիտուեց աշխարհում ամենամեծ ժենգեալով հացը՝ 3 մեթր երկարութեամբ 25 տեսակի կանաչիների կիրառմամբ:

Արցախեան ազգային եւ բնութեան ականդոյթները յատկապէս կարեւորուել են Հաղրութի շրջանի Դրախտիկ գիւղում, որտեղ սկսած 2014 թուականից կազմակերպւում էր թթուի փառատօնը: Մասնակցում էին շրջանի շուրջ 17 գիւղերի բնակիչներ՝ ցուցադրելով թթուների 60 եւ ավելի տեսակներ եւ ընդգծելով թթուի պատրաստման իւրայատուկ մշակոյթը:

2018 թուականից սկսած «Նարեկացի» արուեստի միութեան ջանքերով «Բրուտ արտ» խեցեգործութեան միջազգային միջոցառումներ էին անցկացւում: Իւրաքանչիւր միջոցառում Շուշիում հիւրընկալում էր շուրջ 10 արուեստագէտների, ովքեր իրենց տպաւորութիւնները կաւին էին յանձնում: Բռնի տեղահանութեամբ այս պրակտիկան եւս կասեցուեց:

Շուշիում 2011 թուականից սկսած նաեւ քանդակագործութեան միջազգային սիմպոզիումներ էին անցկացւում: Մէկ ամիս Շուշիում ապրելով՝ արուեստագէտները քաղաքից ստացած տպաւորութիւնները քարին էին յանձնում: Ստեղծուած շուրջ 88 քանդակները ցուցադրուած էին Շուշիի կերպարուեստի պետական թանգարանի բակում, որոնք Ատրպէյճանը ոչնչացրել է:

Այս փառատօնները համայնքային համերաշխութեան, ընդհանուր արժէքներ կիսելու եւ փոխանակելու հնարաւորութիւն էին՝ սերունդների միջեւ սերմանելով պատկանելութեան եւ նոյն ականդոյթներով ապրելու զգացում:

Արցախի տարբեր շրջաններում կարեւոր նշանակութեան ոչ նիւթական ժառանգութեան ընդգծուած համայնքային պրակտիկաներից էր թթի մշակութիւնը: Շատ ընտանիքներ իրենց բակում թթի ծառեր էին մշակում՝ տիրապետելով թթից ականդական ուտեստներ պատրաստելու մեծ հմտութիւնների: Թթից դոշաք էին պատրաստում, որը համայնքային ծիսակարգ էր: Տեղահանութիւնից յետոյ ռեսուրսների բացակայութեան պատճառով արցախեան դոշաքը չի պատրաստուում: Թթից նաեւ մուրաբաներ, չորամրգեր եւ բուժիչ թուրմեր էին պատրաստում:

Արցախեան բնական լանդշաֆտը առանցքային դեր

է կատարել թէյախմութեան մշակոյթում: Ընդունուած ականդոյթ էր տեղական ուրցով եւ արցախեան խոտաբոյսերով թէյախմութիւնը: Թէյախմութեան հանդէպ սէրն էլ ծնել էր խորհրդանշական՝ «սամովարի» (ինքնաեռ) մշակոյթը, որը գրեթէ բոլորն իրենց տներում ունէին: Թէյախմութիւնն ավելին էր, քան միայն թէյ խմելը: Այն սոցիալական փոխափոմաներին նպաստող պրակտիկա էր:

Այսօր շուրջ 120 հազար արցախահայ Ատրպէյճանի ռասսայական խտրական վերաբերմունքի պատճառով գրկուած է Արցախի մշակութային կեանքին մասնակցելու, ուխտատեղիներ, պատմամշակութային վայրեր այցելելու, հարազատների գերեզմանոցներում յարգանքի տուրք մատուցելու, եկեղեցիներում ծէսեր կատարելու եւ աղօթելու իրաւունքից:

Բռնի տեղահանութիւնը յանգեցրել է արհեստագործական պրակտիկաների կասեցմանը: Ուսումնասիրութիւնները փաստում են, որ դիցուք՝ Արցախի Հաղրութի շրջանում (յատկապէս Մեծ Թաղլարում) մինչ պատերազմն ապրում էին 19-րդ դարի արհեստները, այդ թւում դարբնագործութիւնը, տակառագործութիւնը, բրուտագործութիւնը, հանետագործութիւնը (թամբի պատրաստում, փալանչիութիւն) ատաղձագործութիւն, պայտառագործութիւնը, կլայեկզագործութիւն (արծնապատում, էմալապատում), գորգագործութիւնը, փայտագործութիւնը, հիւսնութիւնը, որի հումքը տեղական կաղնու փայտն էր: Տակառագործութիւնը զարգացած էր Տողում, որի հումքը Արցախի հաճարի փայտն էր: Իսկ Ասկերանում անգամ տակառագործութեան՝ միջազգային չափանիշներին համապատասխան գինեգործութեան եւ կոնեակագործութեան գործարան կար՝ «Վարանդա»: Արցախը հարուստ էր իր խոհանոցով, գորգագործական եւ կարպետագործական մշակոյթով, որի ականդական պրակտիկան մի կողմից կասեցուեց կրթական կեդրոնների, գորգերի գործման վայրերի բռնագրաւման արդիւնքում, իսկ միւս կողմից միջազգայնօրէն իւրացւում է Ատրպէյճանի կողմից:

2024 թուականի Յունիսին Ատրպէյճանը Արցախեան եզակի գորգերի կրկնօրինակների ցուցանմոյշներով միջազգային ցուցահանդէս բացեց Լատվիայում՝ ներկայացնելով հայկական 1680 թուականի Գուհար գործը, Ջրաբերդ տեսակի գորգերը, վիշապագորգերը եւ Արծուագորգերը որպէս ատրպէյճանական: Մեր արծուագորգի զարդանախշերով Ատրպէյճանը հրապարակ է կառուցում... Սրանք իւրացման վառ օրինակներ են: Նրանք տարածաշրջանում բնիկութեան փաստեր կեղծելու համար են վերցնում հայկական խորհրդանիշները, որովհետեւ դրանք այդ տարածաշրջանում ունեն պատմական արմատներ եւ ներկայութիւն, հետեւաբար, եթէ Ատրպէյճանը դրանք իրենը համարի, կը փորձի տարածաշրջանում հին ազգի կարգավիճակ ունենալ:

Արցախեան տօների հարկադիր կասեցում է տեղի ունեցել: Արցախցիների կեանքում մեծ տեղ են ունեցել ոչ միայն մեր ազգային տօները, այլեւ հենց Արցախին յատուկ տօները, օրինակ՝ Հաղրութին բնորոշ համայնքային ականդոյթ դարձած Խարոյկի օրը: Բոլոր համայնքների սարերի տակ հաղրութիւններն այդ օրը խարոյկ էին վառում, եւ մրցում, թէ ո՛ւմ խարոյկն է ավելի բարձր: Տօնից մէկ շաբաթ առաջ երեկոները ցախ ու անուաղուղի էին գլորում,

Սիւսէր կը հովանաւորեն Ա. Եւ Ա. Սիւսէր Եւ Սիւսա Սիւսիկեան



4170 boulevard St-Elzear Ouest
Laval, QC H7P 4J4

(450) 682-3383



Charisma
Agence immobilière

BUYING SELLING *a home?*

Տուն գնե՞լ թե ծախսել.



LET'S WORK TOGETHER!


Let me take part in making this experience unforgettable.

Եկեք միասին գործակցինք՝
Ձեր թողտուրեամբ, այս գեղեցիկ փորձառության
մասնակից կ'ուզեմ ըլլալ:


NELLY DALALIAN
REAL ESTATE BROKER

ՆԵԼԼԻ ԾԱԼԱԼԵԱՆ
ԱՆՆԱՐԺ ԳՈՅՔԵՐՈՒ ՄԻՋՆՈՐԴ

 (438) 399-1937
 nellydalalian@hotmail.fr



երգով, պարով տանում դէպի խարոյկի վառման տեղը: Տօնին վառուած խարոյկների շուրջ մեծ ու փոքր հաւաքուած էին, խարոյկի վրայից թռնում ու մինչ ուշ գիշեր մնում այնտեղ:

Յիշատակութեան է արժանի նաեւ Հազրութ քաղաքի տօնը՝ Օգոստոսի 15-ը, որը նուիրուած էր 1992 թուականի Օգոստոսի 15-ին հազրութեան թուրքերի դէմ ինքնապաշտպանական հերոսական պայքարին եւ յաղթանակին: Յատկանշական է, որ տօնի առանցքում մշակութային ժառանգութեան վայրեր այցելելն էր:

Այս օրինակներն ընդգծում են նիւթական եւ ոչ նիւթական արժէքների փոխկապակցուածութիւնը, որտեղ տօները կապուած են եկեղեցու հետ եկեղեցին՝ աղօթքի ու ծէսերի, ծէսը համայնքային աւանդական կենցաղի: Տեղի է ունեցել մշակութային պրակտիկաների՝ կրօնական ծէսերի, ուխտագնացութիւնների կասեցում: Այսպէս ոչ նիւթական ժառանգութեան փոխանցումը, ցաւօք, անհնար է դառնում:

- Ձեր հեղինակած՝ «Արցախի հայկական մշակութային ժառանգութիւնը? պաշտպանութեան մեխանիզմները ժառանգութեան պահպանութեան միջազգային համակարգում» աշխատութիւնը նախ լոյս էր տեսել անգլերէն, ապա նաեւ հայերէն: Այս աշխատութիւնը ո՞ր երկրներում են կարդացել, ուսումնասիրել: Ինչպիսի՞ արձագանգներ են եղել: (Խնդրում եմ նաեւ նշել, թէ երբ են լոյս տեսել աշխատութեան անգլերէն եւ հայերէն տարբերակները):

- Գիրքը լոյս է տեսել 2023 թուականի Հոկտեմբերին «Վէմ» համահայկական հանդէսում: 2024 թուականի Յունուարի 24-ին այն ներկայացուել է Եւրոպական խորհրդարանի կողմից եւրոպական խորհրդարանի պատգամաւորներին կողմից ուսումնասիրուող գրքերից: Նրանք ծանօթացել են Արցախի մշակութային ժառանգութեան ոչնչացման խնդրին: Սա նաեւ միջազգային դատարաններում Հայաստանի կողմից ներկայացուող հայցադիմումներին կից ներկայացուող նիւթ է եղել: Այս աշխատութիւնը կարդացել են Պրահայում, ԱՄՆ-ում, Չեխիայում, Լիբանանում: Աշխարհի շատ երկրների գրադարաններում գիրքն արդէն իր ուրոյն տեղն է գտել:

Մենագրութիւնը գրուել է 2020 թուականի 44-օրեայ պատերազմի ընթացքում Ատրպէյճանի կողմից Արցախի մշակութային արժէքների թիրախաւորման բազմաթիւ դէպքերից եւ պատերազմից յետոյ՝ Արցախի բռնադրուած տարածքներում մշակութային ժառանգութեան բացառիկ արժէքների շարունակական ոչնչացման սպառնալիքից ելնելով առաջարկելով ժառանգութեան միջազգային պաշտպանութեան հնարաւոր մեխանիզմներ: Մենագրութեան ստեղծմանը գաղափարից մինչ դրա կեանքի կոչումն աջակցել են ինչպէս նուիրեալ ու հայրենասէր անհատներ, այնպէս էլ Արցախի մշակութային ժառանգութեան պահպանութեամբ մտահոգ տեղական եւ միջազգային տարբեր կազմակերպութիւններ:

Արցախի մշակութային ժառանգութեան պաշտպանութեան մեխանիզմներին հանրահռչակման եւ միջազգային թիրախային լսարանին հասանելի դարձնելու համար մենագրութիւնը թարգմանուել է անգլերէն: Մենագրութեան մէջ քննուած են գինուած հակամարտութիւնների ժամանակ մշակութային արժէքների պաշտպանութեան միջազգային

2024 թուականի Յունիսին Ատրպէյճանը Արցախեան եզակի գորգերի կրկնօրինակների ցուցանմոյշներով միջազգային ցուցահանդէս բացեց Լատվիայում՝ ներկայացնելով հայկական 1680 թուականի Գուհար գործը, Ջրաբերդ տեսակի գորգերը, վիշապագորգերը եւ Արծուագորգերը որպէս ատրպէյճանական

համակարգը, Ատրպէյճանի կողմից 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ միջազգային սկզբունքների դիտանկիւնից Արցախի հայկական մշակութային ժառանգութեան անօրինական թիրախաւորման դէպքերը, դրա ոչնչացման եւ իւրացման առանձին մեխանիզմներ: Ներկայացուած են գինուած հակամարտութիւնների ժամանակ մշակութային արժէքների պաշտպանութեան միջազգային կանոնակարգերը, իրաւական եւ հումանիտար գործիքները (միջազգային կոնվենցիաներ, հռչակագրեր, բանաձեւեր, կանոնադրութիւններ, սովորութային նորմեր)՝ ի պաշտպանութիւն Ատրպէյճանի կողմից վանդալիզմի ենթարկուած Արցախի հայկական մշակութային ժառանգութեան:

Մենագրութիւնը նախատեսուած է մշակութային ժառանգութեան պահպանութեամբ զբաղուող մասնագէտների, պետական կառոյցների, գիտական ընկերութիւնների, ուսանողների եւ արցախահայութեան մշակութային ժառանգութեան պաշտպանութեամբ ու պահպանութեամբ մտահոգ ընթերցողների լայն շրջանակների համար:

Մենագրութիւնում ներկայացուել է միջազգային հանրութեան (ազգային, վերազգային եւ հասարակական կազմակերպութիւնների, ՄԱԿ-ի, ԵՈՒՆԵՍԿՕ-ի, ԵՆԽՎ-ի, Հաագայի դատարանի եւ այլն) արձագանգը Արցախի մշակութային ժառանգութեան ոչնչացման ատրպէյճանական քաղաքականութեանը թէ՛ պատերազմի 44 օրերի ընթացքում եւ թէ՛ դրանից յետոյ: Մենագրութիւնը եզրափակուած է պատերազմից յետոյ միջազգային հանրութեան արձագանգի դրական եւ համարժէք փոփոխութեան արձանագրմամբ: Քննուած են ԵՆԽՎ բանաձեւերը եւ Հաագայի արդարադատութեան միջազգային դատարանի անախադէպ որոշումները, որոնք որպէս եզակի նախադէպ կարող են բեկել պատմութեան ընթացքը՝ դառնալով Ատրպէյճանի մշակութապաշտպան գործողութիւնները դատապարտող եւ արգելող միջազգային իրական գործիք:

Յասմիկ Պալէեան

Միշտ էլք կը հովանաւորեն Ա. եւ Ա. Ասրգբու եւ Մամաւն Մայրափառն

CASSANDRA HEALTH CENTRE
I.D.A. PHARMACY
CASSANDRA CLINIC
 WALK-IN & FAMILY PRACTICE
 416-331-9111
 Dr. Marinosyan accepting new patients (416) 331-9111
Dr. Rupert Abdalian
Dr. Mari Marinosyan
Dr. Omayma Fouda
Dr. H. Kavazanjian
MEDICAL OFFICE FOR LEASE
416-449-2040

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շարքաւան յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճշման քննութիւն եւ հետետղականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցնելուն առաջելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղ:
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք թղթը ապահովագրական քննչութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք թիչկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

հասցէ՝ 2040 Victoria Park Ave.
 (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2
 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048

CASSANDRA I.D.A. PHARMACY

ՍԵՓԱԿԱՆՍԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ
 ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

**ARMENIAN MEDICAL CENTRE
 & PHARMACY**

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh



Walk-in Clinic onsite: (416) 331-9111



Depuis / Since

1 9 8 8



35 ans d'excellence!

CARROSSERIE
JACOB & JACOB
BODY SHOP

Cas d'Assurances

6280 St. Jacques, Montréal, Québec H4B 1T6
 Tél.: (514) 484-7945 • Fax: (514) 484-2487

jacobautobody@bellnet.ca
www.carrosseriejacobetjacob.ca

«Մենք իսկականից բռնեցինք գաղթի ճանապարհը: Մենք մեր սեփական աչքերով տեսանք էդ 1915 թուականը»
արցախցի մամիկի վկայություն



Արցախ Հեռուստակայանի «Վերապրում» հաղորդաշարով արցախցի Ռայա Մուսայելեան, Ասկերան շրջանի Սարուշեն գիւղէն, կը պատմէ սարուշենցի տղամարդոց հերոսական դիմադրութեան, անտառային միակ կածանին մասին, ուրկէ գիւղէն դուրս եկան կանայք, ծերերն ու երեխաները:

Ռայա կը յայտնէ, թէ ինք բոշակառու ուսուցչուհի էր, եւ թէ լաւ ու ապահով կեանք մը ունէին, երգանքներ ու նպատակներ ունէին, ապա կ'աւելցնէ՝ եթէ Սեպտեմբեր 19-ն չըլլար, երբեք դուրս չէին գար Արցախէն:

Շրջափակման մասին անդրադառնալով Ռայա կը պատմէ, թէ ինչպէ՛ս արցախցին ցանց իր արտերը, բայց աշնան թոյլ չտուին որ հնձնէ... ան կ'աւելցնէ, թէ ինչպէ՛ս կարելի է, որ արցախցին հացի կարիք ունենայ. այդ ստեղծող, արարող, աշխատող արցախցին ինչպէ՛ս հացի կարիք ունենայ: Ապա կը շեշտէ, թէ երբ հաց չկար, թշնամիէն հաց եւ ալիւր բացարձակապէս չընդունեցին առնել:

Ռայա մեծ յուզումով կը պատմէ տեղահանութեան մասին ու կ'ըսէ, թէ իրենց վրայի շորերով դուրս եկան, երեխաներ, հաշմանդամներ ու ծերեր... ան իր արցունքը չի

կրնար գսպել, երբ կը յայտնէ, թէ իրենք իսկապէս բռնեցին գաղթի ճանապարհը՝ ըսելով. «Մենք մեր սեփական աչքերով տեսանք 1915 թուականը»: Ան կ'աւելցնէ, որ գիւղի տղաքը կոտուած են, գոհեր տուած ու ահագին վիրաւորներ ունեցած, որպէսզի թշնամիին ուշադրութիւնը իրենց վրայ կեդրոնացնելով՝ առիթ տան գիւղացիներուն անտառին մէջէն դուրս գալու գիւղէն:

Ան կը յայտնէ, թէ իրենց ամբողջ ունեցուածքը թողեցին գիւղ ու կ'ափսոսայ ըսելով. «Բա մեր գերեզմանները, մեր արիւնով շողախուած հողերը, մեր մանկութի՛ւնը, մեր յիշողութի՛ւնը, մեր պատանեկութի՛ւնը... ամէն ինչ թողեցինք, դատարկ ձեռով եկանք, ոչ միայն մենք, այլեւ ամբողջ սարուշենցիները...»:

Իսկ համայն աշխարհի անտարբերութեան մասին ան կ'ըսէ, թէ ցաօֆ սրտի՛ լուռ էին, չէին լսեր, խուլ էին, եւ թէ ոչ մէկը լսեց իրենց ձայնը, եւ թողեցին որ այդպէս բռնի կերպով տեղահանուին:

Ստորեւ վկայութիւնը ամբողջութեամբ.
Ռայա Մուսայելեան, Ասկերանի շրջան, գիւղ Սարու-

Սիւսէ Էջը կը հովանաւորեն Ս. Եւ Ս. Միսիկ Եւ Սիւսէի Մեղրուտան

LE MEILLEUR DES PRODUITS

D'ÉPICERIE MÉDITERRANÉENNE

EXCELLENT SERVICE À LA CLIENTÈLE
BON RAPPORT QUALITÉ-PRIX
BON EMPLACEMENT

VISITEZ MAINTENANT

@IMPORTATIONBAGHDI
1365 BD DU CURÉ-LABELLE, LAVAL, QC, CANADA



Murat Armutlu, CPA, CFE

Vahakn Kapriyel Arapyan, CPA

*"it's not what you earn,
it's what you keep that counts."*



- Financial Statement
- Management Consulting
- Government Subsidies
- Financial & Tax Consulting
- Bank Financing

Armutlu & Arapyan Inc.

6611 Boul. Thimens, St. Laurent, Qc, H4S 1W2

Tel: 514.855.0012 Fax: 514.855.0004

murat@armutlu.ca vka@arapyan.com



չէն, 69 տարեկան: Ծնուել էմ Մարտունու շրջանի Աշան գիւղում, բայց ամուսնացել էմ Սարուչէնում: Ես մանկավարժ եմ, 45 տարի դասաւանդել էմ Սարուչէնի Միջնակարգ դպրոցում, որպէս ուսուցիչ: Երեք երեխայ ունեմ, մեծ աղջիկս հիմա չկայ, հիմա մի տղայ, մի աղջիկ ունեմ: Տղասունի երեք երեխայ, երկու աղջիկ, մէկ տղայ, իսկ աղջիկս էլ մի երեխայ:

Լաւ էինք ապրում, ամուսինս գիւղում մեխանիզացիայի պրիկատորն էր, լաւ աշխատում էր, լաւ մեխանիզատոր էր, ամառուայ ընթացքում թէկուզ ինք մեխանիկատոր էր, բայց գոմպայն էր քշում, լաւ վարձատրուում էր, լաւ ապրում էինք, ես էլ աշխատավարձ էի ստանում, շատ լաւ, ապահով ապրում էինք: Երազանքներ, լաւ նպատակներ ունէինք: Եթէ Սեպտեմբերի 19-ը չլինէր, մենք դուրս չէինք գայ:

Սկզբում անցնում էր ուսուի տանկը, մի անգամ հաշուել էմ 60 հատ էր, գիւղի մէջով անցնում էին. երեխաներին չէինք թողնում բակերից հեռանան: Մեր գիւղի ներքեւի մասում աղբիւր կար, չէինք թողնում երեխաները գնան, որովհետեւ էր աղբիւրի մօտով էին անցնում, իրանք էնքան վստահ էին, կանգնում էին աղբիւրից շուր վերցնում:

Այ հպարտի պայմաններում մենք ապրում էինք: Տեսնում էինք ամէն օր էր Աւետարանոցից, Ակնաղբիւրից ինչպէս էին կրակում, մենք երեխաներին խաբում էինք, ասում էինք՝ Ձմեռ Պապին ա, Նոր Տարու հրավառութիւն են անում Շուշիում, որպէսզի չվախենան: Իրենք որ կրակում էին, ասում էինք Ձմեռ Պապին մօտիկանում է արգէն, որովհետեւ երեխաները վախում էին էր կրակոցներից: Բայց մենք տեսնում էինք, որ Ակնաղբիւրի էր վերեւի անտառներում ինչպէս էին ճանապարհ պատրաստում, ամբողջ ձմեռը աշխատում էին, ճանապարհ բացում, լոյսերը վառում էին, տեսնում էինք իրենց մեքենաները գալիս էին:

Ես ամէն առաւօտ դուրս եմ գալիս, նայում եմ, ասում եմ՝ տեսնեմ գիւղի տները հրդեհո՞ւմ են, թէ մնում ա, որ տեսնում եմ ծուխ չի բարձրանում, ուրախանում եմ, ասում եմ տէ լաւ ա: 2023-ին ցորենը ցանցիցինք, բայց հենց որ եկաւ հնձի ժամանակ՝ չթողեցին որ հնձենք:

Նոյնիսկ ուսուի տանկը եկաւ կանգնեց, դրօշը վրէն, բայց էլի անընդհատ կրակում էր, էր գոմպայնավարը միերկու պտոյտ էր անում, միանգամից դուրս չէր գալիս: Բայց արգէն որ հասաւ գոմպայնը, ապակիները շարդուեցին, տէ ստիպուած՝ ի՞նչ անենք, թողեցինք եկանք: Այդ էր պատճառը, որ մենք հացի կարիք ունէինք: Բայց ինչպէ՞ս կարող է արցախցին հացի կարիք ունենայ. էր ստեղծող, արարող, աշխատող արցախցին հացի կարիք ունենա՞յ: Ձէ-ին թողնել, որ մենք մեր արտերը հնձենք: Ամառը թողնիկներս վերցրել եմ, գնացել ենք Մոշ քաղել, բերել, քամպոթ ենք պատրաստել. ասում եմ ձմրանը էր կը լինի մեր շաքարաւազը: Հիւթ կը պատրաստենք, քաղցր կը խմենք, բայց ցաւօք սրտի մեր ձմեռը այդպէս էլ չեկաւ:

